

Հ Ե Յ Կ Ե Կ Ը Ն Խ Յ Հ Լ Ո Ի Ս Փ Ո Ջ Կ Ո Մ Ը Ց

Չ Ե Ռ Ն Ա Ր Կ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՀԱՄԱՐ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2-րդ շՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

572.21

2-46

ՅԵՐԵՎԱՆ

Լ Ո Ւ Ս Հ Ր Ա Ց

1940

0120-10

ՀՅԵԿԵԿՆ ԽՍՀ ԼՈՒՍՀՐԱՏ

372.21
2-46
ՎՊ.

ՉԵՌՆԱՐԿ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՀԱՄԱՐ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒՅՅՈՒՆ

2-րդ շՐԱՏԱՐԱԿՈՒՅՅՈՒՆ

3843
07

ԼՈՒՍՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1940

18 JUN 2013

50.839

Հ ր ա ս ս ն № 176

Հայկական ԽՍՀ Լուսավորության Ժողովրդական կոմիտեի
15 նոյեմբերի 1938 թ.

§ 1

Հաստատել «Մանկապարտեզի կանոնադրություն»-ը և «Ձեռնարկ մանկապարտեզի դաստիարակի համար» ծրագրա-մեթոդական ցուցումները, վոր ՌՆՖՍՀ Լուստողկոմատի համանուն գրքեց փոխադրել և ՀԽՍՀ Լուստողկոմատի նախադպրոցական բաժինը նախադպրոցական ակտիվի մասնակցութեամբ:

§ 2

Պարտադրել շրջանային (քաղաքային) ժողկրթութեան բաժիններին վարիչներին՝ ուժեղացնել իրենց վերահսկողութեանը մանկապարտեզների աշխատանքի նկատմամբ, կոնկրետ ոգնութեան ցույց տալով մանկապարտեզների վարիչներին ու դաստիարակներին նրանց պատվաւոր ու պատասխանատու աշխատանքում:

Հայկական ԽՍՀ Լուսավորութեան Ժողովրդական կոմիտեի
Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2498
40

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԵՐ

§ 1. Մանկապարտեզը 3—7 տարեկան յերեխաների հասարակական խորհրդային դաստիարակության պետական հիմնարկություն է, վորի նպատակն է՝ ապահովել յերեխաների բազմակողմանի զարգացումը և կոմունիզմի վորով դաստիարակությունը: Մանկապարտեզը միաժամանակ ոժանդակում է մայր-կանանց՝ մասնակցելու սնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Այն դեպքում, յերբ 7 տարեկան յերեխաներին հնարավոր չե տեղավորել դպրոցի նախնայտորտ տական դասարանը, նրանց համար մանկապարտեզում կարելի յե կազմակերպել առանձին խմբակ:

§ 2. Մանկապարտեզը, անկախ նրանից, թե վոր կազմակերպություն կամ հիմնարկության իրավասություն տակ է նա դտրնվում, իր աշխատանքը կատարում է ՀԽՍՀ Լուսավորություն ժողովրդական կոմիտարիատի կողմից հաստատված «Մանկապարտեզի կանոնադրություն» և ծրագրա-մեթոդական ցուցումների հիման վրա:

§ 3. Այս կանոնադրության § 1-ում նշված նպատակները կենսազործելու համար մանկապարտեզը.

ա) հոգ է տանում յերեխաների առողջության մասին և ապահովում է նրանց ֆիզիկական կանոնավոր զարգացումը՝ մանկապարտեզի վորջ շրջադրությունն ու ռեժիմը՝ նախադպրոցական յերեխայի առողջապահության և առողջության պահանջներին համապատասխան կազմակերպելու, բազմատեսակ և լավ սնունդ կազմակերպելու, ողջ, ջուրն ու արեն առավելազույն չափով և ճիշտ ոգտազործելու, համապատասխան խաղեր կազմակերպելու, ֆիզիկական վարժություններ տալու և յերեխաների մեջ առողջապահության տարրական կանոններն ինքնուրույն կերպով կատարելու ունակություն դաստիարակելու միջոցով:

բ) զբաղվի խաղերի ու սրբապմունքների, զեղարվեստական

խոսքի, յերաժշտության, յերգեցողության, դեպի բնությունը կատարվող երկուրտիաների, դրոսանքների, և շրջապատի կյանքին յերեխաներին ծանոթացնելու միջոցով կենսազործում է նախադպրոցական յերեխայի մտավոր զարգացման ու զեղարվեստական դաստիարակության խնդիրը: յերեխաների մեջ դաստիարակում է կազմակերպվածություն, կոլեկտիվում իրենց պահելու, միասին խաղալու ունակություն, հարգանք է դաստիարակում զեպի ծնողներն ու մեծերը, սովորեցնում է խնամքով վերաբերվել այն բոլոր իրերի նկատմամբ, վորոնցից ոգտվում է նախադպրոցական յերեխան, խնամել դրանք: տալիս է մատիտի, մկրատի, ներկերի, կապի, սոսինձի և այլ սրիտույքների հետ վարվելու յերեխաներին մատչելի տարրական ունակություններ ու հմտություններ, կազմակերպելով նկարչություն, ծելի զբաղմունքներ, զբաղմունքներ թղթի հետ և այլ նյութերով:

դ) յերեխաների ըմբռնողությունը մատչելի, վառ որինակներով նրանց մեջ դաստիարակում է սեր դեպի մեր սքանչելի սոցիալիստական հայրենիքը, դեպի մեր հիանալի խորհրդային ժողովուրդը, դեպի նրա առաջնորդները, հերոսները դեպի մեր քաջարի կարմիր բանակը, դեպի դործարանների ու սոցիալիստական դաշտերի ստախանովականները:

դ) իրադործում է յերեխաներին հակակոմունական և ինտերնացիոնալ վորով դաստիարակելու խնդիրները:

Մանկապարտեզի դաստիարակչական աշխատանքը նպատում է հետադալում յերեխայի հաջող ուսուցմանը դպրոցում:

§ 4. Մանկապարտեզը պետք է հանդիսանա նախադպրոցական հասակի յերեխաների ճիշտ դաստիարակության կենդանի որինակը և ողնի ծնողներին յերեխաների ընտանեկան դաստիարակությունը կազմակերպելու դործում:

§ 5. Մանկապարտեզում աշխատանքը տարվում է յերեխաների մայրենի լեզվով:

§ 6. Մանկապարտեզում յերեխաների դաստիարակության սրատվավոր ու պատասխանատու դործը կատարում է մանկապարտեզի դաստիարակը:

II. ՄԱՆԿԱՊԱՐՏԵՅՆԵՐ ԲԵՑԵԼՈՒ ԿԵՐԳԸ

§ 7. Մանկապարտեզները կազմակերպվում են ժողովրդական կրթության բաժինների, ֆարրիկա-դործարանային ձևնարկու-

թյունների, հիմնարկությունների, կոոպերատիվ ու կոլտնտեսա-
յին կազմակերպությունների կողմից:

§ 8. Մանկապարտեզներ բացելիս, տնտեսական բոլոր կազ-
մակերպություններն ու հիմնարկությունները պետք է խստորեն
պահպանեն (ՀԽՍՀ Լուսավորության ժողովրդական Կոմիսարիա-
տի և Առողջապահության ժողովրդական Կոմիսարիատի սահմա-
նած՝ մանկապարտեզների շինարարության և պահպանության
սանիտարական կանոնները, շենքերի ծավալը, կահավորության,
դիտողական պիտույքների, յերեխաների սննդի և բժշկական սպա-
սարկման վերաբերյալ նորմաները:

§ 9. Բոլոր մանկապարտեզները, անկախ նրանից, թե նրանք
ուժ իրավասության տակ են գտնվում, պարտադիր կերպով պետք
է դրանցիվ են համապատասխան շրջանային կամ քաղաքային ժո-
ղովրդական կրթության բաժնում՝ շրջանային միասնական հա-
մարակալման կարգով:

§ 10. Մասնավոր անձանց թույլ չի տրվում մանկապարտեզ
կազմակերպել:

III. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԻ ԿԱՌՈՒԹՎԱԾՔԸ

§ 11. Մանկապարտեզների հիմնական տիպերը հանդիսա-
նում են 3 կամ 4 խումբ ունեցող մանկապարտեզները:

§ 12. Մանկապարտեզի խմբերը կոմպլեկտավորվում են նախած-
յերեխաների տարեկանից կազմին, այն հաշվով, սակայն վերջո-
ւաբանչյուր խմբում յերկուսից ավելի կից հասակի յերեխաներ
չլինեն (3—4 տարեկաններ՝ փոքրերի խումբ, 4—5 տարեկաններ՝
միջնակների խումբ, 5—6 տարեկաններ՝ մեծերի խումբ):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — 1. Բազմակոմպլեկտ մանկապարտեզ-
ներում թույլատրվում է կազմակերպել զուգընթաց խմբեր.
ամենափոքր յերեխաներից կազմվում է առանձին խումբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — 2. Լուսավորչուհիները թույլտրվելով յամբ
կարելի յէ կազմակերպել նաև յերկկոմպլեկտ ու միակոմպ-
լեկտ մանկապարտեզներ:

§ 13. Մանկապարտեզի յուրաքանչյուր խմբում պետք է լինի
30 յերեխա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — 3—4 տարեկանները խմբում 18 յե-
րեխայից ավելի չպետք է լինի:

§ 14. Յերեխաները մանկապարտեզում մնալու տեվողու-

թյունը (7, 9 և 12 ժամ) վորոշվում է ձեռնարկությունների, հիմ-
նարկությունների կամ կազմակերպությունների բանվորների, ծա-
ռայողների աշխատանքով, վորոնց յերեխաներին սպասարկում է
տվյալ մանկապարտեզը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Առանձին մանկապարտեզներում դե-
չերային հերթերին աշխատող ծնողների յերեխաներին սպա-
սարկելու համար կարելի յէ կազմակերպել որ ու դեչեր աշ-
ղատող հատուկ խմբեր:

§ 15. Յերեխաները մանկապարտեզում պետք է սնվեն՝ 7 ժամ
մանկապարտեզում մնալու դեպքում — 2 անգամ, 9 ժամ մնալու
դեպքում — 3 անգամ, 12 կամ 24 ժամ մնալու դեպքում — 4 ան-
գամից վորչ պակաս:

§ 16. Մանկապարտեզն աշխատում է կլոր տարին, բացառու-
թյամբ որացուցյի կարմիր որերի և համապետական կարգով
սահմանված հանգստի որերի:

IV. ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԳԸ

§ 17. Ժողովրդական կրթության որդանների իրավասության
յենթակա մանկապարտեզներում յերեխաների ընդունելությունը
կատարում է անձամբ մանկապարտեզի վարչը: Տնտեսական կազ-
մակերպությունների, հիմնարկությունների և կոլտնտեսություն-
ների մանկապարտեզներում յերեխաների ընդունելությունը կա-
տարում են համապատասխան ձեռնարկությունների կամ հիմնար-
կությունների ազմինիստրացիաները՝ համաձայնեցնելով արհես-
տակցական միության տեղական կոմիտեյի, կոլտնտեսության
վարչության հետ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Կույր, համբ ու խուլ յերեխաները
սովորական տիպի մանկապարտեզներ չեն ընդունվում. այդ-
պիսի յերեխաները պետք է ուղարկվեն հատուկ մանկական
հիմնարկներ:

§ 18. Յերեխաներին մանկապարտեզ տալիս ծնողներից կամ
այն անձերից, վորոնց դաստիարակության տակ են գտնվում յե-
րեխաները, պահանջվում է ներկայացնել՝ ա) դիմում յերեխային
մանկապարտեզ ընդունելու մասին, բ) վկայական յերեխայի
տարեքի մասին և դ) տեղեկանք ծաղկը պատվաստելու մասին:

Յերեխաներին մտուրից մանկապարտեզ փոխադրելիս պահանջ-
վում է հանձնել նրանց բժշկական քարտերը:

§ 19. Յերեխաներին մանկապարտեզի հաջորդ բարձր խումբը փոխադրելը կատարվում է սեպտեմբերի 15-ից մինչև 25-ը:

Սմբերում ազատվող տեղերի հաշվին մանկապարտեզի վարիչը պարտավոր է ընդունելութուն կատարել ամբողջ տարվա ընթացքում:

Յերեխայի վտարումը մանկապարտեզից թույլատրվում է միայն այն դեպքում, յերբ յերեխան, համապատասխան բժշկական հիմնարկութայն յեզրակացութայն համաձայն, հատուկ բուժական հիմնարկ ուղարկվելու կարիք ունի:

V. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

§ 20. Մանկապարտեզի դրուխ կանոնած է վարիչը:

§ 21. Մանկապարտեզի վարիչին նշանակում ու արձակում է շրջանային (քաղաքային) ժողովրդական կրթութայն բաժնի վարիչը:

ՄԱՆՈՒՌՆԻՑՈՒՆ. — Տնտեսական հիմնարկութայնների ու կազմակերպութայնների իրավասութայն յենթակա մանկապարտեզների վարիչների նշանակումն ու արձակումը կատարում է ձեռնարկութայն կամ հիմնարկութայն համապատասխան շրջաքաղ ժողկրթութայն բաժնի համաձայնութայնը:

§ 22. Մանկապարտեզի վարիչը նշանակվում է այն անձերից, վորոնք ունեն ընդհանուր միջնակարգ կրթութայն, ինչպես և նախադարոցական միամյա դասընթացներից վոչ ցած մասնագիտական կրթութայն և յերկու տարուց վոչ պակաս աշխատանքի ստաժ մանկապարտեզում:

§ 23. Մանկապարտեզի վարիչը.

ա) ղեկավարում է մանկապարտեզի վողջ աշխատանքը.

բ) կազմակերպում է դաստիարակների աշխատանքը և սխառեմատիկաբար ստուգում այն՝ անձնապես հաճախելով խմբերը և ստուգելով դաստիարակների աշխատանքի պլանները.

գ) հոգ է տանում դաստիարակների ընդհանուր ու քաղաքական դարգացման մակարդակի և արտադրական վորակի բարձրացման մասին.

դ) ապահովում է մանկապարտեզը համապատասխան կահավորութայն, խաղալիքներով ու պիտույքներով.

յե) ապահովում է բավարար և բազմառեսակ սնունդը, թույլ չտալով իջեցնել յերեխայի սննդի նորմանները, վոր սահմանել

է Հայկական ԽՍՀ Առողջապահութայն ժողովրդական կոմիտարիատը.

զ) ապահովում է սանիտարական—առողջապահական կանոնների, հակահրդեհային միջոցառումների կատարումը, ինչպես և մանկապարտեզի շենքի վերանորոգումը.

ե) ապահովում է այն բոլոր անհրաժեշտ պայմանները, վորոնք նպաստում են յերեխաների առողջութայն ամրապնդմանը (ճիշտ ուժիմի իրադրում, յերեխաներին ամառանոց տանելու գործի կազմակերպում, քուն և այլն).

ը) ժողկրթութայն բաժնի հաստատութայնն է ներկայացնում մանկապարտեզի դաստիարակների նշանակումը և արձակումը և ինքնուրույն կերպով աշխատանքի յե ընդունում ու արձակում տնտեսվարին ու Ֆայսարկու տեխնիկական անձնակազմին, խտորեն պահպանելով աշխատանքի վերաբերյալ համապատասխան որենադրութայնները:

թ) ապահովում է մանկապարտեզի աշխատողների աշխատավարձի փամակային վճարումը.

ժ) ապահովում է մանկապարտեզի նախահաշվի կազմումն ու կատարումը և անձնապես պատասխանատու յե, վոր միջոցները ճիշտ ծախսվեն և խիտ համապատասխանեն ժողկրթութայն բաժնի կամ ձեռնարկութայն հաստատած նախահաշվին:

ի) կազմակերպում է դրամական և նյութական—մթեքային հաշվետվութայն ճիշտ վարումը.

լ) կազմակերպում է աշխատանքը ծնողների և աղբարեսակութայն մեջ՝ յերեխաների դաստիարակութայն և նախադարոցական յերեխայի կենցաղն ընտանիքում բարելավելու հարցերի վերաբերյալ.

§ 24. Գործը լավադույն ձեով դնելու նպատակով մանկապարտեզի վարիչը պարբերաբար հրավիրում է մանկապարտեզի աշխատողների խորհրդակցութայններ և ներդրավում մանկապարտեզի աշխատանքի մեջ ծնողական ակտիվին, միաժամանակ սերտ կապ պահպանելով տեղական պետական հիմնարկներին, հասարակական կազմակերպութայնների և մամուլի հետ:

§ 25. Մանկապարտեզի վարիչն իր ամբողջ աշխատանքի ընթացքում ղեկավարվում է յերեխաների դաստիարակութայն վերաբերյալ կուսակցութայն ու կառավարութայն վորոշումներով, «Մանկապարտեզի կանոնադրութայն» և Հայկական ԽՍՀ կու-

նավորութեան ժողովրդական Կոմիտարիատի ծրագրա-
կան ցուցումներով :

ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ

§ 26. Մանկապարտեզի դաստիարակի նշանակումն ու արձա-
կումը կատարում է շրջանային (քաղաքային) ժողովրդական
կրթութեան բաժնի վարիչը՝ մանկապարտեզի վարիչի առաջար-
կութեամբ :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Այս կամ այն ձեռնարկութեան և
հիմնարկութեան իրավասութեան յենթակա մանկապարտեզի
դաստիարակը նշանակում է ու արձակում աշխատանքից հա-
մապատասխան հիմնարկութեան արձինիստրացիան՝ շրջանա-
յին (քաղաքային) ժողկրթութեան բաժնի վարիչի հետ հա-
մաձայնեցնելով :

§ 27. Մանկապարտեզի դաստիարակը նշանակվում է այն ան-
ձերից, վորոնք ավարտել են նախադպրոցական մանկավարժական
ուսումնարանը կամ ունեն միջնակարգ կրթութիւն և մասնադի-
տական պատրաստութիւն և ստացել նախադպրոցական դասըն-
թացներում :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Առանձին դեպքերում (դպրոցական
վարերում) մանկապարտեզի դաստիարակ կարելի է նշանա-
կել այն անձանց, վորոնք միջնակարգ կրթութիւն չունեն,
սակայն սխտեմատիկաբար բարձրացնում են իրենց վորակը
շրջանային (քաղաքային) ժողկրթութեան բաժնի կողմից սահ-
մանված ժամանակամիջոցում :

§ 28. Մանկապարտեզի դաստիարակն անձնապես պատաս-
խանատու չէ իր խմբի յուրաքանչյուր յերեխայի կյանքի և առող-
ջութեան պահպանման ու ճիշտ դաստիարակութեան համար :

§ 29. Մանկապարտեզի դաստիարակը .

ա) ապահովում է իր խմբի ամեն մի յերեխայի ճիշտ դաս-
տիարակութիւնը՝ իր աշխատանքի ընթացքում անշեղ դեկա-
վարվելով Լուսավորութեան ժողովրդական Կոմիտարիատի ծրագ-
րամեթոդական ցուցումներով .

բ) հոգատար և ուշադիր վերաբերմունք է ցուցաբերում դե-
պի իր խմբի ամեն մի յերեխայի հետաքրքրութիւնն ու կարիք-
ները .

գ) կատարում է յերեխայի առողջապահութեան պահպանման
ու ամրացման հետ կապված բժշկի պահանջները .

դ) խնամքով նախապատրաստվում է յերեխաների հետ պա-
րապելու համար .

է) մասնակցում է մանկապարտեզի վարիչի հրավիրած
մանկավարժական խորհրդակցութիւններին .

զ) ծնողներին մեջ աշխատանք է կատարում մանկապարտեզում
և ընտանիքում յերեխաների դաստիարակութեան վերաբերյալ
հարցերի շուրջը .

է) կազմում է յերեխաների հետ իր տանելիք ու տարած աշ-
խատանքի պլաններն ու հաշվետվութիւնները :

§ 30. Ամեն մի դաստիարակ պարտավոր է սխտեմատիկա-
բար բարձրացնել իր վորակը :

§ 31. Մանկապարտեզի դաստիարակն աշխատում է մանկա-
պարտեզի վարիչի ղեկավարութեամբ և հաշվետու չէ նրա առջ
իր աշխատանքի համար :

§ 32. Մանկապարտեզի դաստիարակի համար պահանջվում է
որակաւ 6 ժամյա աշխատանքի նորմա :

Բ Ժ Ի Շ Կ

§ 33. Մանկապարտեզի բժշկի վրա դրվում են հետևյալ պար-
տականութիւնները .

ա) յերեխաներին բժշկական քննութեան յենթարկել (աշ-
խանք՝ յերեխաների ընդունելութեան ժամանակ և դարնանք՝ յե-
րեխաներին ամսուանոց տանելուց առաջ), անհրաժեշտ տվյալները
մտցնելով յերեխայի անձնական բժշկական քարտի մեջ .

բ) յերեխաների ընդհանուր խմբից առանձնացնել այն յերեխա-
ներին, վորոնք հատուկ բուժման վարիք ունեն, անցկացնել նրանց
պոլիկլինիկայի կամ տեղական այլ բուժական հիմնարկի միջոցով
և այնուհետե մանկապարտեզում հետևել նրանց առողջութեանը .

գ) բուժական ուղնութիւն ցույց տալ անակնկալ հիվանդացող
յերեխաներին և մանկապարտեզում անցկացնել անհրաժեշտ պրո-
ֆիլակտիկ միջոցառումներ (ախտահանում և այլն) .

դ) կազմակերպել ու անցկացնել յերեխաների պրոֆիլակ-
տիկ սրնկումներ .

է) սխտեմատիկաբար հսկել յերեխաների առողջական վիճա-
կին ու նրանց ֆիզիկական դարդացմանը (պարբերական բժշկական
քննութիւններ, ամսե-ամիս կշռում, անտրոպոմետրիկ չափում-
ներ և այլն) .

դ) հսկողութիւնն ունենալ մանկապարտեզի սանիտարական դրութեան վրա. (մասնավորապէս՝ խոհանոցի և մթերքների պահակախմբի).

ե) մշտական հսկողութիւնն ու վերահսկողութիւնն ունենալ սննդի պատրաստման վորակի և ճաշացուցակի կազմման վրա.

ը) սանիտարական-ըուսավորական աշխատանք կատարել յերեխաների ծնողներին և մանկապարտեզի դաստիարակներին ու տեխնիկական անձնակազմի մեջ՝ յերեխաների անձնական առողջապահութեան, վարակիչ հիվանդութիւնների կանխման, շէնքը սանիտարական լավ վիճակում պահելու և այլ հարցերի վերաբերյալ:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐԻՉ

§ 34. Տնտեսվարն աշխատում է մանկապարտեզի վարիչի ղեկավարութեամբ և հաշվետու յե նրա առաջ:

§ 35. Մանկապարտեզի տնտեսվարը

ա) ապահովում է սննդի ճիշտ կազմակերպումը և պատասխանատու յե պատրաստված սննդի վորակի ու մթերքների պահպանութեան համար.

բ) ապահովում է կահավորման առարկաների ժամանակին ձեռք բերումը, պատասխանատու յե մանկապարտեզի հակահրդեհային պաշտպանութեան պահանջներին կատարման համար, կազմակերպում է մանկապարտեզի վողջ ունեցվածքի և ինվենտարի կանոնավոր պահպանումը.

գ) ապահովում է վառելիքի ժամանակին ձեռք բերումը և մանկապարտեզի շէնքի վերանորոգումը.

դ) կազմակերպում է մանկապարտեզի սպասարկելու տեխնիկական անձնակազմի աշխատանքն ու վերահսկողութեան յենթարկում այն:

յե) տնտեսվարի աշխատանքի նորման որական Տ ժամից չպետք է անցնի:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

§ 36. Մանկապարտեզի տեխնիկական անձնակազմն աշխատում է մանկապարտեզի վարիչի կարգադրութիւնների ու ցուցումների և մանկապարտեզի ներքին կարգապահական կանոնների համաձայն:

§ 37. Տեխնիկական անձնակազմի աշխատանքի ժամանակին նորման սահմանվում է որական Տ ժամ:

Մանկապարտեզի վողջ անձնակազմը սխտեմատիկաբար յենթարկվում է բժշկական քննութեան:

§ 38. Գիշերային հերթապահութիւնն տանող անձնակազմը հերթապահութեան ժամերին իրավունք չունի քնելու ու իր հերթապահութեան ամբողջ ժամանակամիջոցում պարտավոր է հսկել յերեխաների քնին ու մանկապարտեզի կարգին:

VI. ԾՆՈՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

§ 39. Մանկապարտեզի աշխատանքի ամբացման ու վորակի բարձրացմանն ուղղված ձեռնարկումները կիրառելու մեջ մանկապարտեզի վարիչին ոգնելու նպատակով մանկապարտեզների վարիչներին առնիթեր կազմակերպվում են ծնողական կոմիտեներ:

Մանկապարտեզին կից ծնողական կոմիտեն (մոտավորապէս 1—2 ներկայացուցիչ մանկապարտեզի յերեխաների յուրաքանչյուր խմբից) ընտրվում է ծնողական ընդհանուր ժողովում ձայների պարզ մեծամասնութեամբ:

40. Ծնողական կոմիտեն ընտրվում է մեկ տարի ժամանակով:

§ 41. Ծնողական կոմիտեն իր միջից ընտրում է նախագահ և քարտուղար:

§ 42. Ծնողական կոմիտեն.

ա) ոգնում է՝ կազմակերպելու մանկապարտեզի առողջացման աշխատանքը, ապահովելու մանկապարտեզը համապատասխան կահավորութեամբ, դիտողական պետույթներով ու խաղալիքներով:

բ) մասնակցում է ընտանիքների հետ տարվելիք աշխատանքի ոգնով մանկապարտեզի առանձին միջոցառումներին:

գ) ոգնում է մանկապարտեզի վարիչին՝ կազմելու մանկապարտեզի պահպանման նախահաշիվը, վերանորոգելու շէնքը և կահավորելու մանկապարտեզը:

դ) սխտեմատիկ վերահսկողութիւնն է ունենում մթերքների կանոնավոր ծախսման, յերեխաների սննդի վորակի, մթերքային ու դրամական հաշիվավորութիւնների կանոնավոր կազմման, մանկապարտեզի շէնքի և ունեցվածքի պահպանութեան վրա:

§ 43. Ծնողական կոմիտեյի վորոշումները հաստատում և մանկապարտեզի վարիչը:

VII. ՄԱՆԿԱԳԱՐՏԵԶԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ, ՓԻՆՃՆՍԱԿԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
ՅԵՎ ՆՐԱ ԳՈՒՅՔԻ ՏՆՈՐԻՆՈՒՄԸ

§ 44. Մանկապարտեզի հաստիքները սահմանվում են ՀԽՍՀ Լուստողկոմատի և Ֆինտողկոմատի կողմից հաստատված տիպական հաստիքների հիման վրա:

§ 45. Յուրաքանչյուր մանկապարտեզ ունենում է իր առանձին բյուջեն և տարեկան նախահաշիվը՝ հաստատված համապատասխան շրջանային (քաղաքային) ժողկրթութայն բաժնի կամ համապատասխան ձեռնարկութայն, հիմնարկութայն աղիմխիտութայն և կոլտնտեսութայն վարչութայն կողմից, նայած, թե ո՛ւմ բյուջեյումն և գտնվում տվյալ մանկապարտեզը:

§ 46. Մանկապարտեզի վարիչը հանդիսանում է վարկերի կարգադրիչը:

§ 47. Մանկապարտեզի ամբողջ ունեցվածքը (չենք, կահավորություն, գրադարան և այլն), վոր գտնվում է մանկապարտեզի ոգտադործման տակ՝ հանդիսանում է պետական կամ կոոպերատիվ սեփականություն:

§ 48. Յուրաքանչյուր մանկապարտեզ ունենում է իր կնիքը:

Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ

ՄԱՆԿԱԳԱՐՏԵԶԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՀԱՄԱՐ

(ԾՐԱԳՐԱ-ՄՆԹՈՒԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ)

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. հունիսի 4-ի վորոշումը՝ «Մանկարանական խնդաթյուրումների մասին Լուսժողովմասաների սխառնում» մերկացրեց մանկարանության ամբողջ կեղծ գլխաւանությունն ու հետադիմականությունը և այն հակաշական փնասը, վոր նա հասցրել է ժողովրդական կրթության դործին):

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի այս վորոշումով վերականգնվում են մանկավարժի ու մանկավարժության իրավունքները և առաւելադուսն պարզությամբ նշվում են աճող սերնդի դաստիարակությունը այնպիսի բարձրության վրա ղենելու ուղիները, վորպիսի բարձրության վրա նա պետք է կանգնած լինի սոցիալիստական պետության մեջ:

Մանկարանությունն ուժեղ կերպով տարածվել ու խոր արմատներ էր ձգել վոչ միայն դպրոցում, այլև նախադպրոցական դաստիարակության տեսության մեջ ու պրակտիկայում: Այդ կեղծ գլխության հիման վրա կազմվում էին «գեկաւար» փաստաթղթեր մանկապարտեղների համար:

Այդ հիմնական փաստաթղթերից մեկը հանդիսանում էր 1934 թվին ՌՄՖՍՀ Լուսժողովմասոի հրատարակած «Մանկապարտեղի ծրագրերն ու ներքին կարգ ու կանոնը»:

Յեղնելով մանկարանական կեղծ գլխության ղլխավոր հետադիմական այն «որենքից», թե՛ «յերխաների բախտը ճակատադրոբեն պայմանաւորված է կենսաբանական և սոցիալական դործոններով», ժառանգականության և ինչ-վոր անփոփոխելի միջավայի ազդեցությամբ», 1934 թ. ծրագրերը բոլոր յերեխաների համար խստորեն սահմանում էին դարդացման միասնական ու անփոփոխելի ստաղխաներ ու հասակային նորմաներ:

Այսպես՝ «Սոսքի դարդացման» ծրագրում յերեխան 3 տարեկան հասակում պետք է տար չրջարտոի առարկաների անունները, 3 ու կես տարեկան հասակում՝ նկարի վրա յեղած առար-



2498
40

կաների անունները, 4 տարեկան հասակում՝ դործողությունների անունները, իսկ 4½ տարեկան հասակում՝ առարկաների հատկությունների անունները:

Ֆիդիկական դաստիարակության ծրագրում պահանջվում էր, վոր 3 տարեկան յերեխան առաջին կլսամյակում ոճառով լվանա ձեռքի դաստակները և անսյայման «բոլորածև» շարժումներով, իսկ յերկրորդ կլսամյակում՝ յերեսը լվանա առանց ոճառի: 3 ու կես տարեկան յերեխան պետք է սովորեր արձակել սպիտակեղենի կոճակը կողքից, իսկ 4 տարեկան հակասում կոճակեր կողքի կոճակները:

Անդամ այս մասնակի որինակները վկայում են, վոր 1934 թվի ծրագրերով արհեստականորեն մասնատվում էր յերեխայի զարգացումը, սահմանվում էյին յերեխայի զարգացման մտացածին նորմաները:

Յերեխայի զարգացման վրա «միջավայրի» ամենազորեղ նաղդեցության վերաբերյալ մանկաբանական կեղծ դիտական տեսությունների համապատասխան, 1934 թվի ծրագրերը դաստիարակի աշխատանքը հանդեցնում էյին «միջավայրի» կադմակերպման:

Հետևելով ծրագրի ցուցումներին, դաստիարակը պետք է սահմանափակվեր «միջավայրի կադմակերպմամբ» և միայն դիտեր յեթեխայի վարքը, չիրագործելով յերեխայի իսկական դաստիարակությունը:

Դաստիարակության թեցությունները դրպարտիչ կերպով բացատրվում էյին ընտանեկան միջավայրով, վրամ յերեխայի ժառանգականությամբ, կամ մանկաբարտեղի վոչ բավարար կահավորությամբ:

Այսպիսով, 1934 թվի ծրագրերով հասակն ու «միջավայրը» դիտվում էյին վորպես ճակատագրական, ինչ-վոր մի բան, վորով ամբողջովին սրայմանավորվում է յերեխայի զարգացումը: Դրանով իսկ վերացվում էր յերեխայի դաստիարակության պատասխանատվությունը դաստիարակի վրայից, դաստիարակությունը վեր էր անվում տարերային պրոցեսի, մանկավարժությունն արհամարհվում էր, հեղնաբար հայտարարվում էր «եմպիրիկ» և «դիտությունանման դիսցիպլին»: Քանի, վոր ըստ ծրագրի, այս կամ այն ստաղիան վորոչ հասակում պետք է սկսվեր ինքն իրեն, այսպա դաստիարակը մատնվում էր անզոր-

ծության, նրան մնում էր միայն դիտել, թե ինչպես յերեխան «ստաղիայից ստաղիա» յե անցնում. նա միայն պետք է «կադմակերպեր միջավայրը», առանց յուրաքանչյուր առանձին յերեխայի դաստիարակման պրիոմների ու մեթոդների վրա աշխատելու:

Ծրագրերը դաստիարակից ծածկում էյին կենդանի, կոնկրետ յերեխաներին իրենց բոլոր առանձնահատկություններով ու հետաքրքրություններով, դաստիարակին կողմնորոշում էյին դեպի ինչ-վոր «միջին» վերացական յերախան, վորն իբր թե զարգանում էր անկողնից, ճակատագրորեն պայմանավորված հասակային ստանդարտների համաձայն:

Այդ վնասակար ծրագրերը, յեղնելով յերեխայի մասին կեղծ դիտական մանկաբանական տվյալներից, արհամարում էյին նախադարոցական հասակի յերեխայի առանձնահատկությունները և մանկապարտեղի վորպես 3—7 տարեկան յերեխայի դաստիարակության հիմնարկի աշխատանքի յուրահատկությունը:

1934 թվի ծրագրերը նախադարոցական հասակի յերեխաներից սրահանջում էյին չտիագանց մեծ ծավալով ֆորմալ դիտելիքների և ունակությունների յուրացում, վորը դաստիարակին ստիպում էր ծանրաբեռնել յերեխաներին նրանց անմատչելի դիտելիքներով և ունակությունների մարդումով:

Որինակ, «նկարչություն, ծեփ և աշխատանքային դրադմունքներ» վերսառությամբ ծրագրում առաջին տեղը տրվում էր յերեխաներին միայտի, կտորի (գործվածքի) և թղթի հատկությունների՝ մասին դիտելիքներ տալու խնդրին: Յերեխաներն անսյայման պետք է իմանային, վոր թուղթը պատուվում, ճկվում և ճմուխում է: Մանկապարտեղներում պետք է ստեղծվեյին հատուկ «աշխատանքային սենյակներ»՝ «աշխատանքի» պարսպմունքների համար. նախադարոցական հասակի յերեխաներին սովորեցնում էյին մուրճ «բռնելու» ճիշտ ձևերին, սովորեցնում էյին տախտակները միացնել «ուղիղ անկյունով» և այլն: Բոլորովին անտեսում էյին յերեխայի ստեղծագործական ընդունակությունների զարգացումը, նրա նախաձեռնության, ըմբռնողության զարգացումը:

«Բնական դիտելիքների տարբերը» ծրագրում յերեխաներից սրահանջում էյին ֆորմալ դիտելիքների և ունակությունների մեծ

ծաղալ և ամենեվին չեյին ազահովում այնպիսի դաստիարակչական խնդիրների կենսադործումը, ինչպես զարգացնել հետաքրքրութիւնը դեպի բնութիւնը, զարգացնել դիտունակութիւնը, հարցասիրութիւնը և այլն: Յերեխաների կողմից դիտվող ամենամի յերեւոյթ մասնատվում էր, դրվում վորո՞ սխեմայի մեջ: Ծրագրում տրված էր կենդանիների արտաքին հատկանիշների թվարկում, վորոնք յերեխաների կողմից սկսած և յուրացվելին վորոչ ժամանակաշրջանում:

Անդամ խաղերը 1934 թվի «ծրագրերում» տրված էին ուսուցման սլանում, վորպես յերեխաների այս կամ այն դիտելիքն ու ունակութիւնը «ամրապնդելու» մեթոդներից մեկը, վորպես թեմաները (կոմպլեքսներ) «մշակելու» յուրաքանչեւ մեթոդ: Ծրագրերը դաստիարակին կողմնորոշում էին այսպես կոչված «խթանված խաղերի» ուղղութիւնը, այսինքն խաղեր, վորոնք դաստիարակի կողմից անց էին կացվում «համապատասխան միջավայր» ստեղծելու, խաղալիքների և այլ «խթանների» ընտրութիւն միջոցով: Ամեն մի հասակի համար սահմանվում էին ստեղծադործական խաղերի թեմաներ. յերեխաները զրկվում էին իրենց ստեղծադործութիւնը, նախաձեռնութիւնը, Փանտաղիան ի հայտ բերելու հնարավորութիւնից և ստիպված էին խաղալ դաստիարակի նախապէս սլանով:

Մանկապարտեղի 1934 թվի ծրագրերում ատանձնացված էր աշխատանքի հատուկ թի բաժին՝ «Հասարակական դաստիարակութիւն»: Այս բաժնում նույնպես, 1934 թվի «ծրագրերի» ընդհանուր դրույթի համաձայն՝ յուրաքանչեւ յուր հասակի յերեխաների համար առաջարկվում էր Փորձալ դիտելիքների և ունակութիւնների վորոչ ծաղալ: Յերեխաների հետ քաղցրագիտութիւնից յուրաքանչեւ «պարապմունքներ» էին տարվում, վորտանակ մանկապարտեղի բովանդակ աշխատանքով յերեխաների մեջ դաստիարակելու բնավորութիւնը, ընկերականութիւնը, սեր դեպի մեր հայրենիքը, դեպի նրա առաջնորդները:

Ստեղծելով յերեխաներին սխտեմատիկաբար դպրոցի համար նախապատրաստելու յերեւոյթականութիւնը, ծրագրերը դրագիտութիւն ուսուցման դործում որինականացնում էր ամբողջական բառերի հակադրական, վնասակար մեթոդը, վորը տեղիք էր տալիս ուղղադրական անդրադարձութիւն և խանդարում յերեխաներին այնուհետև դպրոցում դրագիտութիւնը հաջողութիւնը:

Երեխաներին այնուհետև դպրոցում դրագիտութիւնը հաջողութիւնը յուրացնելու:

Մանկապարտեղի խնդրութիւնները ցայտուն արտահայտութիւն են դուել նաև մանկապարտեղի որվա ուժի մեջ: Որվա ուժի մի չափազանց մասնատումը, յերեխայի կյանքի խիստ սեղանմանավորումը բոլորներով դաստիարակին հարկադրում էին... հաճախ յերեխաներին սրահել լարված վիճակում, կոպիտ կերպով խախտել նրանց շահերը՝ ուժի մեջ ամենայն ճշտութիւնը, բայն բոլորին կատարելու նպատակով:

Ծրագրերի մանկապարտեղի խնդրութիւնները խորացվում էին նրանով, վոր սահմանվում էր յերեխաների հետ տարվելիք աշխատանքի կազմակերպման ընդհանրական (ունիվերսալ) մի մեթոդ, այն է, թեմա (կոմպլեքս): Թեմաները 1934 թվի ծրագրերի դրույթի ուղղակի հետևանք էին, վորոնք յերեխաներին սովորեցնում էին Փորձալ դիտելիքներ և ունակութիւններ: Մի քանի որվա ընթացքում թեմայի «մշակման» հետևանքով յերեխաները սկսած է վորոչ դիտելիքներ ստանալին այս կամ այն յերեւոյթի մասին: Թեմա-կոմպլեքսներով յերեխաների հետ տարվող աշխատանքը հանդում էր վամպանիականութիւն, խորացնում էր Փորձալից, յերեխաների մեջ ձանձրույթ էր առաջացնում, արդեւակում էր նրանց բաղմակողմանի զարգացումը:

1934 թվի ծրագրերը, որինականացնելով դաստիարակի չմիջամտումը յերեխայի զարգացման դործին, մանկապարտեղի աշխատանքի մեջ էին քաշում ազատ դաստիարակութիւնը մանրութուական տեսութիւնը: Միաժամանակ, Փորձալ ուսուցման դիրքափորում տալով, յերեխաների կյանքից դուրս մղելով խակական խաղը, ծրագրերը մանկապարտեղում արմատացնում էին «մուշտան»-ն: Մրա մեջ էր ծրագրի յերեւոյթիւնը, վորը արտացոլվում էր բուրժուական տեսութիւնների սողեցութիւնը, վորոնք յերեխայի աղատութիւն վերաբերյալ կեղծ Փրագիւնով ծածկում էին յերեխայի շահերի կոպիտ խախտումը:

Վերեւում ասածներից ամենայն ակնհայտութիւնը բոլորում է այն, վոր 1934 թվի ծրագրերը հակառակն վնաս են հասցրել յերեխաների դաստիարակութիւնը դործին, մանկապարտեղներում տարածելով կեղծ դիտութիւնը — մանկապարտեղիւնը:

1934 թվի ծրագրերը, վորպես վնասակար, խորհրդային մանկապարտեղի խնդիրներին հակասող ծրագրեր, հանված են

դեռ 1937 թ. : Անհրաժեշտ է մերկացնել 1934 թ. «ծրագրերի» և նրանց կից մեթոդական ցուցումների ամբողջ վնասակարութիւնը, մինչև վերջն արմատախիլ անել այդ «ծրագրերի», նրանց հեղինակներին և փոքեղնոցներին կողմից տարիներին ընթացքում արմատացած խեղաթյուրումները :

Խորհրդային մանկապարտեզը պետական հիմնարկ է և և իրադրծում է յերեսաներին կոմունիզմի վողով հասարակական դաստիարակութիւն տալու խնդիրները, ապահովելով նախադպրոցական յերեսայի բարձրակողմանի զարգացման անհրաժեշտ պայմանները :

Յերեսայի առողջութիւն, նրա Ֆիզիկական ճիշտ զարգացման հողը մանկապարտեզի կարեւորագույն խնդիրն է : Նախադպրոցական յերեսաներին զարգացող որդանիւղը պահանջում է մեծ ուշադրութիւն, հողս և խնամք :

Յերեսաներին ճիշտ Ֆիզիկական դաստիարակութիւնն ապահովելու համար յուրաքանչյուր մանկապարտեզ պետք է իրադրծի սահմանված որիս ուեթիմը, պետք է բավական ժամանակ ապահովի յերեսաներին բաց ողում մնալու համար, ընի համար, վորտակի ժամանակ ուտելու համար, ապահովի բացողյա և շնքի ներսում տեղի ունեցող յաղերի ու պարասը մուեքներին միմյանց կանոնավոր հաջորդումը : Յերեսաներին պետք է ապահովել ուղուլյար, բարձրագան և համեղ սննդով : Յերեսայի առողջութիւն ու կանոնավոր Ֆիզիկական զարգացման համար անհրաժեշտ են յաղերն ու Ֆիզիկական վարժութիւնները : Պետք է յերեսաներին սովորոցնել կատարել առողջապահութիւն տարրական կանոնները, սեր դաստիարակել նրանց մեջ դեպի մաքրութիւնը և կարդ ու կանոնը, զարգացնել յերեսաներին մեջ ինքնուրույնութիւն, վորպեսպի այն, ինչ կարող են, իրենք կատարեն (լիցցվել, հողուլել, յաղալիքները հալաքել ու տեղը դնել և այլն) :

Հետաքրքրական յաղերի ու պարասըմուեքներին, բնութիւնն ու շրջապատի կյանքին ծանոթացնելու միջոցով մանկապարտեզը պետք է ապահովի յերեսաներին մտավոր զարգացումը, նրանց մտահորիզոնի ընդարձակումը : Անհրաժեշտ է զարգացնել յերեսայի զգայութիւն, ընկալման որդանները, յարախուսել նրանց հարցասիրութիւնը, զարգացնել դիտունակութիւն, յա-

լամութիւն, զարգացնել յերեսաներին ուշադրութիւնը, հիշողութիւնը, յերեսակայութիւնը, յոսքը :

Դաստիարակչական աշխատանքի պրոցեսում, և վոչ թե հատուկ վարժութիւններին միջոցով, յերեսաները դաստիարակի ողնութիւնը սովորում են կանոնավոր վարվել իրենց ողտագործմանը հանձնված բոլոր իրերին հետ, ձեռք են բերում միշտը վոչ բարդ հմտութիւններ՝ կանոնավոր ողտագործել մտախոր, միքատը, վրձիւնը, ներկերը, սոսինձը և այլն :

Մեծ նշանակութիւն ունի յերեսաներին զեղարվեստական դաստիարակութիւնը : Արդեն նախադպրոցական փոքր հասակից մանկապարտեզը պետք է զարգացնի յերեսայի ստեղծագործական ընդունակութիւնները, սերը դեպի այն ամենն՝ ինչ գեղեցիկ է : Յերաժշտութիւնը, յերգեցողութիւնը, վոտանավորները, հեքիաթները, զեղարվեստական նկարները, յաղերը, նկարչութիւնը, ձեկիւր և այլն նպաստում են այդ խնդիրներին կենսագործմանը : Բնութիւնը, զեղեցիկութիւնը, նրա մեջ յեղած ձեկերի, զույների, ձայների հարստութիւնը վրալում են յերեսաներին, նրանց տալիս են վառ տալավորութիւններ, հաճույք են պատճառում յերեսաներին, դաստիարակում են զեղարվեստական ճաշակ, սեր դեպի զեղեցիկը :

Յերեսաներին կյանքը կուեկտիվում, ընդհանուր յաղերն ու զբաղմունքները դաստիարակին մեծ հնարավորութիւններ են տալիս յերեսաներին մեջ զարգացնելու ընկերասիրութիւն, կազմակերպվածութիւն, կուեկտիվում իրեն պահելու, միասին յաղալու, միմյանց ողնելու ունակութիւն :

Մեր հայրենիքի անվանի մարդկանց կյանքից վերցրած ցայտուն, յերեսաներին ըմբռնմանը մատչելի որինակներով, բարձրապիսի հետաքրքրական յաղերի ու զբաղմունքների մեջ, իր ամենուրյա բովանդակ աշխատանքի պրոցեսում մանկապարտեզը պետք է դաստիարակի յերեսաներին բնավորութիւնը, նրանց կամքը, հաստատակամութիւնը, տիկունութիւնը, համարձակութիւնը, ճամբատախոսութիւնը և հարգանքը դեպի ծնողներն ու մեծերը :

Մանկապարտեզի կարևոր խնդիրն է յերեսաներին մեջ դաստիարակել սեր դեպի մեր սքանչելի սոցիալիստական հայրենիքը, դեպի մեր առաջնորդները, հերոսները, դեպի մեր քաջարի Կարմիր բանակը, դեպի մեր գործարաններին ու սոցիալիստա-

կան դաշտերի ստախանովահանները, գեպի թորհուրդների յերկրի լավագույն մարդիկ:

Դաստիարակը, ծանոթացնելով յերեսխաններին շրջապատի կյանքի վաս, նրանց ընթանալնք մատչելի փաստերին, պատմելով Լեւինի, Ստալինի կյանքի մասին, բոլոր ժողովուրդների աշխատավորների, գեպի Լեւինն ու Ստալինը տածած սիրո մասին, հեթոտությունների հուշակափոր սրինակների մասին, դաստիարակում է սեր գեպի մեր հայրենիքը, հպարտություն՝ մեր նախնուհաներով, մեր սրանչելի սովորանքներով, աշխարհում լավագույն մեր մետրոյով, պիտեբական պարասներով և այլն:

Մանկապարտեզը յերեսխաններին դաստիարակում է ինտերնացիոնալ և հակաիմպերիալ լոզով:

Մանկապարտեզի դաստիարակչական աշխատանքը պետք է համապատասխանի նախադպրոցական հասակի յերեսխանների առանձնահատկություններին և նպատի յերեսխանի հետագա հաջող սովորելուն դպրոցում:

Նախադպրոցական յերեսխաններն աչքի յեն լինում իրենց խիստ ճշտված հուզականությամբ: Յերեսխանների հետ անցկացվող խաղերն ու պարապմունքները պետք է լինեն բաղմապիտի ու հետաքրքրական: Մանկապարտեզում պետք է բավարարվեն յերեսխանների աշխուժությունը, կենսութախությունը, նրանց ակտիվությունը, խաղալու պահանջը: Թողը յերեսխանի կյանքի հիմնական բովանդակությունն է կազմում: Թողը յերեսխանին մեծ բավականություն է պատճառում և նպաստում է նրա բաղմապիտեզի վարպետները: Այդ պատճառով դրավիչ խաղերը պետք է մանկապարտեզի վողջ աշխատանքում հիմնական տեղը դրավեն:

Ի՞նչպես ապահովել այս բոլոր խնդիրների կենսադործումը, վոր դրված են մանկապարտեզի առաջ:

Պետք է, ամենից առաջ, լիովին վերականգնել դաստիարակի, իրեն մանկավարժի, իրափունքները, վորովհետև հատկապես դաստիարակի աշխատանքն է, և վող թե տարերային միջավայրը կամ ճակատադրական ժառանգականությունը, վոր վըճուողական դեր է կատարում յերեսխանի անձնավորության պարպացման դործում:

Դաստիարակը լիովին պատասխանատու յե յուրաքանչյուր յերեսխանի ճիշտ դաստիարակության համար:

Լավ իմանալ իր դործը, ուշադիր, զգայուն ու սիրալիր վերարեբմունք գեպի յերեսխանները՝ ահա դաստիարակի հաջող աշխատանքի հիմնական պայմանը: Դաստիարակը պետք է լավ ճանաչի այն յերեսխաններին, վորոնց նա դաստիարակում է: Խաղերի ու պարապմունքների միջոցին սխտեմատիկ դիտողություններ կատարելով յերեսխանի նկատմամբ, դաստիարակը կաթյուններ կատարելով յերեսխանի հարմել յուրաքանչյուր յերեսխանի բող և սարգ պատկերացում կազմել յուրաքանչյուր յերեսխանի անհատական առանձնահատկությունների մասին և ճիշտ գնել դաստիարակման աշխատանքը յերեսխաններին մեջ:

Դաստիարակը վորպես իր սոցիալիստական հայրենիքի պատրիոտ, յերկրի հասարակական քաղաքական կյանքի ակտիվ մասնակից, համարձակ, հաստատակամ, կազմակերպված, յերեսխանների համար որինակ և ընդորինակման արժանի մեկն է հանդիսանում:

Դաստիարակի քաղաքականապես դիտակից լինելը, նրա նվիրվածությունը Լեւինի-Ստալինի դործին, անհաշտությունը գեպի ժողովրդի թշնամիները, սերը գեպի հայրենիքը՝ յերեսխաններին իսկական կոմունիստական վողով դաստիարակելու յերեջխիք են հանդիսանում:

Դաստիարակի արվեստը նախ և առաջ կայանում է նրանում, վոր նա գանաղանակերպ ուղիներով ու միջոցներով իրականացնում է յերեսխանի բաղմապիտեզի վարպետի զարգացման խնդիրը, հաշվի առնելով նրա անհատական հետաքրքրությունն ու ընդունակությունները: Դաստիարակն իր դործի վարպետն է, լի՛ ձեռներթյունները: Դաստիարակն իր դործի վարպետն է, լի՛ ձեռներթյունները, ստեղծադործությամբ, նա կարողանում է իր աշխատությամբ, ստեղծադործությամբ, նա կարողանում է իր աշխատանքի ընթացքում ուղտադործել ընկերների լավագույն փորձը: նա շատ է սովորում: նա ունի բաղմապիտի ունակություններ՝ յերեսխանների համար նրանց աչքի առաջ թղթից հետաքրքրական խաղալիքներ կարող և պատրաստել, դրավիչ հեքիաթներ պատմել, «Պետրուշկա» ցույց տալ, հետաքրքրական խաղեր հորինել և այլն: «Դուք ամեն բան կարողանում եք», — ասում են յերեսխանները, հիացմունքով դիտելով, թե դաստիարակը վորպիտի հմտությամբ բանեցնում է մուրճը, ամուր հանգույց անում պարանը, ի՞նչ հաջողությամբ ծեփում է, նկարում է և այլն:

Դաստիարակն զգայուն և ուշադիր է գեպի յերեսխանները նա հատկանում է նրանց մանկական ասպրումներն ու ցանկությունները, կարողանում է նրանց հետ ուրախ ծիծաղել, խա-

սիրալիք ընդունելութունն և սահմանադասներն կողմից, և՛ ինքզինս մարտիկը, վո՞ր դարան մտած հետում և սահմանը խախտողին, և՛ սահմանադաս խելացի շան հնարադիտութունը: Դաստիարակի պատմածները խոր տպավորութուն են թողնում յերեսներն վրա: Նրանց աչքերը փայլում են, նրանք վախենում են բառ բաց թողնել: Յերեսներին մեկը խախտում և լուսավորում— «Այսպես էլ հարկավոր եր նրան, այն լրտեսին»:

Յերեսները դաստիարակից շատ պատմութուններ կլան մեր լավագույն մարդկանց հերոսութան, մեր հայրենիքի նվաճումների մասին. այլ բոլորի մասին նրանք կտեղեկանան նաև պրքերից, նկարներից, գիտադիտություններից:

Ահա յերեսները նստել են նկարելու: Նրանցից միմանք պատկերում են կարմիրբանակաշիններ, ուրիշները՝ պապանինականներին ստոցադաշտի վրա: Յերեսները աշխույժ գրուցում են. դաստիարակը մասնակցում է նրանց գրույցին: Յերեսներին աշխատանքի մեջ նոր բովանդակութուն է հանդես գալիս: Մեկը պատկերում է, թե ինչպես պապանինականները օտարություն են հղում Մոսկվա, մի ուրիշի մոտ ստույգների միջից ճանապարհ է բաց անում փոքրիկ «Մուրմանցը»: Ահա և ծխով ու հրով բռնված հակասակորդի սղանավը: «Յերբ յես մեծանամ, անպարման պապանինական կզտոնամ»— դմայրված շնչում է մի աղջիկ, կապույտ մատիտով համարձակ նրբազենով ստոցադաշտը: «Իսկ յես ինքնաթիռներ կշինեմ», «Յես շատ, շատ տրակտորներ կշինեմ ու տրակտորիստ կզտոնեմ»,— յերազում են մյուսները:

Յերեսները հաճախ ժուռնալներում, ալբոմներում դիտում են ընկեր Լենինի, Ստալինի և Վորոշիլովի նկարները և դանդաղ պատկերներ նրանց կյանքից, լսում են դաստիարակի պատմածները նրանց կյանքից վերցրած հերոսական եպիդոդների մասին: Յերեսներին յուրաքանչյուրն ուղում է անպարման նմանվել բոլորի կողմից սիրված առաջնորդներին: Անվերջ հարցեր են տալիս սիրելի առաջնորդների կյանքի մասին, պարծենում են նրանցով:

Դաստիարակը յերեսներին ծանոթացնում է պիոներներին հետ: Ամառը նա յերեսներին կտանի պիոներական ճամբար, մինչև այդ, «Պիոներ կանչի» և «Պիոներական Պրապոզ»-ի նյութերի հիման վրա կպատմի նրանց, թե պիոներներն ինչպիսի

ջանասիրությամբ են սովորում, ինչպես են իրենց մայրերին սնունտության մեջ սղնում, ինչպես պիոներական հաջողվել է, կարմիր վզկապը՝ թափահարելով, կանխել զնացքի խորտակումը:

Յերեսներին առանձնապես մեծ ուրախութուն են պատճառում հեղափոխական տոները՝ Մայիսի 1-ը, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության տարեդարձը, Կարմիր բանակի ուրը: Մանկատարեզում սկսվում է տոնի նախապատրաստութունը: Դաստիարակները հեռաքրքրական գրքեր, նկարներ, նոր խաղալիքներ են բերում: Յերեսները Հոկտեմբերին, Մայիսի 1-ին, Կարմիր բանակին նվիրված յերգեր են յերգում, լսում են դաստիարակների պատմածները, դարբանանքներ, նվերներ են պատրաստում: Յերեսները տոնի մոտեցումն իրենց տներումն էլ են զբոսում՝ նրանց համար ծնողները նոր շորեր են կարում, նվերներ դնում: Տոնի մոտենալու հետ մանկապարտեզը լցվում է ուրախ իրաբանցումով. յերեսները վստիվորված հափառում ու զարգարում են սենյակները: Փոքրերն անգամ ոգնում են փոքրիկ գրողակները կախել, տիկնիկներին նոր հագուստներ հագցնել, դիտում են իրենց տոնական զվեսաների կարմիր բանտիկները:

Իսկ բուն առնակատարութունն ինչպիսի տպավորութուն կդործի յերեսներին վրա: Հանդիսավոր յերթն աղգային (ուկլախնական, ուղրեկական և այլն) պճնազարդ տարազներով, զվարթ պարերը, հյուրի՝ քաղաքացիական կոխիկների մասնակցի կամ հերոսի, ստախանովականի պարը ու հեռաքրքրական պատմութունը, այդ ամենը կողմնից յերեսներին մեջ սեր դաստիարակելու դեպի մեր հայրենիքը, պարծանք ու հիացմունք՝ մեր հրաշալի ինքնաթիռներով, տրակտորներով, ավտոմոբիլներով, մեր մետրոյով, մորը լավագույնն է ամբողջ աշխարհում, պիոներական պալատներով, դպրոցներով, մանկապարտեզներով և այլն:

Խորհրդային մանկապարտեզում դաստիարակվում են դանդաղ աղբեցութունների յերեսներ: Նրանք ապրում են համերաշխ, միասին խաղում են ու պարապում: Գրքերից նկարներից, դաստիարակի պատմածներից նրանք տեղեկանում են, վոր Խորհրդային Միության մեջ համերաշխ կերպով ապրում են դանդաղ ժողովուրդներ: Դաստիարակը յերեսներին ծանոթաց

Մեզ այդ ժողովուրդները հեքիաթներին, յերգերին, սյարերին: Մեր խորհրդային յերեսաները դաստիարակվում են ինտերնացիոնալ վոկով:

Լավ դաստիարակն արթուն կերպով պաշտպանում է յերեսաներին խորթ աղիւցություններից, կրոնական նախապաշարումներից ու սնոտիապաշտություններից. տակտով, սակայն համառորեն, այնպէս է անում, վոր վոչ մի յերեսա չմասնակցի յեկեղեցական ծխապատարություններին: Դա առաջելու ևս կհաջողվի դաստիարակին, յեթե նա կենդանի կապ սրահպանի ընտանիքի հետ և հմուտ կերպով աղբի նրա վրա: Դաստիարակը մատչելի ձևով բացատրում է յերեսաներին, հարկավոր դեպքում նաև մեծերին՝ կրոնական սովորությունների ու սնոտիապաշտությունների ամբողջ մնաստակարությունն ու անհեթեթությունը:

Մանկապարտեզի խնդիրներից մեկն էլ յերեսայի բնավորությունը դաստիարակելն է: Դաստիարակը պետք է պարզ պատկերացնի, թե ի՞նչ դժեր պետք է դաստիարակի յերեսաների մեջ: Դաստիարակը ձգտում է նրան, վոր յերեսաները մեծանան համարձակ, կազմակերպված ու ճարպիկ՝ ինչպես հերոս-ողաչուները, ինչպես կարմիրբանակայինները, համառ արգելքները, հաղթահարելու մեջ, աղնիվ ու ճշմարտասեր:

Դաստիարակը շարունակ ու հետևողական կերպով աշխատում է ինքն իր վրա: Դաստիարակին չի հաջողվի աղքատադրել յերեսային յերկուզի զգացմունքից, յեթե ինքը վախենում և միթից, դուրսից և այլն:

Թափթփված և փնթի դաստիարակը չի կարող յերեսաներին կարգ ու կանոնի և ակուրատության ընտելացնել: Դաստիարակը միշտ յերեսաների համար լավ որինակ պետք է հանդիսանա: Նա չի կարող խոստմնադանց լինել. ավելի լավ է մերժել յերեսայի խնդիրը, յեթե այն չի կարելի կատարել, քան խոստանալ ու չկատարել:

Գրավիչ պատմությունն ու դիրքը, հետաքրքրական ու բազմադան խաղերը և դրադմունքները նպաստում են յերեսայի բնավորության կերտմանը: Նկարելու, ծեփելու, խաղալիքներ պատրաստելու ընթացքում յերեսայի մեջ զարգանում է առկունություն, նա վարժվում է հաղթահարել արգելքները և սկսած դործը հասցնել մինչև վերջը: Խաղերի ընթացքում նույնպէս

զարգանում են յերեսաների նախաձեռնությունը, ստեղծագործությունը, ինքնուրույնությունը:

Դաստիարակը յերեսաներին սովորեցնում է ինքնուրույն լինել: Յերեսաներն իրենք են սեղան պատրաստում, դաստիարակին ողնում են պարապմունքների համար նյութեր պատրաստել, փոքրիկերին ողնում են հաղնիլ, սովորեցնում են կենդանիներին ու բույսերին ինքնուրույն խնամել:

Դաստիարակը յերեսաներին ծանոթացնում է բանվորների ու կուլտետեսակիսներին աշխատանքին: Յերեսաները դիտում են, թե ինչպես են աշխատում դաշտում, բանջարանոցում, թե ներկարարն ի՞նչպէս է ներկում, ատաղձագործն ինչպէս է սղոցում ու ռանդում, բանվորներն ի՞նչպէս են տուն կառուցում: Յերեսաների մեջ աստիճանաբար դաստիարակվում է հարգանք և դարձնում հետաքրքրություն դեպի աշխատանքը: Նրանց մեջ ցանկություն է առաջանում դառնալ ողաչու, շոփեր, տրակտորիստ և այլն:

Վաղ հասակից մեր յերեսաները զոգում են այն հոգատարությունը, վորով շրջապատված են, և իրենք էլ սովորում են ուշադիր ու հողատար լինել դեպի մեծերն ու իրենց ընկերները: Դաստիարակը յերեսաներին աստիճանաբար սովորեցնում է թեթև ծառայություններ մատուցել՝ աթոռ առաջարկել հյուրին, վերցնել ընկած իրը, կապել փոքրիկների կոշիկի կապը և առանձնապէս հողատար լինել դեպի հիվանդներն ու ծերերը: Իրենց հիվանդ ընկերոջը յերեսաները հետաքրքրական նկարներ են ուղարկում, ամառը նրա համար ծաղիկներ են քաղում, ուրախանում են նրա առողջանալով և, մանկապարտեզ վերադառնալուց հետո, հողատարությամբ խնամակալում են նրան:

Դաստիարակը կենդանի հետաքրքրությամբ յերեսաների հետ դրուցում է նրանց ընտանեկան կյանքի, յեղբայրների, քույրերի մասին, հարցնում է, թե ի՞նչպէս են նրանք միմյանց և իրենց մորն ողնում: Այս բոլորը մտերմություն են ստեղծում դաստիարակի և յերեսաների միջև, ինչպէս և յերեսաների մեջ հարգանք են դաստիարակում իրար հանդեպ և դեպի մեծերը: Յերեսայի բնավորությունը դաստիարակվում է վոզլ առորցայի՝ խաղերի ու դրադմունքների, դաստիարակի հետ տնեցած խոսակցությունների, ծնողների ու յերեսաների փոխհարաբերությունների ընթացքում: Յերեսայի բնավորությունը դաստիարակելու վրա ներգործում են նաև յերգեցողությունն ու յերաժըտությունը:

Դաստիարակը մեծ ուշադրութիւն է դարձնում յերեսաների մտահորիզոնի ընդարձակման, նրանց խելամուտթյան և դիտունակութեան զարգացման վրա: Զբոսանքները ժամանակ դաստիարակը յերեսաների ուշադրութիւնը դարձնում է վարեն տերեւի դուշնի, ձիւ վրա, թիթեռի վրա, առաջարկում է հանելուկներ լուծել: Դաստիարակը յերեսան կարող է նաև չպատասխանել յերեսանի հարցին, այլ նրան առաջարկել՝ «Ապա ինքը մտածիր», կամ՝ «Լալ դիտիր և կհասկանաս»: Դրանից շահագրգռված, յերեսան ինքնուրույն կլինաւի պատասխանը:

Յերեսաների դիտողութիւնը զարգացնելու համար ընդարձակ հորիզոն է բաց անում բնութիւնը: Զբոսանքի ժամանակ, բնութիւն անկյունում կենդանիներին և բույսերը խնամելիս յերեսաները սովորում են դիտել, նրանք նկատում են ֆասէլ, թարմ տերեւների դուշները, կեչու գնդիկները, ձկան գեղեցիկ շրջադարձն ակվարիումում, մայիսյան բղղի ծանր թռիչքը և այլն: Այսպիսով դաստիարակը դիտողութիւնները, խաղերի ու զբոսանքների միջոցով զարգացնում է յերեսաների խելամուտթիւնը և կռահելու ու նկատելու ունակութիւնը:

Յերեսաները և՛ մանկապարտեզում, և՛ փոփոցում շատ գեղեցիկ բաների յեն հանդիպում: Բնութիւն գեղեցիկութիւնը, անոր շենքերն իրենց հոյակապ ուրվագծերով, տոնականորեն զարգարված փոփոցը, յերաժշտութիւնը, հնչուն վոտանափորները, նկարները, քանդակները—այս բոլորն ուրախութիւն և պատճառում յերեսաներին, զարգացնում նրանց գեղարվեստական ճաշակը, յերեսակալութիւնը: Մակայն այս ել քննաբերաբար չի տեղի ունենում: Դաստիարակը պետք է կարողանա յերեսաների ուշադրութիւնն ուղղել շրջապատի գեղեցիկութեան վրա:

Յերեսաները հիանում են գեղեցիկ առարկաներով ու բնութեան յերեսութեանով և արտահայտում իրենց սպաւորութիւնները: Նրանք աշխույժ պատմում են իրենց տեսածի մասին և դեմքի վրա արտահայտում այն, ինչ առանձնապէս դուր է յեկել իրենց: Հարուստ սպաւորութիւններն ուղնում են նրանց գեղեցիկ զարդանկարներ, գուշների հաջող գուրորդումներ կատարել և կալի միջոցով տալ առարկաների տարբեր ձևերը, մարդկանց ու կենդանիների շարժումը: Նրանք խորանարդներին, ձողիկներին հատակին գեղեցիկ շենքեր են կառուցում, նման այն տներին, վոր դրոսանքի ժամանակ առանձնապէս դուր է յեկել իրենց:

Յերաժշտութիւնն ու յերգը յերեսաներին համակում են կայտառութեամբ, ուրախութեամբ և ուղնում են նրանց կազմակերպմանը:

Յերեսաների գեղարվեստական դաստիարակութեանը նպատակ է նաև մանկապարտեզի գեղեցիկ շրջադրութիւնը, պատերի ու կահույքի գուշները գեղեցիկ ներդաշնակութիւնը, կահույքի գեղեցիկ ու հարմար դասաւորութիւնը, արտահայտիչ խաղալիքները, թարմ ծաղիկները գեղեցիկ սարքված սեղանը, յերեսաների ու մեծերի ճաշակով հագուստը և այլն:

Դաստիարակը տարբեր ձևերով է կազմակերպում յերեսաների խաղերն ու զբոսանքները: Յերեսան նա զբոսանքն անց է կացնում ամբողջ խմբով. այս դեպքում բոլոր յերեսաները նկարում կամ ծեփում են, կամ թե հեքիաթ են լսում, յերգում են և այլն: Մի այլ անգամ յերեսաներն անհատաբար կամ մանր խմբերով զբոսանում են ո՛վ ինչ ո՛վ ցանկանա՝ վոմանք խաղում են, ուրիշները դիրք են նայում, մի տեղ խաղալիքներ են շինում, մի այլ տեղ՝ ծեփում ու նկարում: Դաստիարակը հող է տանում, վոր յերեսաների համար ամեն մի զբոսանք հետաքրքրական լինի և դրա համար խնամքով նախապատրաստվում է սպասարկողներին: Դաստիարակը, սպահովելով հանդերձ զբոսանքների բազմազանութիւնը, միաժամանակ հող է տանում, վոր յերեսաները հարմարութիւն ստանան կրկնել կատարված զբոսանքը կամ խաղը և, այդպիսով, ձեռք բերեն վորոշ հմտութիւններ, ինչպէս՝ ողովել ներկերից, կանոնաւոր ողորդործել մկրատը, հեքիաթ պատմել, վոտանաւոր արտասանել և այլն:

Դաստիարակը քաջալերում է յերեսաներին, յերբ նրանք մեծ խմբերով համերայն խաղում են միասին: Նա ուշադիր է նաև այն դեպքում, յերբ յերեսան խաղում, զբոսանում է առանձին: Դաստիարակն ուշադրութեամբ դիտում է յերեսաներին, ճանաչում է նրանց արանձնահատկութիւնները, հակումները և գտնում է յուրաքանչյուր յերեսանի մեջ լավագուշ գծեր զարգացնելու ուղիները:

Դաստիարակչական աշխատանքն առանձնապէս արդյունավետ կլինի, յեթե մանկապարտեզն ու ընտանիքը համաձայնութեամբ են գալիս յերեսանի վրա աղբելու համար: Մանկապարտեզը ծնողներին անհրաժեշտ խորհուրդներ ու ցուցումներ է տալիս

միաժամանակ ուշադիր կերպով հաշվի առնում նաև ընտանիքի պահանջները:

Այսպես և կառուցվում աշխատանքը մանկապարտեզում Այս բոլորը ցույց են տալիս, վոր յերեխաների հետ տարվող դաստիարակչական աշխատանքի արդյունքներն ամենից առաջ կախված են դաստիարակից:

Այս խնդրում քիչ դեր չեն կատարում նաև մանկապարտեզի մյուս աշխատողները և, առաջին հերթին, մանկապարտեզի վարիչը: Նրա հետաքրքրությունը դեպի մանկավարժական աշխատանքը, նրա փորձը, դիտությունը, սերը դեպի յերեխաները, մանկապարտեզում հանգիստ ու առույգ կյանք ստեղծելու նրա հմտությունը մեծապես նպաստում են յերեխաների հետ տարվող դաստիարակչական աշխատանքի հաջողութանը: Սիրալիր և ուշադիր հավաքարարն ու մանկապարտեզը սիրող տնտեսավարը հոգ են տանում մանկապարտեզի մասին, պահպանում են մանկապարտեզի կարգավորված կյանքը:

«Ձեռնարկ մանկապարտեզի դաստիարակչի համար» վերնադիրը կրող ներկա ուղեցույցը պարունակում է մանկապարտեզի դաստիարակչական աշխատանքի վերաբերյալ ծրարա—մեթոդական անհրաժեշտ ցուցումները: Այդ ցուցումների ճիշտ կատարումը կողմի դաստիարակին մեր հայրենիքի յերեխաներին դաստիարակել այնպես, վոր նրանք լինեն սմբակազմ ու առողջ, կողմի դաստիարակել նրանց բնավորությունը, դարդացնել նրանց ստեղծագործությունը, պատվաստել նրանց սեր դեպի մեր հարազատ յերկիրը և դեպի մյուս յերկրները աշխատավորները:

Մանկապարտեզի յուրաքանչյուր դաստիարակ պետք է լավ ծանոթ լինի այս «Ձեռնարկ»-ին, շարունակ ոգտվի նրանից և իր ամենօրյա աշխատանքում իսկական մանկավարժական վարպետություն ցուցաբերի:

«Ձեռնարկ»-ն ունի հետևյալ գլուխները. ա) Յերեխաների Ֆիզիկական դաստիարակությունը, բ) Սաղ, գ) Նկարչություն, ծեփ և այլն նյութերով զբաղմունքներ, դ) Յերաժշտական դաս-

տիարակություն, յե) Յերեխաներին բնության ծանոթացնելը, զ) Խոսքի դարդացում, է) Մաթեմատիկական սկզբնական պատկերացումների դարդացում: Գլուխների այս բաժանումը, սակայն, պայմանական է, վորովհետև մանկապարտեզում յերեխաների հետ տարվող ամբողջ դաստիարակչական աշխատանքը մի միասնական մակավարժական պրոցես է, վորը կենսագործում է մանկապարտեզի դաստիարակը:

ԳԼՈՒԽ I

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր մանկապարտեզ պետք է իրազործի յերե-
խաների ճիշտ ֆիզիկական դաստիարակութիւնը:

Ֆիզիկական դաստիարակութեան հիմնական խնդիրներն են՝
ապահովել մանկան աճող որդանիղմի նորմալ զարգացումն ու
ձեւաւորումը, նրա ամրապնդումն ու կոպումը, դաստիարակել
յերեխայի ակուրատութիւնը և մաքրութիւնը, կատարելագոր-
ծել յերեխայի շարժումները:

Ճիշտ ֆիզիկական դաստիարակութեան հիմքը պետք է կազ-
մեն՝ նախադրոցական հիմնարկութեան ամբողջ շրջադրութեան
կազմակերպումը առողջապահութեան պահանջները համաձայն,
կայուն օճիմը, ողի, ջրի, արևի և լույսի ճիշտ ողտադրումը,
կանոնաւոր սնունդը, յերեխաների կուլտուր—առողջապահական
ունակութիւնների դաստիարակման ուղղութեամբ տարբոյ սիս-
տեմատիկ աշխատանքը, խաղերի և վարժութիւնների միջոցով
յերեխաների շարժումները զարգացումը:

Մանկապարտեզի շենքը, կահույքը, խողայիքները, պի-
տույքները պետք է պահպեն դերազանցապէս մաքուր: Մանկա-
պարտեզի ամբողջ շրջադրութիւնը պետք է լինի հարմար, յերե-
խաների հասակին և ուժերին հարմարեցված: Մանկապարտեզի
տեղամասը պետք է լինի կանաչադարձ և բացօթյա սարապ-
մունքներով համար լավ նախապատրաստված: Զմեռը տեղամասը
պետք է հարմարեցված լինի յերեխաների ձմեռային զվարճալիք-
ների համար:

Անհրաժեշտ է ապահովել յերեխաների բաց ողում մնալու
առաւելագույն ժամանակամիջոցը՝ ձմեռն որակաւ 3—4 ժա-
մից վոչ պակաս. տարվա տաք յեղանակներին անհրաժեշտ է
յերեխաների հետ տարբոյ ամբողջ աշխատանքը կազմակերպել
բացօթյա, պահպանելով համապատասխան սրայանները: Ապահո-
վել շենքի բաւարար ողափոխումն ամբողջ տարվա ընթացքում:

Մեծ ուշադրութիւն պետք է նախընտրել հաղուստի առողջա-
պահութիւնը: Հնգուստը չպետք է կաշկանդի յերեխային ու
նրա շարժումները, պետք է հարմար լինի ինքնուրույն կերպով
հանվելու և հարկակրու, մասնաւոր՝ հեշտութեամբ լվանալու և ար-
դուկելու համար, պետք է լինի ակուրատ և դեղեցիկ, պահպի-
մաքուր և առանց սրտուլածքի: Շատ կարևոր է, վոր յերեխա-
ները մանկապարտեզի շենքում դանակիւս ունենան թեթե և հար-
մար վտանամաններ:

Կանոնաւոր սնունդը յերեխայի նորմալ ֆիզիկական զար-
գացման հիմնական պայմաններից մեկն է հանդիսանում: Սնուն-
դը պետք է պարունակի յերեխայի աճման ու դարդացման հա-
մար բոլոր անհրաժեշտ նյութերը: Սնունդը պետք է լինի դյու-
րամարս, համեղ, թարմ և բազմազան, բաւարար քանակութեամբ
մրդեղեն, բանջարեղեն, կաթ պարունակող, առողջապահութեան
պատրաստված և կուլտուրական ձևով մատուցված:

Յերեխաները պետք է սնունդ ստանան 7—9 ժամ մանկա-
պարտեզում անցկանցելու դեպքում 3 անգամ, իսկ 12 ժամ և 24
ժամ մնալու դեպքում՝ 4 անգամ:

Սննդից ալելի կտացնող պետք է լինի ճաշը, յերկրորդ
տեղը պետք է բռնեն նախաճաշն ու ընթրիքը, և ալելի թեթե՝
հետճաշիկը: Առաւոտյան նախաճաշին բացի մի բաժակ հեղուկից
(կաթ, թեյ, սուրճ, կակաո) և բուրլուց՝ կարագով՝ պետք է տրվի
նաև վորեւ տաք ուտելիք (կաշա), մակարոն, ձվածեղ, կարտո-
ֆիլ) այլև մրդեղեն, հատաստուղներ, բանջարեղեն (հում դադար,
կաղամբ):

Մանկապարտեզը պետք է ունենա կայուն օճիմ, վորը
պետք է բաւարար ժամանակ ապահովի խաղերի ու դրադմունք-
ների համար, ինչպէս և՛ նրանց կանոնաւոր հաջորդականութիւ-
նը, բաւարար ժամանակ՝ յերեխաներին բացօթյա պահելու և
քնելու համար, վորոշված ժամանակ՝ անդի համար: Նախա-
դրոցական հասակի յերեխաները, մանավանդ փոքրերը, շուտ
է հոգնում, ուտել, կարևոր է այնպէս կազմակերպել նրանց հետ
տարբոյ աշխատանքը, վոր ապահովվի խաղերի, դրադմունքների
անհրաժեշտ հաջորդականութիւնը և իր ժամանակին հանգստա-
նայու հնարաւորութիւնը:

Ճիշտ օճիմը վոր միայն ամրապնդում է յերեխային ֆիզի-
կապէս, այլ և նրա մեջ կազմակերպվածութիւն և ակուրատու-
թիւն և դաստիարակում:

Յերեխաների Փիղիկական դաստիարակութիւնը մանկապարտեզում պետք է տարվի բժշկի մշտական հսկողութեամբ:

Մանկապարտեզում յերեխայի Փիղիկական դաստիարակութեան ձեւադրվածքի համար պատասխանատու յե մանկապարտեզի վարիչը:

Դաստիարակը պատասխանատու յե իր խմբի յերեխաների Փիղիկական ձեւադրակութեան և առողջութեան պահպանման համար: Դաստիարակը պետք է ուշադիր վերաբերմունք և հոգատարութիւն ցուցաբերի յուրաքանչյուր յերեխայի նկատմամբ, հետևի յերեխայի առողջական դրութեանը, հող տանի նրա մաքրութեան մասին, հետևի, վոր յերեխան ուտի իրեն հասանելի բաժինը, հետևի նրա քնի նպաստավոր պայմաններ ստեղծելուն, յերեխայի մարմնի ձեւադրվածքի և զբաղմունքների ժամանակ:

Դաստիարակը պետք է աշխատի մշտական կոնտակտ պահանի բժշկի հետ, խորհրդակցի նրա հետ, տեղյակ լինի յուրաքանչյուր յերեխայի Փիղիկական զարգացման դրութեանը, հայտնի բժշկին յերեխայի առողջութեան ամենաչնչին խանդարման մասին:

Անհրաժեշտ է հասնել այն բանին, վոր մանկապարտեզի առողջապահական և առողջացման միջոցառումները պաշտպանվեն և ամրապնդվեն ընտանիքում:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՈՐՎԱ ՌԵԺԻՄԸ

- 1. Յերեխաների հավաքվելը, ազատ խաղեր, առավոտյան մարզանք (5—7 րոպե), լվացվել ժամը 8-9-ը
- 2. Նախաճաշ » 9,30
- 3. Խաղեր և զբաղմունքներ » 10
- 4. Զրոսանք, բացօթյա խաղեր 10-30
- 5. Ծաշ » 12-30
- 6. Քուռն » 1,30
- 7. Ազատ ժամ բաց ողում » 3,30
- 8. Հետճաշիկ » 4
- 9. Խաղեր և զբաղմունքներ » 4,30
- 10. Տուն դնալը » 5,30

Որվա ռեժիմը նկատի ունի, վոր յերեխաները մանկապարտեզ են գալիս առավոտյան ժամի 8-ին: Այնտեղ, վորտեղ

յերեխաները գալիս են ավելի ուշ կամ ավելի շուտ (նայած թե յերբ է սկսվում ծնողները աշխատանքը), վորոչ չափով փոխվում են նշված ժամերը, պահպանելով սակայն, ռեժիմի հիմնական սկզբունքները, այն է՝ սննդի պարբերականութիւնը (յուրաքանակը 3—3½ ժամը մեկ սեզամ) և սննդի վորոշակի ժամանակը, չոր 3—3½ ժամը բաց ողում անցկացնելու տևողութիւնը (3—4 ժամը, ցերեկը բաց ողում անցկացնելու տևողութիւնը (3—4 ժամ), ցերեկվա քնի տևողութիւնը 1½—2 ժամ), շարժական և հանգիստ խաղերի հաջորդականութիւնը:

Ռեժիմում նշված ժամերը ցույց են տալիս յուրաքանչյուր տվյալ մոմենտի սկիզբը:

Յերեխաների հավաքը ցանկալի յե անցկացնել բացօթյա:

Լվացվելը, սրբվելը, սանրվելը, հագնվելը և հանվելը, ինչպես նաև սնունդը, պետք է կազմակերպել այնպես, վոր հերթեր չստեղծվեն, վոր յերեխաներն ավելի ժամանակ ունենան խաղերի և զբոսանքների համար: Զրոսանքին հատկացրած ժամանակը չկրճատվի և յերեխաները շատ ժամանակ չկորցնեն վերադրվածները և կրկնակիները հազնելու վրա, հագնվելը կազմակերպվում է այնպես, վոր յերեխաների հաղնվելուն ողնում է տեխաշխատակիցը: Հաղնվելու և հանվելու մոտավոր տևողութիւնը ձմեռը պետք է լինի 20—25 րոպեից վոչ ավելի: Այդ ժամանակամիջոցը հետզհետե կրճատվում է այնքան, վորքան յերեխաները սովորում են ինքնուրույն հաղնվել ու հանվել:

Այն մանկապարտեզներում վորտեղ մի քանի խմբեր ունեն ընդհանուր հանդերձարան և լվացարան, նրանցից ոգտվելու ժամանակը պետք է կազմակերպել ըստ հերթականութեան: Այս կապակցութեամբ այս կամ այն խմբում ճաշի և զբոսանքի դնալու ժամը կարող է մի փոքր հետ կամ առաջ ընկնել, սակայն այնպես, վոր դրանից չխախտվի ռեժիմի հիմնական սկզբունքը:

Նախաճաշից առաջ յեղած ազատ ժամանակը պետք է ողտադործի խաղերի և զբաղմունքների համար՝ յերեխաների ազատ ընտրութեամբ: Նախաճաշից առաջ անց է կացվում նաև յերեխաների հարդարանքը (լվացվելը, սրբվելը, սանրվելը) և առողջապահութեան պահանջների պահպանումով՝ առավոտվա մարմնամաքութիւնը:

Նախաճաշից հետո սովորաբար անց են կացվում սահմանված զբաղմունքները: Նրանց մոտավոր տևողութիւնն է՝ փոքրերի խմբում 10—15 րոպե, միջակ և բարձր խմբերում՝ 20—30

րոպե, 7 տարեկանները խմբում՝ 25—40 րոպե (նայած պարասի-
մունքների բնույթին) :

Չբուսանքների միջոցին ժամանակի մեծ մասը պետք է
հատկացնել խաղերին : Այստեղ անհրաժեշտ է հող տանել, վոր
գրոսանքները լինեն յերեխաների համար հեռաքրքրական ու
ուշողրայ, շարժական և հանդարտ խաղերը իրար հաջորդեն, վոր
յերեխաները հնոգներ, ձմեռը չմրսեն և հաճույքով մնան գրո-
սանքներին մինչև վերջը : Անհրաժեշտ է հետևել վոր յերեխա-
ներն գրոսանքի ժամանակ հազմված լինեն ակտերատ, հարմար և
սեղանին համեմատ : Չմեռը բաց ողում մնալու ընդհանուր տեղո-
ղության (A ժամ) մեջ մտնում է նաև յերեխայի գրոսանքը տուն
գնալուց հետո :

Յերեխայ քնից հետո ամենից հաճախ անց են կացվում
խաղեր և գրոսանքներ յերեխաների ազատ ընտրությամբ, բայց
յերեմն գրադմունքները կարող են տարվել ամբողջ խմբի հետ,
որինակ՝ վորեւե բան պատմել, գիտֆիլմ ցուցադրել, շարժուն
խաղ խաղալ և այլն :

Ամառը յերեխաները վեր են կենում ժամը 7-ին և, դրա
համեմատ, որվա առաջին կեսի ռեժիմը 30 րոպեյով առաջ է
ընկնում : Գիշերվա քունը կարող է մի փոքր ուշացվել : Համա-
պնտանխան պայմաններում ամառը որվա ռեժիմի մեջ մտցվում
են ողային և արեի վաննաներ, սառը ջրով լողանալ և դուշ :

ԿՈՒՆՏՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՍՍՏԻՍՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գաստիարակի առաջ խնդիր է դրվում՝ ընտելացնել յերե-
խաներին մաքրասիրության և ակտերատության, յերեխաների
մեջ գաստիարակի մաքրության և կարգապահության սեր իր
չլնայատի նկատմամբ, դարդացնել յերեխաների ինքնուրույնու-
թյունն ախ բանում, ինչ վոր իրենք կարող են կատարել :

Դրա համար պահանջվում է սխտեմտովի գաստիարակչա-
կան աշխատանք յերեխաների հետ, մշտական ղեկավարություն ու
հսկողություն յուրաքանչյուր յերեխայի նկատմամբ :

Փոքրերի խմբից սկսած, ղեկավարն ընտելացնում է յե-
րեխաներին առողջապահության հիմնական պահանջները կա-
տարմանը :

Յերեխաներին պետք է սովորեցնել ուտելուց առաջ ձեռքերը

լվանալ և ընդհանրապես՝ յերբ ձեռքերը կեղտոտ են, նույնպես
և՛ գուլարանից դուրս դալուց հետո : Անհրաժեշտության դեպ-
քում լվանալ յերեսը, վերը, ականջները : Քնելուց առաջ վորողել
բերանը, մաքրել ատամները փոշով (մեծերի և միջակ խմբերը),
ուղովել միայն իր սրբիչից, ակուրատ վարվել նրա հետ և միշտ
կախել սեղը : Պետք է յերեխաներին սովորեցնել լվանալ վորտները
քնելուց առաջ, լվացվել մինչև դոտին (գիշերոթիկ խմբի և ամա-
ռային աշխատանքի պայմաններում) :

Գաստիարակը հետևում է, վոր յերեխաները մաքուր
լվացվեն, լավ սրբվեն : Փոքր յերեխաներին կամ նոր ընդունված
յերեխային գոտտխարտը հաճախ ինքն է հիչեցնում լվացվելու
մասին, ցույց է տալիս, թե ինչպես պետք է լվացվել, սրբվել
(վերցնել, բաց անել սրբիչը) : Անհրաժեշտ է ոգնություն ցույց
տալ յերեխային ախ դեպքում, ինչը նա դժվարանում է ինքն
անել, ինչը նա դեռ չի կարող մինչև վերջը լավ կատարել :

Միջակ ու մեծերի խմբում յերեխաները հեռոցհեռու ամբի
յեն ընտելանում ինքնուրույն կերպով լվացվելուն՝ առանց հիչեց-
նելու (բայց գաստիարակի հսկողությամբ) : Վորոչ դեպքերում
հարկավոր է լինում ոգնել նաև մեծ յերեխաներին :

Անհրաժեշտ է նույնպես սովորեցնել յերեխաներին կուլտու-
րական ձևով և ակուրատ ուտել, ճիշտ բռնել դդալը, ոգնվել պա-
տառաքաղից (պատառաքաղից ոգնվում են միջակ և մեծերի
խմբերը), ուտել առանց շոտայելու և լավ ծամել ուտելիքը, ու-
տել միայն սեղանի մոտ նստած, ոգնվել անձեռոցիկից, սեղանը
վայելուչ դրությամբ թողնել ուտելուց հետո :

Գաստիարակը պետք է հող տանի յուրաքանչյուր յերեխայի
սեղանի մոտ նստելու և ուտելու հարմարության մասին (մոտեց-
նել ակտեն, դասվաթը, մոտիկ դնել հացամանը) : Գաստիարակը
հետևում է յերեխաների ակուրատությանը ուտելու ժամանակ,
սովորեցնում է ղղուչ վարվել պատառաքաղի հետ :

Յերեխաները մասնակցում են նախաճաշի կամ ճաշի սե-
ղանը պատրաստելուն : Միջակ և մեծերի խմբերում հերթապա-
հություն է սահմանվում : Հարկավոր է, վոր յերեխաները կարո-
ղանա ճաշի և նախաճաշի սեղան պատրաստել, իմանան թե վոր
կողմից պետք է դրված լինի դդալը, անձեռոցիկը : Հարկավոր է
նաև սովորեցնել յերեխաներին՝ հող տանել սեղանին գրավիչ
տեսք տալու մասին :

Սեղանից վեր կենալիս յերեխաները մոտեցնում են աթոռները սեղանին, ահուրատ վայր են դնում անձեռնոցիկները:

Յերեխաները սովորում են ինքնուրույն հագնվել ու հանվել, ահուրատ վարվել հազուստի հետ, կարգին ծախել շորերն ու կախել իրենց տեղը:

Փոքր յերեխաները դեռ մեծերի (դաստիարակի, տեսաչխատակցի) դպրի ոգնության կարիք են զգում: Միաժամանակ չպետք է ընդդիմանալ յերեխայի ձգտումներին՝ ինքնուրույն առնել ինչ վոր կարող է («ինքս կարող եմ»), պետք է սովորեցնել ինքնուրույն հանել կամ հագնել գոնե հազուստի մի մասը: Այն միջոցին, յերբ մեծերն ոգնում են յերեխաների մի մասին հաղնըվել, դաստիարակն առաջարկում է մյուս յերեխաներին հաղնըվել ինքնուրույն կերպով: Սակայն դաստիարակը նրանց վրա ևս ուշադրութուն է դարձնում, հետևում է, վոր յերեխաները միանգամից չվերցնեն բոլոր իրերը, այլ՝ հետզհետե (որինակ, առաջ գուլպաները, անդրափարտիքը, և հետո մնացածը), ահուրատ վարվեն նրանց հետ, ճիշտ հագնեն:

Հանվելու ժամանակ, անհրաժեշտության դեպքում, պետք է նախ արձակել յերեխաների կոճակները և, մինչև մեծերը հանում են յերեխաների մի մասի շորերը, մյուսներն սկսում են իրենք հանել իրենց շորերը և դնել իրենց տեղը:

Միջակ և մեծերի խմբերում յերեխաներն աստիճանաբար ընտելանում են արդեն բոլորովին ինքնուրույն և արագ հագնըվելուն, կոճակելուն, կոշիկները կապելուն: Դաստիարակն ոգտադործում է յերեխաների ոգնութունը մեկ-մեկու, ցույց է տալիս և բացատրում յերեխային, թե ինչպես պետք է ճիշտ հագնվել, ինչպես տարբերել ավ վոտի կոշիկը ձախից, կարգին ծախել հազուստը: Յերբեմն մեծ յերեխաները հաղնվելու և հանվելու համար ևս զգում են մեծերի ոգնության կարիքը:

Հարկավոր է նույնպես սովորեցնել յերեխաներին՝ հետևելու իրենց հազուստի, կոշիկների մաքրությանն ու ահուրատությանը, սովորեցնել սանրվել, ոգտվել թաշկինակից, ահուրատ ոգտվել զուգարանից, հետևել անկողնու առողջապահությանը (չհաղնվել և չհանվել մահճակալի վրա, վեր կենալուց հետո հետզցել վերմակը, վորպեսզի անկողինն ոգախոխվի):

Դաստիարակը միշտ հոգ է տանում յերեխայի արտաքին տեսքի ահուրատության մասին, դաստիարակում է յերեխաների մեջ ուշադրութուն դեպի այդ (յերեխային առաջարկում է ստու-

գել, թե ամեն ինչ կարգին է իր մոտ, ոգտադործել հայելին, իր դոհունակությունն և հայտնում յերեխայի մաքուր և կանոնավոր զգեստի առթիվ և այլն):

Յերեխաները սովորում են նույնպես վարդ ու կանոն պահպանել իրենց իրեղենները և շրջապատի նկատմամբ՝ ահուրատ հավաքել խաղալիքները, նյութերը. դրքերն ու նկարները վերցրնել մաքուր ձեռքով; զբաղմունքների ժամանակ ահուրատ լինել, հաղտոտել բակն ու սենյակները, չենքը մտնելիս վոտքերը սրբել, թափ տալ հազուստի վրայի ձյունը:

Դաստիարակը միշտ հետևում է, վոր յերեխաները վորոչ կարգ ու կանոն պահպանեն իրենց խաղալիքներն ու նյութերը պահելու դործում և ոգնում է նրանց այդ բանում: Ժամանակ առ ժամանակ յերեխաները դաստիարակի հետ միասին կարգի յենբերում իրենց իրեղենները՝ լվանում են խաղալիքները, կարգի յենբերում ծաղիկները, պահարանները ետաժերկաները: Մեծ յերեխաներն այդ դործում համապատասխան առաջադրանքներ և հանձնարարություններ են ստանում:

Մեծ յերեխաների մեջ ավելի դիտակից վերաբերմունք է դաստիարակվում առողջապահական կանոնները. պահպանելու դործում: Յերեխաներին կարելի յե բացատրել ատամները փչացործում: Յերեխաներին կարելի յե բացատրել ատամները, ատամները, նալուց դերձ պահելու համար բերանը վողողելու, ատամները, մաքրելու նշանակութունը, ձեռքերի և յեղունդների մաքրության նշանակութունն առողջության համար, բացատրել, թե ինչու պետք է միայն լվացած մրդեր և բանջարեղեն ուտել, ինչու՞ հիվանդներին պետք է առանձնացնել առողջներից, ձեռք չտալ նրանց իրերին և այլն: Յերեխաների մեջ դեպի մաքրությունը դրական վերաբերմունք դաստիարակելու համար պետք է ոգտադործել համապատասխան նկարներ, դրքեր, վոտանավորներ, հանելուկներ, յերգեր, տիկնիկային թատրոնը և այլն, պատմել յերեխաներին պիոներները, կարմիրբանակայինները կենցաղի մասին լազերներում, Փիղկուլտուրիկների մասին:

Մեծ նշանակութուն ունի շրջադրության և այն առարկաների դրավիչ տեսքը, վորոնցից ոգտվում է յերեխան. յերեխային հաճելի յե լամել գեղեցիկ բաժակով, լվացվել հոտավետ սապոնով և այլն:

Կուլտուր - առողջապահական ունակությունների դաստիարակման անհրաժեշտ պայմանն է հանդիտանում յերեխային շրջա-

պատու մեծերի որինակը՝ նրանց ակուրատ տեսքը, ասողջապահ-
հական կանոնների պահպանումը նրանց կողմից:

Չափազանց կարևոր է որվա կայուն ուժովը խմբում և նրա
ճիշտ կազմակերպումը: Դա ապահովում է ասողջապահական
պահանջների ռեզուլյար և կրկնողական կատարումը, հնա-
րավորութունն է տալիս յերեխային կատարել այդ կանոնները
հանդիստ շրջապատի մեջ, հեշտացնում է դաստիարակի հա-
մար յուրաքանչյուր յերեխային հետևելու գործը:՞

Կուլտուր—ասողջապահական ունակութուններ դաստիա-
րակելու, և ընդհանրապես ամբողջ դաստիարակչական աշխատան-
քում, անհրաժեշտ է համբերատար և վաղաքաշահան վերաբեր-
մունք ունենալ դեպի յերեխան, խրախուսել նրա հաջողութուն-
ներն ու նվաճումները, դաստիարակել յերեխայի մեջ վստահու-
թյուն դեպի ավելի բավ և ակուրատ կատարելը սովորելու
ձգտումը:

Այդ գործում անհրաժեշտ է անհատական մոտեցում ունե-
նալ յերեխաների հանդեպ: Մի դեպքում հարկավոր է ոգնու-
թյուն, հիշեցում, հավանութուն, մյուս դեպքում՝ ավելի կատե-
գորիկ պահանջներ: Առանձին ուշադրություն պետք է նվիրել
մանկապարտեզը նոր ընդունված յերեխաներին:

ՅԵՐԵՆԱՅԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ֆիզիկական դաստիարակության ճիշտ դրվածքի պայման-
ներում մեծ տեղ պետք է հատկացված լինի յերեխայի շարժում-
ների զարգացմանը: Ասողջացնելով և ամրատանցնելով որդանիդ-
քը, Ֆիզիկուլտուրան միևնույն ժամանակ զարգացնում է և կա-
տարելագործում կրանքի մեջ անհրաժեշտ հիմնական շարժումնե-
րը (վաղք, քայլք, ցատկումներ) և նպաստում է յերեխաների
մեջ ակտիվության, համարձակության, ճարպիկության և արդա-
պահության դաստիարակմանը:

Ֆիզիկուլտուրայի հիմնական աշխատանքի ձևը շարժական
խաղերն են: Նրանք դարձապես են յերեխայի ճարպիկությունը,
հնարադիտությունը և իր հիմնական շարժումներին՝ քայլքին,
վաղքին, ցատկումներին տիրապետելու ունակությունը: Բացի
այդ, խաղերը բավ են կազմակերպում մանկական կողեկախի և
ունեն դաստիարակչական մեծ նշանակութուն:

Դաստիարակը խաղերը պետք է անցկացնի աշխույժ և ու-

րախ: Իր տեսքով, շարժումները ճիշտ և հմուտ կատարմամբ նա
որինակ է ծառայում յերեխաներին:

Ֆիզիկուլտուրայի աշխատանքի մյուս ձևը, դա Ֆիզիկուլտ
պարապմունքներն են: Հիմնականում նրանք կառուցված են խա-
ղի վրա: Այդ պարապմունքների մեջ են մտցվում նաև կարճատև
վարժությունները, վորոնք զարգացնում են քայլքը, վաղքը,
ցատկումները, ձևաքերի, վորքերի, իրանի շարժումները և այլն:

Ֆիզիկուլտուրայի պարապմունքներն անց են կացվում մոտա-
մոտեմ հետևյալ կերպ, նախ պետք է կազմակերպել մանկական
կողեկախի և յերեխաներին նախապատրաստել ասալիկա խաղի
կամ վարժությունների համար: Որինակ՝ 1—2 շարասյուններ կամ
չորջան կազմել, կարճատև քայլք նվազի կամ թմբկահարության
տակ վաղք 15—20 վայրկյան և այլն: Այդ շարժումները և շարակազ-
մությունները կարելի յե անցկացնել վարժությունների կամ
խաղերի ձևով, ինչպես «Զրոսանք» կամ «Իտիք քո դույնը» խա-
ղերն են:

Հետո անց են կացվում այնպիսի մարզանքներ, վորոնց նպա-
տակն է զարգացնել և շարժանել միանների առանձին խմբեր և
մշակել մարմնի ճիշտ կեցվածքը: Այս մարզանքների մեջ են
մտնում ձևաքերի, վորոնք, իրանի շարժումները:

Այդ վարժություններից հետո անց են կացվում կամ խաղ
(վաղքով, ցատկումներով, մաղլցումով), կամ պար: Պարապմուն-
քը վերջանում է քիչ շարժում պահանջող խաղով, կամ դանդաղ
քայլքով:

Պարապելը չէ, վոր պարապմունքն իր մեջ պարունակի բո-
լոր նշված տարրերը: Նա կարող է կազմված լինել մեկ—յերեքու-
տեսակ վարժություններից, նայած առաջադրված նպատակին,
յերեխաների հասակին և պարապմունքների տեղին, որինակ՝ նե-
րածական քայլք, չորջան կազմել և վաղքով խաղ «Վաղքի ք,
բունն ք»:

Փոքրերի խմբում պարապմունքը անց է կացվում 10—12
րոպե տեվողությաբ և համարյա բացառապես խաղի ձևով: Մի-
ջանի խմբում թույլատրվում է 15—20 րոպե տեվողությամբ պա-
րապմունքներ, իսկ մեծերի խմբում մինչև 20—25 րոպե: Պա-
րապմունքները կարելի յե անցկացնել կամ ամբողջ խմբի հետ,
կամ փոքրիկ խմբերով:

Բացի խաղերից և Ֆիզիկուլտուրայի պարապմունքներից, բո-
լոր խմբերում (բացի փոքրերի խմբից) ցանկալի յե անցկացնել

4—5 բուսակ տեղադրվածը առավելագույն մարմնամարդուկություն բաց ոգում կամ լավ ողախոխված և մաքուր շենքում: Աշխուժորեն անցկացված մարմնամարդուկությունը, դաստիարակի ճիշտ ցույց տալու դեպքում, լավ է կազմակերպում յերեսաներին ու նպաստում է նրանց մեջ վորոշակի և ճիշտ շարժումներ մշակելու գործին:

Առավոտյան մարմնամարդուկության մեջ են մտնում հետևյալ վարժուկությունները՝ ներածական քայլք, կազմել մի քանի շարասյուններ, ձեռքերի, վոտքերի, իրանի մարզանքներ, վազք շարասյունում (20—30 վայրկյան և հանդարտ քայլվածք:

Մեծ տեղ պետք է հատկացնել շարժական խաղերին ամենուրեքս գրոսանքների ժամանակ: Չմեռը կազմակերպում է բլրակներից սահնակներով սղալը, դահուկներով քայլելը: Դահուկները տըրվում են բարձր խմբի յերեսաներին 20—25 բուսակով:

Յերեսաներին տրամադրվում են ղեղակներ, ողեր, ցատկապարաններ, վորոնք ողտագործվում են ըստ նրանց ցակության: Սաղանյութերը հետզհետե փոխարինվում են նորերով՝ պլանի և յերեսաների պահանջների համեմատ: Դաստիարակը հետևում է, վոր յերեսաները չհոգնեն շարժումների մեծ քանակությունից, հատուկ ուշադրություն դարձնելով թույլ յերեսաներին:

Ճիղիլուտուրայի բոլոր պարապմունքները պահանջում են առղջապահական պայմանների առանձնապես խիստ պահպանումը: Միանգամայն պարտադիր են՝ մաքուր, լավ ողախոխած շենք, յերեսաների շարժումները չկաշկանդող հագուստ և վոտնաման: Ամառը բոլոր պարապմունքներն անց են կացվում բաց ոգում:

Փոքրերի խումբ.— Փոքրերի խմբի նկատմամբ հիմնական խնդիրն է ողնել յերեսային տիրապետելու քայլքին, վազքին, ցատկումներին, մաղլցելուն: 3—4 տարեկան յերեսան քայլքում և վազքում յերեսան դեռ այնքան էլ կայուն չէ, հաճախ կորցնում է հավասարակշռությունը, շուտ է վայր ընկնում: Անհրաժեշտ է հնարավորություն տալ յերեսաներին սովորական շրջադրություն մեջ վարժվել քայլքում և վազքում: Յերեսաների հետ դաստիարակն անց է կացնում մի շարք խաղեր, վորոնց ընթացքում յերեսաները վարժվում են վազելու և քայլելու մեջ փոքր խմբերով կամ ամբողջ խմբով՝ իրար հետևից, պահպանելով դաստիարակի ցույց տված ուղղությունը, վարժվում են վազքի

և քայլելու մեջ նաև ցրված խմբերով («Ձիախաղ», «Թուչնիկներ», «Կատուն ու մկները» և այլ խաղեր), սովորում են քայլել կամ վազել յերկար տախտակի վրայով, վորը դրված է դետնին կամ 10—15 սմ բարձրության վրա (տախտակի լայնությունը 25—15 սմ), ցատկել դետնին ընկած առարկաների վրայից, որինակ՝ քառանկյունի կամ կլոր դերանների վրայից, դետնին ընկած սանդուխքի աստիճաններով:

Սաղերն ու վարժուկությունները տարվա սկզբին ավելի լավ է անցկացնել փոքրաթիվ յերեսաների հետ, հետզհետե ներդրավելով ամբողջ խումբը: բարդուկությունները պետք է մտցնել աստիճանաբար, որինակ՝ քայլելու և վազքի դեպքում դաստիարակը սկզբում ողնում է յերեսաներին մեկ-մեկու հետևից շարքի կանգնել, ինքը քայլում է (կամ վազում) առաջից, ապա առաջից գնում է յերեսաներից մեկը: Ավելի ուշ տրվում են լրացուցիչ առաջադրություններ, որինակ՝ քայլել դրոշակներով և դաստիարակի աղբանջանով: Դրոշակները վեր բարձրացնել, լիջեցնել, դնել ուսին և այլն:

Բացի այդ, դաստիարակը խրախուսում է յերեսաների ինքնուրույն խաղերը, վորոնք զարգացնում են վազքը, քայլքը, հավասարակշռությունը, վորի համար տրվում են խաղեր շարժիչ-դլորաններով, հողմաղացներով, ինչպես նաև ողտագործվում են բնական սրայմանները՝ առվակն անցնելը, նեղ կամուրջով անցնելը, բլրակների վրա բարձրանալը, նեղ շավիղներով ման գալը և այլն:

Չմեռը պատրաստում են յերեսան ու տախակ ձեակույտեր (բարձրությունը 15—20 սմ, լայնությունը 40—30 սմ), վորոնց վրայով յերեսաները ման են գալիս:

Տարբեր ձևերի ցատկումը դեռևս սակավ մատչելի յեն այդ հասակում: Յերեսաները աստիճանաբար վարժվում են վեր ցատկել տեղում, ցատկել վորքրիկ բարձրությունից ցած (10—15 սմ), վորքրիկ տարածության վրա (10—15 սմ) զույգ վոտով առաջ ցատկել:

Ցատկումներն անց են կացվում հետևյալ խաղերում. «Նապաստակը հյուր դնաց», «Նապաստակներ», «Միտիկներ», «Բռնիք մոծակը» և այլն:

Փոքրիկ բարձրությունից ցած թռչելու և վորքրիկ տարածության վրայից թռչելու վարժուկություններն ավելի լավ է անցկացնել փոքրաթիվ յերեսաների հետ: Դաստիարակը կարող է յեղած նյութից (քառանկյունի բարակ դերաններ, շրջված ար-

կըզնւր) փոքրիկ բարձրութիւններ պատրաստել, վորոնց վրա յեն բարձրանում յերեխաներն ու աջտեղից թռչում ցած: Կամ դետնի վրա դուզահեռ ձգվում են յերկու լարեր, միմյանցից 10—15 սմ հեռավորութիւն վրա, և առաջարկում ե ցանկացողներին ցատկել «սովակի» վրայից:

Մագլցելու մեջ վարժեցնելու համար հարկավոր ե յերեխաներին տրամադրել ցանկապատից (բարձրութիւնը 1—1½ մետր), փոքրիկ ամբիոնի սանդուխքներից (վորը պետք ե ունենա կողքերին ամբացված ձողեր) ողովելու հնարավորութիւններ: Յերեխաները կարող են նույնպէս սողալով և մագլցելով շտնել պարանի տակ, (որինակ «Թուխսն ու ճուտիկը», «Թուչունների չուն» խաղերը): Պարանի բարձրութիւնը պետք ե լինի 10—60 սմ:

Յերեխաները մագլցում և իջնում են մեկ-մեկ կամ փոքրիկ խմբերով, ո՛վ ինչպէս կարող ե, դաստիարակի հակողութիւն տակ: Կարիք չկա այդ հասակում շարժումներին ճշտութիւնը հետապնդել, սակայն պետք ե սովորեցնել յերեխաներին իջնել սանդուխքի կողքերի ձողերով մինչև վերջին ծայրը, առանց ցած թռչելու կամ ձեռքերով կախվելու:

Փոքր խմբի յերեխաների հետ կարելի յե անցկացնել մի քանի խաղեր զնդակով, որինակ՝ դլորել մեծ գնդակ (20—15 սմ տրամագծով) դաստիարակից դեպի յերեխաները և ընդհակառակը, նաև յերեխաների միջև, դլորելով անցկացնել գնդակը առարկաների միջոցով (որինակ, նստարաններից, ձողիկներից, կառուցողական նյութերից և այլ առարկաներից կառուցված դռներից), 1½ մետրը հեռավորութիւնից խփել գնդակը դետնին կամ նետել առաջ և վազել յետևից, բռնել դաստիարակի նետած գնդակը և յետ նետել այն (տարածութիւնը 1—1½ մետր):

Գնդակով վարժութիւններն ու խաղերն ավելի լավ ե անցկացնել յերեխաների փոքրիկ խմբերի հետ, վորպէսզի յերեխաները յերկար հերթի չսպասեն:

Գնդակներ պետք ե լինեն յուրաքանչյուր խմբում, վորպէսզի յերեխաներն ազատ կարողանան նրանցով խաղալ: Դաստիարակը խաղում ե յերեխաների հետ, ցույց ե տալիս, թե ինչպէս ավելի հարմար ե նետել և բռնել կամ դլորել գնդակը:

Խաղերում և պարերում կարելի յե տալ ձեռքերի, վորքերի, իրանի վարժութիւններ, որինակ, բարձրացնել ձեռքերը դետի կողմերը և ցած իջնել («Թուչնիկներ»), շարժել արմուկներից ծալած ձեռքերը («Գնացք»), վորաները բարձր ու ցած անել

(«Զխախաղ»), վորաները հերթով շարժել դետի առաջ՝ պարելու ժամանակ, ակոսին նստած տեղից բարձրացնել հատակից փոքրիկ դրոշակը և թափահարել այն դիտակները:

Խաղերում յերեխաները սովորում են նույնպէս շարք կանգնել մեկ-մեկու հետևից «ո՛վ ո՛ւմ հետևից ուզի» և քայլել միմյանց հետևից, հիշել իր տեղը և այն դետնել քայլելուց և վազքից հետո, դաստիարակի ողնութիւնը շրջան կազմել:

Շրջան կազմելն անց ե կացվում, որինակ, հետևյալ խաղերում. «Փուշիկը», «Հանձնիր գնդակը», «Պաշտանիւր առարկան». Միմյանց հետևից քայլելն անց ե կացվում «Գնացք», «Տրամվայ» խաղերում: Իր տեղը դետնելը պահանջվում ե մի քանի խաղերում, ինչպէս «Գալի քո տունը» և այլն:

Միջակ խումբ.— Միջակ խմբի յերեխաները նույնպէս վարժվում են քայլելու, վազքի, ցատկելու, մագլցելու, գնդակ նետելու և բռնելու մեջ առաջնայնպէս շարժական խաղերում («Կատուն ու մկները», «Հավերն ու արջողաղը», «Թուչնիկներ», «Գնացք» և այլն), բայց շարժումները բարդանում են՝ ավելի մեծ տարածութիւն ե տրվում վազքի համար, վազքի մեջ մտցվում ե մեկ-մեկու բռնելը, խաղախմբերի բաժանելը և այլն. ավելացվում են սանձ, ավելի նեղ տախտակներ և այլն: Չմեռը յերեխաները ման են դալիս յերկար ու նեղ ձնակույտերի վրայով, սղղում են փոքրիկ սառուցե շափիղներով (1—1½ մետր յերկարութիւն), բացի այդ, դաստիարակն ավելի մեծ ուշադրութիւն ե դարձնում շարժումների ճշտութիւնը: Այս խմբում անց են կացվում նաև հետուկ վարժութիւններ:

Մարդիկով քայլելու և վազքի մեջ, յերեխաները սովորում են՝ քայլել ուղիղ, առանց դլուխը կախելու, որինակ, «Կարմիր բանակայիններ» խաղում, քայլել տեղում և դաստիարակի տված նշանով առաջ շարժվել, վազել մեկ-մեկու յետևից սյունաշարով, թեթև, առանց աղմուկի վազել յերկուսով («Զիւրը սանձիկներով» խաղում), բռնել մեկ-մեկու՝ վազք պարունակող խաղերում, ման դալ դետնին դրված կամ 10—15 սմ բարձրութիւնը դետնի վրայով (25—20 սմ տրամագծով), ման դալ դետնից 20—30 սմ բարձրութիւն վրա դրված տախտակի վրայով (15—10 սմ լայնութիւն):

Վազքի ժամանակ բերանը փակ պետք ե լինի, պետք ե սովորեցնել յերեխաներին չնչել քթով:

Ցատկումները յերեխաների շարժումների սիրած տեսակն են:

Այդ խմբի յերեխաները ցատկում են վոքը բարձրութիւնից (20—25 սմ), թեթև վայրեջքով (թաթերի վրա): Դրա համար կարելի յե ոգտազործել հողաթմբերն ու ձնակույտերը, որինակ, «Միտիկն ու կատուն» և այլ խաղերում, վեր են ցատկում վորեն առայկայի հասնելու համար (որինակ, «Իջեցրու դանդակը»), ցատկում են կանգնած տեղից դեպի առաջ, դետնից պոկվելով յերկու վտտների հրումով մի անդամից (տարածութիւն 40—60 սմ) և բարձրութեան ցատկում (15—20 սմ բարձրութեան) պարանի վրայից:

Մագլցումն անց է կացվում ինչպես յերեխաների ազատ խաղերում, նույնպես և կանոններով խաղերում, որինակ «Ազատվիր դայից», «Կատվի ձագերն ու շան լակոտները» և այլն: Յերեխաները սովորում են բարձրանալ $1\frac{1}{2}$, $1\frac{1}{4}$ մետր բարձրութեան ցանկապատի վրա և ցած իջնել, անցնել ցանկապատի ամենացածր ձողի և 50—40 սմ բարձրութեան վրա ձգված պարանի տակով:

Գնդակը յերեխաների սիրած խաղալիքներից մեկն է: Յերեխաներն ոգտվում են նրանից ազատորեն իրենց խաղերի մեջ և, բացի այդ, դաստիարակը յերեխաների հետ դնդակով մի շարք խաղեր և վարժութիւններ է անց կացնում, որինակ, դուրել գնդակը կամ դունդը մի շարք առարկաների՝ կեղլիի, խորանարդների կպցնելու համար: Գնդակը նետել դաստիարակից յերեխային և ընդհակառակը, ավեւցնելով տարածութիւնը մինչև $1\frac{1}{4}$ —2 մետր և ավելի: Գետնին խփել մեծ գնդակը և բռնել այն յերկու ձեռքով:

Գնդակը և այլ առարկաներ նետելու մեջ վարժվելու համար յերեխաները կարող են աջ ու ձախ ձեռքով հետուն նետել ավազով կամ սիսեռով վեքը պարկեր (150—200 դրամ ծանրութեամբ), սոճու կոններ, գնդակը խփել խոշոր նշանի (մետրաչափ վահանի) 1—2 մետր հեռավորութիւնից աջ ձեռքով և 1— $1\frac{1}{2}$ մետր՝ ձախ ձեռքով: Գնդակով նշանին խփելու ժամանակ դաստիարակն ուշադրութիւն է դարձնում յերեխայի ճիշտ կեցվածքին:

Գնդակը դուրելու համար պետք է ընտրել հարթ մակերես, առարկաները դասավորել միմյանցից 5—10 սմ հեռավորութեան վրա:

Այդ հասակում յերեխան համեմատաբար ավելի լայ և տի-

րապետում իր շարժումներին, սակայն, շարժումները խիստ ճշտութիւնն նրանից դեռևս չի կարելի պահանջել: Այդ շարժումները ճշտելու համար տրվում են ձեռքերի, վոտքերի և իրախաղերում, առավոտվա մարմնամարզութեան ժամանակ և Ֆիզկուլտուրայի պարապմունքներին:

Վարժութիւնները տրվում են պատկերավոր ձևով՝ յերեխաները պատկերում են գնացքի, թռչունի շարժումը (ձեռքերի շարժում), ավտոյի շինը ոգ լցնելու շարժումը (իրանը կոացնելը) և այլն:

Յերեխաները վարժվում են վոչ բարդ շարքեր կազմելու և վերակազմելու մեջ՝ քայլել սյունաշարով ուղիղ իրար հետևից, կարողանալ քայլել վորպես խաղալար, կանդ առնել ըստ աղբանշանի, շուռ դալ այս ու այն կողմ սյունաշարում կանգնած տեղում, սյունաշարը վերածել գուլգերի:

Պետք է սովորեցնել յերեխաներին սյունաշարով քայլելու ժամանակ լավագույն կերպով ոգտազործել խաղի հրապարակը՝ քայլել հրապարակի յեղրերով, սենյակների պատերի յերկայնքով: Ստաղավարը նշանակվում է դաստիարակի կողմից:

Այս ու այն կողմ դառնալը սյունաշարում միջակ խմբի յերեխաների հետ պետք է կատարել վոչ թե քայլելու ժամանակ, այլ կանգնած տեղում: Դաստիարակի ցուցումով յերեխաները դառնում են այնպես, վոր ամենավերջում կանգնած յերեխան դառնում է խաղալար:

Ձույգ կանգնելը հետզհետե բարդացվում է: Սկզբներում յերեխաները գուլգ են կանգնում, ո՛վ ո՛ւմ հետ ուզում է, հետո պետք է սովորեն սյունաշարից գուլգեր կազմել կողքին կանգնած ընկերով հետ:

Այդ բոլոր վարժութիւնները կարելի յե անցկացնել խաղի ձևով «դրոսանք», «Գալիք քո գուլգը» և այլն:

Մեծերի խումբը.— Մեծերի խմբում պահանջները շարժումների կատարման նկատմամբ ավելանում են. այդ պատճառով անհրաժեշտ է յերբեմն անցկացնել վարժութիւններ ըստ առանձին տեսակի շարժումների:

Քայլք, վազք, հավասարակշռութիւն.— Քայլել կոկոխելով աղղութիւնը դաստիարակի ցուցումներով:

Քայլել շրջանի շուրջը:

Գայլել վոտաթաթերի վրա:
Բռնել մեկ-մեկու՝ վազք. պարունակող խաղերում (որինակ՝ «Մրցավազք» խաղում):

Գայլել դերանի կամ 10 սմ լայնութիւն ունեցող և 30—40 սմ բարձրութեան վրա ուղիղ կամ թեք դրված տախտակի վրայով (վորի մի ծայրը բարձրացրած է 20—30 սմ):

Գայլքի ժամանակ դաստիարակին ուշադրութիւն է դարձնում, վոր յերեխաներն ուղիղ պահեն իրենց մեջքը, նայեն ուղիղ դեպի առաջ, չկռայտեն դուրսերը, ազատ շարժեն ձեռքերը և ազատ փոխեն վոտքերը:

Հավասարակշռութեան վարժութիւններն անց են կացվում առավելապէս «Գնացք», «Ձրոսանք» և այլ խաղերում:

Այս խմբում ուշադրութիւն է դարձվում քայլքի վորոշակիութեան, վազքի թեթևութեան վրա: Հավասարակշռութեան լավ վարժութիւն է համարվում դահուկներով ման դալը, սառած շափիղներով սղդալը:

Ցատկումներ.— Ցատկումն է մի վոտքի վրա: Ցատկել բարձրութիւնից, թափ առնելով 30—40 սմ. բարձրութեան պարանի վրայից:

Ցատկել յերկարութիւն 60—70 սմ տարածութեամբ (դետնից պոկվելով յերկու վոտքով մի անգամից):

Ցատկել կարճ ցատկապարանով:

Ցատկումի բոլոր տեսակներում դաստիարակը պետք է հետեւի վոր վայրէջքը յերեխաները թեթև կատարեն, այսինքն ցատկումից հետո վայրէջքի ժամանակ վոտները մի վորք ծալեն ծնկներում և իջնեն վոտքերի մասների վրա և վոչ թե ամբողջ թաթի վրա: Ցատկումները կարելի չէ անցկացնել այնպիսի խաղերում, ինչպէս «Գայլ վոտում», «Թիթեռներ վորսալը», «Առվակը», «Աղվեսը հավաքում», նաև մարզանքների ձեռով, որին նակ. յերեխաները ցատկում են մեկը մյուսի հետևից մեկ-մեկ: Պարանի վրայից ցատկելու դեպքում դաստիարակը պետք է հետեւի, վոր յերեխաները չափից դուրս շատ ցատկումներ չկատարեն: Կարելի է յերեխաներին 5—6 անգամից ավելի լայնութեան և յերկարութեան ցատկում տալ:

Մազցում.— Մազցել և իջնել $1\frac{1}{4}$ մ: բարձրութեան ունեցող ցանկապատից:

Մազցել ցանկապատի արանքներից (40—30 սմ լայնութեան): Պետք է ուշադրութիւն դարձնել շարժումների ներդաշնան-

կութեանը և մազցման պրիոմների պահպանմանը, վորպեսզի յերեխաները կես ճանապարհից ցած չթռչնեն, ձեռքերով չկախվեն: Կարելի չէ ոգտագործել, որինակ, հետևյալ խաղերը. «Հըրդեհաչէջները», «Կապիկներ վորսալը», «Թռչունների չուն»:

Մետելը.— Վեր նետել դնդակն ու բռնել: Գնդակը մեկ-մեկու նետել ու բռնել (տարածութիւնը $1\frac{1}{2}$ —2 մետր): Նետել հետու աջ և ձախ ձեռքով 200—250 դրամ ծանրութեամբ տուրակներ կամ ձնադնդեր՝ 4—8 մետր տարածութեան վրա:

Մալադով լի տուրակներով, դնդակներով, ձնադնդերով խփել նշանին (1 մետր տրամագծով) աջ ձեռքով 2—2½ մետր, իսկ ձախ ձեռքով $1\frac{1}{2}$ —2 մետր հեռավորութեամբ:

Գնդակը և այլ խաղալիքները նետելու և բռնելու ժամանակ այս խմբում պետք է ավելի ուշադրութիւն դարձնել մարմնի ճիշտ կեցվածքի վրա, նաև նետման ճարպիկութեան, դիպուկութեան վրա:

Նետելը պետք է սկսել հետու նետելուց, վորովհետև այն ավելի հեշտ է, քան թե խփելը:

Նետելու համար տուրակները պտորաստվում են ամուր կտորից և լցվում են սիսեռով կամ ավազով: Հետու նետելը անց է կացվում փոքրիկ խմբերով, հերթով: Այդ վարժութիւնները կարելի չէ անցկացնել նաև խաղերում, որինակ՝ «Պիլի և վայր պցի դնդակը», «Ճիշտ նշան բռնիր», «Գաղանները և վորսորդները» և այլն:

Անհրաժեշտ է յերեխաներին ցույց տալ, թե ինչպէս պետք է նշանին խփել, ինչպէս ճիշտ թափահարել ձեռքը և թեքել իրանը:

Ձեռքերի, վոտքերի և իրանի վարժութիւններ.— Բացի այն վարժութիւններից, վորոնք ցույց են տրված առավոտվա մարմնամարզութեան համար, կարելի չէ անցկացնել նաև մի շարք այլ վարժութիւններ ինչպէս առարկաներով, նույնպէս և առանց առարկաների: Ձեռքերը վեր բարձրացնել և իջեցնել: Հատակին պոռկած բարձրանալ և պոռկել, բռնելով պարանից: Վեր բարձրացնել ողբ, նայել նրան: Մտնել ողբ մեջ և դուրս դալ:

Իջեցնել դեմնի վրա վորքե առարկա՝ փոքրիկ դրոշակ, պարան, ձեռնափայտ և այլն և կրկին բարձրացնել այն, աշխատելով այդ անել առանց ծնկները ծալելու:

Դաստիարակը նախ ցույց է տալիս շարժումը, ապա նույն

նը կատարում է յերեխաների հետ միասին, ուշադրութիւնը դարձնելով վարժութիւնների կատարման ճշտութեան վրա:

Շարուն և շարափախութեան. — Շարվել մի քանի սյունաշարով: Քայլել տեղում, վորից հետո անցնել առաջընթաց քայլերի: Շարափոխել սյունաշարը դեպքերի և ընդհակառակը՝ դուրսերից կազմել մեկ սյունաշար՝ տեղում կամ քայլերի ժամանակ:

Դառնալ աջ, ձախ կամ հետ սյունաշարով տեղում և քայլելիս:

Սյունաշարով քայլելու ժամանակ յերեխաները բաժանվում են 6—8 հոգուց կազմված սյունաշարերի, սյունաշարերի առաջատարները պետք է միշտ փոխվեն: Մի կողմ կամ հետ դառնալու համար ցույց է տրվում այն առարկան, վորի կողմը պետք է դառնան, որինակ՝ «դարձեք աջ՝ դեպի պատը» կամ «դարձեք հետ՝ դեպի լուսամուտը»:

ՅՈՒՅ ԱՍՐԵԿԱՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Քայլք, վազք, հավասարակշռութեան. — Վորոշակի քայլք ձեռքերի և վտարների շարժումների ներդաշնակութամբ:

Քայլք վտարների թափերի վրա առանց ծնկները ծակելու: Քայլել շփեղական նստարանի ձողի վրայով, հորիզոնական սանդուղքով՝ դրված 20—40 սմ բարձրութեան վրա:

Արագ վազք:

Վազք դուրսերով, յեռյակներով:

Վազք ընդհատումով:

Կերտվում են խաղեր մրցակցութեան տարրերով՝ արագութեան վազք, ինչպես որինակ՝ «Ո՛վ շուտ ողակից անցնելով կհասնի դրոշակին», «Փոխիր դրոշակը» խաղերում: Բարդանում են միմյանց բռնելու պրիտներն ու միջոցները, որինակ՝ մեկին բռնում են յերկուսով, յերեքով, փոքր խմբակներով և ամբողջ խմբով, ինչպես որինակ՝ «Յեղջերու վորսալը», «Գաղանին շրջապատիր» և այլ խաղերում:

Ցատկումներ. — Բարձրութեան ցատկումներ (40—50 սմ) պարանի վրայից վազքի թափով: Յերկարութեան ցատկումներ՝ տեղից (50—70 սմ), դեռնից պոկվելով մի վտարի հպումով:

Կանդնած տեղում ցատկել պտտվող յերկար պարանի վրայից:

Խաղեր ցատկումի տարբեր տեսակներով՝ «Նապաստակները

բանջարանոցում», «Աղվեսը հավաքնում», «Գալլը փոսում», «Գորտերն ու ձկնկուլը» և այլն:

Դաստիարակը յերեխաների ուշադրութիւնն է դարձնում շարժումների վորակի վրա:

Գնդակ խփելը, բռնելն ու նետելը. — Խփել փոքրիկ գնդակը (6—8 սմ. տրամագծով) հատակին և բռնել մեկ, յերկու ձեռքով:

Դեպի վեր նետել մեծ, միջակ և փոքր գնդակը և բռնել նրան յերկու ձեռքով:

Մեկ-մեկու նետել գնդակը՝ շրջան կամ յերկու շարք կազմած (21/2—3 մետր հեռավորութեամբ):

Նետել գնդակը ցանցի մյուս կողմը:

Նետել 200—250 դրամ ծանրութիւն ունեցող տոպրակները 6—10 մետր հեռավորութեամբ աջ ձեռքով և 2—6 մետր՝ ձախ ձեռքով:

Յերբ յերեխաները կսովորեն գնդակով կամ պարկով նշանին խփել, կարող են անցկացվել այնպիսի խաղեր, ինչպես որինակ՝ «Լալ նշան բռնիր», «Գաղաններն ու վորսորդը», «Փախիր շրջանից», «Բռնել խաղ գնդակով»:

Մագլցում. — Վարժութիւնները նույն են, ինչ վոր մեծերի խմբում, բայց մտցվում են բարդութիւններ, որինակ՝ բարձրանալ աշտարակ (վիշկա)՝ վայր բերել դրոշակը, ցած գցել այն և իջնել:

Մագլցումը կարելի յե անցկացնել վոչ միայն խաղերում, այլև վարժութիւնների ձևով, վորովհետև հաճախ տարվելով խաղի բովանդակութեամբ, յերեխաներն ուշադրութիւնն չեն դարձնում կատարման վորակին:

Խաղեր՝ «Կատվի ձագերն ու շան լակոտները», «Թռչունների չփելը», «Մեղուններն ու արջի քոթոթները» և այլն:

Ձեռքերի, վտակների և իրանի վարժաբարձումներ. — Առավորական մարմնամարզութիւնից բացի կարելի յե անցկացնել հետեւյալ ինչպես իրերով, նույնպես և առանց իրերի վարժութիւնները, ինչպես իրերով, նույնպես և առանց իրերի վարժութիւնները, որինակ՝ վարժութիւն դրոշակներով, պարանով, ողով, փայտով, փայտը բարձրացնել վեր ու իջնցնել ցած (նստած և կանգնած վիճակում), փայտը ուսերի հետև պահած մի քանի անգամ նած վիճակում), փայտը ուսերի հետև պահած մի քանի անգամ նած վիճակում, փայտը ուսերի հետև պահած մի քանի անգամ նած վիճակում, փայտը ուսերի հետև պահած մի քանի անգամ նած վիճակում, փայտը ուսերի հետև պահած մի քանի անգամ նած վիճակում, փայտը ուսերի հետև պահած մի քանի անգամ նած վիճակում:

Շարունակներ և շարափոխութիւններ.— Շարունակ մեկ կամ
յերկու տողանոց դաստիարակի ցույց տված տեղում քայլերուց
կամ վաղերուց հետո :

Դառնալ աջ, ձախ ու հետ, առանց նշելու հարկավոր ուղ-
ղությամբ գտնվող առարկաները :

Զուգերից վերահարմել շրջան :

Քայլել շրջանի շուրջը առանց իրար ձեռքից բռնելու :

Քայլել հետադարձ (առաջատարը վորոչ անդից ակտում է
չարժվել հակառակ ուղղությամբ) :

Քայլել ռճաձև, առարկաների միջով :

Բացի սրանցից կրկնվում են նաև նախորդ խմբերի վար-
ժութիւնները :

Մի տողան կազմել շարասյուններից մեկ-մեկ դառնալու մի-
ջոցով :

Քայլել դահուկներով (6—7 տարեկան) :

Դաստիարակը ցուցումներ է տալիս՝ ինչպես հանել դա-
հուկները, քայլելիս հետևում է, վոր յերեխաները դահուկները
ճիշտ դնեն (իրար դուրահետ) :

Դաստիարակը բոլոր ցուցումների հետ միաժամանակ ինքը
ցույց է տալիս դահուկներով քայլելու ձևերը (քայլ, վորքերի և
ձեռքերի շարժում քայլելու ժամանակ, տեղում և ընթացքում
հետ դառնալ) :

ՈԳՏՎԵԼ «Նախադպրոցական խաղեր» ձեռնարկից— Պետա-
կան հրատարակչութիւն 1939 թ. :

ԳԼՈՒԽ II

Խ Ա Ղ

Նախադպրոցական յերեխայի վրանքում ամենամեծ տեղը
քուտում է խաղը : Խաղի դաստիարակչական նշանակութիւնը
հսկայական է :

Խաղը հրատարակում և դրավում է յերեխային : Զանազան
խաղերի ընթացքում դաստիարակը զարգացնում է յերեխաների
համարձակութիւնը, ճարտարամտութիւնը, տոկունութիւնը,
անբը մեր հայրենիքի և նրա յավազույն մարդկանց հանդեպ :
Խաղի ընթացքում զարգանում են յերեխաների հետաքրքրու-
թիւնը, հարցասիրութիւնը, հիշողութիւնը, ուշադրութիւնը,
լեզվական ունակութիւնները : Խաղը նպաստում է յերեխայի
բարձակողմանի զարգացմանը :

Մեծ է խաղի դերը յերեւակայութեան զարգացման դործում :

Արտացոլելով շրջապատող կյանքի սպաւորութիւնները՝
յերեխաները խաղի մեջ հնարում են շատ հետաքրքրական մո-
տեմտներ : Որինակ՝ պետք է տիկնիկների համար կազմակերպել
ուրախ «կինո», ինչպես «խակական պարաշյուտիստ»՝ թռչել «սա-
վառնակից» կամ «սառույցների վրայից վերցնել պապանինա-
կաններին» : Այդպիսի խաղերը զարգացնում են յերեխաների
ստեղծագործական ձեռներեցութիւնը, խելամտութիւնը, ինք-
նուրույնութիւնը :

Յերեխաները սովորում են համերայն խաղալ, միատեղ
գտնել դժվարութիւններից դուրս գալու յելքը, տղանք միմյանց :

Խաղի մեջ իրենց բուռն արտահայտութիւնն են գտնում
նույնպես և մանկական կենսութիւնները, աշխուժութիւնը,
արագաշարժութիւնը, վոր շատ կարեւոր է յերեխայի առողջու-
թեան, նրա Ֆիզիկական զարգացման համար :

Յերեխաների խաղերը պահանջում են դաստիարակի հսկո-
ղութիւնն ու ղեկավարութիւնը : Խաղի մեջ լրիվ և ցայտուն

կերպով դրսևորվում են յերեսաների հետաքրքրութունները, նրանց ապրումները, զարգացման մակարդակը: Խաղեր դիտելը ողնում է դաստիարակին՝ ճանաչել յուրաքանչյուր յերեսայի, դոնեկ նրա նկատմամբ ճիշտ մոտեցում:

Յերեսաների խաղերը շատ բազմազան են: Մանկապարտեզում մեծ տեղ են դրավում այն խաղերը, վորոնք ստեղծում են իրենք՝ յերեսաները (ստեղծագործական խաղեր): Բացի դրանից անց են կացվում կանոններով հետաքրքրական շատ խաղեր: Առաջին և յերկրորդ տեսակի խաղերը սերտ կապված են միմյանց հետ:

Ստեղծագործական խաղերում յերեսաները պատկերում են այն, ինչ վոր տեսնում են, ինչի մասին նրանց համար կարդում ու պատմում են, ինչը դրավում է նրանց ուշադրութունը, շարժում հետաքրքրութունը: Նրանք «յերկաթուղի» յեն կառուցում, խնամում են իրենց «կոլտնտեսային նախիրը», «թռչում են ողանավով», զբաղվում են իրենց «յերեսաների» տիկնիկների հետ և այլն:

Ստեղծագործական խաղերի մեջ առանձնապես ցայտուն կերպով և զարգանում յերեսաների Փանտաղիան: Յերեսաները վոչ թե ընդորինակում են կյանքը, այլ պատկերում են այն ըստ իրենց հասկացողության, խաղի մեջ շատ հնարքներ են մտցնում և իրենց մաս յերեսակալության շնորհիվ հեշտությամբ մտնում են տարբեր դեբերի մեջ, հնարում են իրենց խաղալիքների ամենաբազմազան վերադում: Աթոռին նստելով, յերեսան կարող է իրեն յերեսակալ յերբեմն վորպես շոֆեր՝ ավտոմեքենայի վրա, յերբեմն էլ ձի հեծած հեծելագորային: Միևնույն ձողը կարող է ծառայել և՛ վորպես ձի, և՛ վորպես հրացան, և՛ վորպես ձուկ վորսալու կարթ:

Յերբեմն խաղերը լինում են առանց սյուժետի, որինակ՝ յերեսաները վազում, թռչկոտում են, գնդակներով, դլորաններով խաղում են, նետեր են արձակում, աշտարակ, մասրոյոչկաներ են դասավորում, կառուցում, խաղալիքներով դվարձանում, միաժամանակ կատարում ու ծիծաղում:

Խաղերի ղեկավարության մեջ չպետք է լինեն մեթոդական մոտեցման ստանդարտ ձևեր: Յերեսաներին դիտելը, նրանց խաղերի ուշադիր ուսումնասիրութունը ողնում է դաստիարակին՝

ավելի լավ ղեկավարել յերեսաների խաղերը, լրիվ պահպանելով խաղերի ազատ, վոչ հարկադիր բնույթը:

Խաղերի բովանդակութունը, նրանց բազմազանութունը կախված է դաստիարակչական աշխատանքից, յերեսաների ըստացած տպավորութուններից: Դաստիարակը կազմակերպում է շրջապատի կյանքի դիտումը, յերեսաներին պատմում է հեքիաթներ, պատմվածքներ, ցույց է տալիս գեղարվեստական իլյուստրացիաներ և այլն ու, այսպիսով, աղբում է յերեսաների խաղերի բովանդակության և բազմազանության վրա: Դաստիարակը պաշտպանում է և զարգացնում հետաքրքրական և իրենց բովանդակությամբ դաստիարակչական արժեք ունեցող խաղերի սյուժետները: Նա ամեն կերպ խրախուսում է յերեսաների ձեռներեցութունը, մտացածլինը, Փանտաղիան, ողնում է իրականացնել նրանց մտահղացումները: Յերբեմն պահանջվում է յերեսային հիշեցնել այն մասին, ինչ վոր նա տեսել է ու լսել, դարկ տալ՝ նրա յերեսակալությանը, տալ խաղերի ծավալման համար անհրաժեշտ ուրիշ նոր խաղալիքներ, առարկաներ և այլն: Յերբեմն նույն բովանդակությամբ խաղը շարունակվում է մի քանի որ, դաստիարակն ողնում է զարգացնել խաղը՝ դարձնելով այն հետզհետե ավելի հետաքրքրական:

Յերբեմն, դժվարութուններից յեղ չզտնելու պատճառով, հետաքրքրական խաղը ձախողվում է: Յերեսաների հիասթափության առաջն առնելու համար դաստիարակը յերբեմն ինքն է կատարում յերեսաների մտահղացումը, ինչպես որինակ, մի վորևե բան բարձր տեղից կախել կամ լավ ամրացնել, մի վորևե իր պատրաստել և այլն: Յերբեմն դաստիարակն ինքն էլ մասնակից է դառնում խաղին, սակայն ամենևին հարկավոր չե միշտ խաղալ յերեսաների հետ:

Դաստիարակը վնասակար խաղեր չպետք է թույլ տա՝ որինակ՝ «սպիտակներ», «Փալիստներ», «հարբեցողներ» և այլն: Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է յերեսաներին ցույց տալ իր բացատրական վերաբերմունքը խաղերում պատկերվող այդ մարդկանց և յերևույթների նկատմամբ ու խաղին տալ ճիշտ օւղղութուն: Յերբեմն հարկավոր է կիրառել նաև բացարձակ

արգելք, բացառելով յերեխաներին, թե ի՞նչու չի կարելի արգելախաղալ:

Վորոչ խաղեր կապված են շինանյութերից, ավաղից, ճյուղից պատրաստվող կառուցումների հետ: Շատ կարևոր և անսահման շինքերը պահպանելու հնարավորությունները, վորպեսզի յերեխաները կարողանան կատարելագործել նրանց և իրենց խաղալիքներով խաղալ նրանց մեջ: Դրա համար սենյակում և բակում պետք է հատկացնել հարմար տեղ, վորտեղ կարելի լինի թողնել յերեխաների կառուցումները, վորպեսզի նրանք կարողանան վերադառնալ ընդհատված խաղին:

Յերբեմն դաստիարակը կառուցման թեմա յե առաջարկում յերեխաներին, ոգնում է իր խորհուրդներով կամ ցույց և տալիս կառուցման վորոչ ձևեր: Դաստիարակը զարգացնում է յերեխաների գեղարվեստական ճաշակը, շինքը գեղեցիկ շինելու նրանց ձգտումը:

Խաղը յերեխաների մեջ մտերմութուն, ընկերական հարաբերութուններ, կազմակերպվածութուն զարգացնելու լավագույն միջոցն է:

Յերեխաները սովորաբար խաղի ժամանակ միանում են մի քանի հոգով, յերբեմն ել խաղում են ամբողջ խմբով: Նրանք խաղը կազմակերպում են ինքնուրույն կերպով, բայց վորոչ գեղեցիկում հարկավոր է ոգնել նրանց՝ համաձայնության դարձ մի մյուսնց հետ, ներգրավել խաղի մեջ այս կամ այն յերեխային, դանել նրա համար վորևե սկսելով դեր: Յերբեմն դաստիարակը խաղին մասնակից է դառնում նրա համար, վորպեսզի միավորի յերեխաներին, ոգնի նրանց կազմակերպելուն, խաղի մեջ մտցնի վորևե նոր, հետաքրքիր բան: Դաստիարակը նպաստում է կոլեկտիվ խաղեր կազմակերպելուն. նա կարող է ընտրել այնպիսի խաղալիքներ, վորոնցով միասին խաղալն ավելի հաճելի յե, քան մենակ խաղալը, կանխում և հարթում է հնարավոր վեճերն ու թյուրիմացութունները, վորոնք կարող են ծագել խաղի ժամանակ. որինակ, յերեխաները «ճանապարհորդում են գնացքով», իսկ Միշան չի ուզում ճանապարհ տալ, խանգարում է խաղը, դաստիարակն առաջարկում և կանգնեցնել «գնացքը» և Միշայից տեղեկանալ, թե չի՞ փչացել արդյոք ճանապարհը. Միշան դառնում է յեկաթուղային պահակ և վոչ վորքի չի խանգարում:

Դաստիարակից պակաս ուշադրութուն չեն պահանջում նաև անհատական խաղերը: որինակ, յերեխան ինքն և դասավորում ձողիկները կամ մողախկան կամ կազմավորում շողեկառքը: Անհատական խաղերն ոգնում են դաստիարակին՝ լավ ճանաչել ամեն մի յերեխայի, դրսևորել և զարգացնել նրա հետաքրքրութունը, հակումները, յերեխակալութունը, նախաձեռնութունը:

Մանկապարտեզում պետք է լինեն բազմատեսակ խաղալիքներ և խաղանյութեր:

Խոշոր կառուցողական նյութեր (սենյակի և բակի), սեղանի կառուցողական նյութեր, կոնստրուկտորներ:

Սյուժետային խաղալիքներ, տիկնիկներ, տիկնիկային կահույք և ամանեղեն, տիկնիկային թատրոնի խաղալիքներ, կենդանիներ, ավտոներ, դնացքներ և այլն, ինչպես նաև զբեստներ՝ կարմիր բանակայինի սաղավաթա, կոնզուկտորի պայուսակ և այլն:

Բացի առանձին խաղալիքներից, հարկավոր են նաև խաղալիքների ժողովածուներ, որինակ, «Մանկապարտեզ», «Կենդանաբանական այգի», «Թուչնանոց», «Յերկաթուղի», «Կարմիր բանակ»: Շատ հետաքրքիր են խաղալիքների այնպիսի ժողովածուներ, վորոնք հեքլաթներ են պատկերում:

Խաղալիք— գլխաձուլիքներ, որինակ, ման յեկող մոյլի, թռչող թռչուններ, կոանչող բաղ և այլն:

Դիզակտիկ խաղալիքներ՝ մոզաիկա, տաշեղներ, հնչուն խաղալիքներ և այլն:

Մոտորային խաղալիքներ՝ գեգակներ, ողեր, սանձեր, ցատկաբարաններ, կեզլի, գանազան գլորաններ և այլն:

Հոգմաշարժ խաղալիքներ՝ հոգմաղացներ, պտուտակներ, հոգմաթիւններ, պարաշյուտներ և այլն:

Ինքնաշեն խաղալիքներ՝ նույնպես և դանազան առարկաներ, վորոնց համար յերեխաները բազմատեսակ միջառում են գտնում իրենց խաղերում, որինակ՝ շպաղատ, կտորեղեն արկղեր, Ֆրանքներ, տախտակներ, ձողիկներ և այլն:

Խաղի մեջ ոգտագործվում են նաև ջուրը, ավաղը, կավը, բույսերը:

Կարևոր է հրահրել և զարգացնել յերեխաների ինքնուրույն կերպով խաղալիքներ հնարելու և պատրաստելու ձգտումը:

Այսպիսով հարստանում է խաղի միտքը և բաղմամբով հետաքրքիր դրազմունքներ են ստեղծվում:

Ժամանակ առ ժամանակ, նայած դաստիարակչական խնդիրներին և յերեսխաների ձգտումներին, անհրաժեշտ է վորոշ խաղալիքներ փոխարինել ուրիշներով, տալ նոր խաղալիքներ: Նոր խաղալիքը տրվում է տարբեր ձևերով: Յերբեմն դաստիարակը նոր խաղալիքները ցույց է տալիս բոլոր յերեսխաներին մի անգամից, յերբեմն էլ յերեսխաներն իրենց համար անսպասելի կերպով նոր խաղալիքները դտնում են իրենց խմբի սենյակում կամ բակում:

Դաստիարակը յերեսխաներին սովորեցնում է խնամքով վարվել խաղալիքների հետ: Սաղալիքները պահվում են այնպես, վոր յերեսխաներն իրենք կարողանան վերցնել:

Սաղերը կազմակերպվում են շենքում և բացօթյա: Բացօթյա խաղերին տարվա բոլոր յեղանակներին պետք է հատկապես մեծ ուշադրություն նվիրել: Նրանք շատ կարևոր են յերեսխաների առողջության համար և ստեղծում են առանձնահատուկ կենսուրախ տրամադրություն: Այդում կամ հրապարակում յերեսխաներն ավելի աղատ կարող են շարժվել, քան սենյակում, և կառուցումներ կատարել: Ավազը, ձյունը, ջուրը, բույսերը, մանր քարերը և այլն անսպառ նյութ են բաղմամբի խաղերի համար: Այդ խաղերն ավելի մեծ տեղ կարող են դրավել դյուղական պայմաններում: Այնտեղ բնական նյութերն ավելի հարուստ են ու մատչելի: Սոճու կոները, կաղիները, մանր քարերը, ծաղիկները, հատապտուղները (մասուր, մամուխ) ամենաբազմազան կիրառում են դտնում խաղերում: որինակ, նրանք կարող են պատկերել մթերքներ, բեռներ և այլն: Բացօթյա խաղերը տարբեր խմբերի յերեսխաներին միանալու հնարավորություն են տալիս: Շատ հաճախ շենքի ներսում սկսած խաղը շարունակվում է դրոսանքի ժամանակ: Շատ կարևոր է, վոր դրսում խաղի հրապարակներ առանձնացված լինեն, պատրաստվեն խաղալիքները պահելու համար տեղ, ավաղի արկղեր, ջրի ավազաններ և այլն:

Փոքրահասակների խաղերը հաճախ կազմված են լինում միակերպ դործողություններից, որինակ՝ «չոֆերը ավտոմոբիլը քշում է հատակի վրա» և չչակով աղբանշան է տալիս: Յերեսխան յերբեմն խաղի համար չի ունենում առաջուց մտածված սյուժետ: որինակ, նա սկսում է կառուցել, չիմանալով, թե

ինչ կստացվի և միայն մի-ինչ վոր բան կառուցելուց հետո հարցադրում է, վոր «ավտոմոբիլ», «տնակ» և չինել:

Դաստիարակը, ապահովելով յերեսխաների ընդհանուր դարգացումը, հող է տանում, վոր նրանց խաղերը հետզհետե ավելի բովանդակալից դառնան: Նա հավանություն է տալիս հետաքրքրելի խաղին, մյուս յերեսխաների ուշադրությունը գրավում է այդ խաղի վրա, վորևե բան ինքն է կառուցում կամ մեծ յերեսխաների կառուցածը ցույց է տալիս: Յերբեմն դաստիարակն ինքը խաղում է յերեսխաների հետ: որինակ՝ նստում է յերեսխաների պատրաստած «գնացքը»: Նրա որինակին հետևում են յերեսխաները և բոլորը միասին «ճանապարհ» են ընկնում:

Մանկական խաղերի սյուժետները աստիճանաբար դարգանում են: որինակ՝ «կոլտնտեսություն» խաղալու ժամանակ յերեսխաները թռչնանոց, դոմ են սարքում, կաթը տանում են մանկապարտեղ: Սաղալիք-կենդանիները յերբեմն դտնում են սիրված հեքիաթների դործող աճինք: որինակ՝ նապաստակը և արջուկը գնում են բարեսիրտ բժիշկ Այրոլիտի մոտ բուժվելու:

Դեռ նախադպրոցական փոքր հասակում յերեսխաները սովորում են պայմանավորվել, թե ինչ պետք է խաղան իրենք: Դաստիարակը յերեսխաներին ողնում է համաձայնության դալ, հարմար խաղալիքներ ընտրել:

Չվարձալի խաղալիքները փոքրահասակներին շատ են դրավում: Նրանք մեծ ղվարձություն և ուրախություն են մտցնում խաղի մեջ:

Սաղալու համար փոքրահասակ յերեսխաներին տրվում են բազմազան խաղալիքներ և խոշոր ու մանր չտիերի կառուցողական նյութեր:

Մեծահասակ նախադպրոցականների խաղերն ավելի բազմազան են և բովանդակությամբ ավելի հարուստ, այն կապակցությամբ, վոր այդ հասակում ավելի դարգացած է յերեսխաների յերևականությունը և նրանք ավելի լրիվ հասկացողություններ ունեն շրջապատող կյանքի մասին:

Նույն թեմաները, վորոնց մենք հանդիպում ենք փոքրահասակ յերեսխաների խաղերում, նկատվում են և մեծահասակներին մոտ, բայց ավելի լրիվ ու բազմակողմանի դարգացած: Շատ խաղեր ծաղում են յերեսխաների համար կարգացած գրքերի և պատմվածքների տպավորության տակ, որինակ, Պուշկինի հե-

քիաթները, ժողովրդական հեքիաթները և այլն: Առանձնապես
յերեսաներին դրավում են այն խաղերը, վորտեղ արտացոլվում
են հերոսական սխրագործությունները, արիությունը, ինչպես ու-
րինակ, Հյուսիսային բեռնի նվաճումը և այլն:

Դաստիարակի պատմած նոր եպիգոզը կամ հետաքրքիր ման-
րամանությունը, վոր յերեսաներն իմացել են դրքերից կամ
նկարներից, ոգնում են այդ խաղերի դարդացմանը:

Մեծահասակ յերեսաները խաղերում մեծ տեղ են բռնում
ինքնաշեն հարմարանքները, վորոնցով նրանք լրացնում են
սշատրաստի խաղալիքները և կառուցումները: Մեծահասակ յերե-
սաներին պետք է տալ ավելի բազմադան ձևի կառուցողական
նյութեր, ամրացնելու նյութերի հետ միասին: Այդ հնարալու-
րություն է տալիս նրանց ստեղծել ավելի բարդ կառուցումներ,
ավելի գեղեցիկ ձևավորել նրանք և իրենց խաղերում ավելի
հետաքրքիր ձևով կիրառել այդ կառուցումները:

Դաստիարակը դրսևանքի ժամանակ յերեսաներին ցույց է
տալիս գեղեցիկ շենքեր, ընտրում է նկարներ և պարզ ձևի
յուստրաֆիաներ ունեցող ալբոմներ:

Յերեսաները դաստիարակի ոգնությունամբ բախում շինում են
վրաններ, տնակներ և այլն:

Մեծահասակ յերեսաները սովորաբար շատ են հետաքրքրու-
յում կոնստրուկտորներով և լարվող խաղալիքներով, ինչպիսի-
սիք են՝ «ավտոմոբիլային կոնստրուկտորը», «մետրոն», լարվող
տրակտորը և այլն:

Յերեսաների հարցասիրությունը և մեծ հետաքրքրությունը —
նր դրսևորվում է նաև այն ժամանակ, յերբ նրանք խաղում
են ավազով, ջրով, ձյունով և այլ նյութերով: Յերեսաներին
պետք է դալիս ավազի մեջ ջրով լի ջրհոր շինելը, անվակներում
պատվարներ ամրացնելը, ջրաղաց շինելը և այլն:

Այդ հասակի յերեսաներն ունեն նաև դիպրճալի խաղեր
առանց վորոշակի սյուժետի: Յերբեմն այդպիսի խաղերը վեր
են ածվում սյուժետավոր խաղերի, որինակ՝ «ցիլի», «թատրոն»:
Այդ խաղերում զարգանում են յերեսաների հնարամտությունը և
հումորը:

Կանոններով շարժական խաղեր: Շարժական խաղերը շատ
կարևոր են շարժումների դարդացման համար, այն է՝ վազը,
բայլը, մազլցումը, ցատկումբը և այլն դարդացնելու համար:

(տես Ֆիզիկական դաստիարակության ծրագիրը): Բացի դրանից,
այդ խաղերը ճարպիկություն, համարձակություն, դիմացկունու-
թյուն են դարդացնում և դաստիարակում ուշադրությունը, հիշո-
ղությունը, յերևակայությունը, կազմակերպվածությունը: Յե-
րեսաների առողջության համար առանձնապես ոգտավետ են բա-
ցովժա շարժական խաղերը: Այդ խաղերի համար ինչպես դուրսը,
նույնպես և շենքի ներսում պահանջվում է մեծ տարածություն,
վորպեսզի չկաշխանդվեն յերեսաների շարժումները: Վորոշ խա-
ղեր կարող են անցկացվել միայն բացօթյա, որինակ, բռնցիկ,
մրցավազը և այլն:

Ի նկատի ունենալով այն, վոր շարժական խաղերում յերե-
սաները շատ են շարժվում, անհրաժեշտ է հետևել, վորպեսզի
նրանք չհոգնեն, չափից դուրս չբորբոքվեն: Այդ նպատակով կի-
րավում են հանգստյան մոմենտներ, վորոնք յերբեմն խաղը
հանդարտ շարունակելու ձև են ընդունում. որինակ, ձիար-
շալ խաղալիս «կառնապանները» կերակրում և մաքրում են
«ձիերին» կամ տանում են ջրելու «ջրհորի» մոտ, «գնացք»
խաղալու ժամանակ «բանվորները» անտղում են վազոնները և
մաքրում:

Շատ վարևոր է խաղի ձիշտ ընտրությունը: Խաղը պետք
է հետաքրքիր լինի էր բովանդակությամբ և մատչելի՝ շարժում-
ների և կանոնների տեսակետից: Շարժական խաղերի բովան-
դակությունը պետք է համապատասխանի դաստիարակ-
չական խնդիրներին: Խաղերն ավելի հասկանալի և հետա-
քրքիր են լինում յերեսաների համար, յեթե նրանք ունեն
սյուժետ կամ անց են կացվում խաղալիքներով, բայց յերեսա-
ներին հետաքրքրում են նաև այնպիսի խաղեր, ինչպես «բռնո-
ցիկ», «մրցավազը» և այլն:

Անցկացնելով նոր խաղը, դաստիարակը յերեսաներին ծա-
նոթացնում է նրա բովանդակությանը և կանոններին: Բացատ-
րությունը պետք է լինի համառոտ, կենդանի և հետաքրքրու-
թյուն առաջ բերի դեպի սովյալ խաղը:

Դաստիարակը կարող է հետաքրքրություն դարձեցնել դեպի
խաղը տարբեր միջոցներով: Նա կարող է խաղն սկսել յերեսա-
ների մի վերջաթիվ խմբի հետ, իսկ հետո խաղը կրկնելիս, ներ-
դրավել նաև տրիշ յերեսաների, կամ կարող է խաղն սկսել
միանգամից բոլոր յերեսաների հետ: Դաստիարակի պատմածը

խաղի թեմայի շուրջը կամ ցույց տված նկարները նույնպես
յերբեմն բարձրացնում են յերեխաների հետաքրքրությունը խաղի
նկատմամբ:

Շարժական շատ խաղերի համար պետք է ողտազործել խա-
ղալիքներ, դեխտներ, բնական նյութեր (ձնադնդեր, սառցա-
կտորներ, սոճու կոներ և այլն):

Այն խաղերում, վորտեղ հարկավոր է դերերը բաժա-
նել, կամ դաստիարակն է նշանակում այս կամ այն յերեխային,
կամ թե այդ տեղի յե ունենում «վիճասելուկով»:

Սովորաբար դաստիարակը մասնակցում է խաղին. դա բարձ-
րացնում է խաղի հետաքրքրությունը, բայց յերբեմն նա թող-
նում է խաղը, վորպեսզի հետզհետե յերեխաներին սովորեցնի
ինքնուրույն խաղալ: Դաստիարակը հետեւում է, վոր պահպան-
վեն խաղի կանոնները, ղեկավարում է դերերի բաժանումը, բար-
դացնում է խաղը և փոփոխություններ մտցնում խաղի մեջ, յե-
թե այդ անհրաժեշտ է: Դաստիարակը յերբեմն ինքն է խաղերի
նոր վարիանտներ ստեղծում:

Անհրաժեշտ է, վոր խաղերում դաստիարակն ինքը ճիշտ
կատարի բոլոր շարժումները, վորպեսզի, ընդորոշակելով նրան,
յերեխաները հետզհետե կատարելադործեն իրենց շարժումները:

Կանոններով խաղերը փոքր անհասկանալի խմբի համար իրենց
բովանդակութամբ և շարժումներով պետք է լինեն պարզ և մատչե-
լի, ինչպես, որինակ, «Գնացք», «Ձի», «Ափսոս որիլ» խաղերն են:
Շարժական խաղերի համար տրվում են՝ գնդակներ, ողեր, զքն-
դիկներ, դրոշակներ, դանդակներ և այլն: Խաղալիքներով խաղե-
րի շարքին են պատկանում, որինակ՝ «Գնդակ նետելը», «Գտիր
դրոշակը»:

Խաղի կանոններն աստիճանաբար բարդացվում են: Սկզբ-
բում անց են կացվում այնպիսի խաղեր, վորոնցում բոլոր յե-
րեխաները կատարում են դաստիարակի ցույց տված միանման
շարժումները, որինակ՝ «Գնացք», «Նապաստակներ» և այլն: Յեր-
բեմն այդ խաղերում կրկնվում է միևնույն դործողությունը,
յերբեմն էլ միմյանց հաջորդում են մի քանի դործողություններ:

Խաղերի մեջ աստիճանաբար մտցվում են նաև ավելի բարդ
կանոններ, որինակ, «Թռչունները և բաղեն» խաղում ծխոխները
թռչում են միևնչև այն ժամանակ, յերբ կտրվի աղղանչան և կե-
րեվա բաղեն: Այդպիսի խաղերը շարքին են պատկանում նաև

«Արջը և յերեխաները», «Կատուն և մկները», «Ինքնաթիռներ»,
«Կարմիր բանակայիններ»: Մի քանի խաղերում այցելում
է աղղանչան, այն է՝ մի վորոշ բառ, վոր արտասանում
է դաստիարակը («Կանդ առ», «Վաղիր») կամ դրոշակ, դանդ և
այլն: Այդպիսի խաղերից են՝ «Ո՞վ կվերցնի դրոշակը», «Դե
վաղեք բռնեք»:

Խաղը սովորաբար ղեկավարում է դաստիարակը: Փոքրերի
խմբում դաստիարակը նախորդ է բացատրում խաղը, այլ
պարամանավորվում է այն մասին, թե ինչ է պահանջվում խաղն
սկսելու համար: Խաղի ժամանակ յերեխաներն ընդորոշակում են
դաստիարակի շարժումները: Մեծ տեղ են բռնում խմբական յեր-
դերով խաղերը, որինակ, «Փոքրիկ չարածճիճեր», «Ուտենի»,
«Նապաստակներ»:

Միջակ խմբի յերեխաներից ավելի ինքնուրույնություն և
գլխացկունություն է պահանջվում, քան թե փոքրերի խմբից:

Խաղի մեջ աստիճանաբար մտցվում են, որինակ, այսպիսի
կանոններ. — փախչողին բռնել սկսել այն ժամանակ, յերբ խա-
ղացող յերեխաների մի մասը վերջացնի պարամանական տեսող
արտասանությունը, վաղել միայն մինչև վորոշված դիժը, ժամա-
նակին կատարել այս կամ այն դործողությունը, որինակ՝ ժա-
մանակին դուրս վաղել, բռնել, մաղցել ցանկապատի, վրա և
այլն: Կարելի յե անցկացնել նաև մրցավազներ, վորոնց ժամա-
նակ յերեխաները կարող են շարք կանդնել տողանով, զույգերով,
յեռյակներով և ավելի, որինակ՝ «Անտուն նապաստակ», «Ձույ-
գերի խաղ», «Աթոռներով խաղ»:

Այս խմբում խաղերի սյուժետներն ավելի հարուստ են, որինակ,
անց են կացվում այնպիսի խաղեր, ինչպես՝ «Յերկաթուղին»,
վորտեղ պատրաստվում են մի քանի գնացքներ, առանձնացվում
է մեկինյու աղղանչան տվող կայարանապետ, գետնի վրա նշա-
նակվում են ուղիներ:

Այնպիսի խաղեր են խաղացվում, վորոնց մեջ յերեխաներն ի-
րենք են մտածում — դտնում շարժումները, հանելուկ խաղերը,
որինակ, «Խաղալիքների խանութ», «Գաղանախոց»:

Բարձր խմբի յերեխաներից պահանջվում է խաղի կանոն-
ների ավելի ճիշտ կատարում, քան թե նախորդ խմբերում: Հա-
ճախ խաղում մտցվում են դանազան խոչընդոտներ, վորոնց
հաղթահարելու համար պահանջվում է շարժումների ճշտություն
և արագություն, արգելակի վրայից ցատկելու, մաղցելու անցնե-

լու, նշանին խմելու և այլն հատուկություններ, որինսով՝ «Ուր
կվերցնի դրոշակը», «Լաբյուրինթոս» խաղերը:

Անց են կացվում այնպիսի խաղեր, ինչպես՝ մրցավազը,
վազը, ողակներ, դնդակներ գլորելը և այլն, վորոնք պահանջում են շարժումների մարզումներ. որինսով՝ «Գորտերն ու
ձկնկուլը», «Վոտքներդ չթրջեք» և այլն խաղերը:

Բացի այդ, կարելի չե անցկացնել գորտուկի, սերսո խաղերի
պարզ վարիանտներ և պարզեցրած վոլեյբոլ և այլ խաղեր:

Այն խաղերում, վորոնք պահանջում են արագություն, ճարպիկություն, կազմակերպվածություն, կարելի չե խրախուսել
յերեսխաներին դանազան միջոցներով, որինսով, խաղը տանողներին
խաղը կրկնելու ժամանակ տալ առաջին հերթը, վորքինք
դրոշակներ տալ և այլն:

Այս բանում յերեսխաների նկատմամբ անհատական մոտեցում
ե պահանջվում, վորպեսզի դարձանան ամեն մի յերեսխաչի
ունակությունները և յերեսխաների մեջ դաստիարակվեն մտերմ
մուկություն ու միմյանց ոգնելու պատրաստակամություն:

Խաղերում կարող են լինել այնպիսի առաջադրանքներ, վորտեղ
պետք ե հիշել շարժումների հաջորդականությունը, արագորեն
դտնել իր տեղը և այլն, որինսով՝ «Այսպես կարելի չե,
այսպես չի կարելի», «Հիշիր շարժումը», «Ի՞նչն ե թռչում» և
այլ խաղեր:

Խաղի սյուժետներն ավելի բազմազան դառնալով, պահանջում են ճարպիկություն, համարձակություն, հնարադիտություն:
Այդպիսի խաղեր են, որինսով, «Հանձնիր դրոշակը», «Կարմիր
հեծեկազոր» և այլն: Անց են կացվում նաև խմբական յերգե-
րով խաղեր և յերգերի բովանդակությունը շարժումներով ար-
տահայտող և զանազան այլ խաղեր. որինսով, «Ուռներ», «Նա-
պաստակ» և այլն:

Դիդակտիկ խաղեր: Դիդակտիկ խաղերը նպաստում են յե-
րեսխաչի բազմակողմանի զարգացմանը, և միաժամանակ ամեն մի
խաղն ունի նաև իր խնդիրները, որինսով, վորոչ խաղերում յերե-
սխաները ծանոթանում են առարկաների ձևերին, մյուսներում
տարբերվում են հնչյունները կամ վորոչում են առարկաները՝
չոչափելով և այլն:

Դիդակտիկ խաղերը բազմազան են: Նրանցից մի քանիսը
անց ե կացնում դաստիարակը, վորոնք հետաքրքիր ու յերեսխա-

ների համար մատչելի առաջադրանքների բնույթ են կրում, որի-
նով դասավորել մատրոչկաներն ըստ հասակի, նկարված որի-
նակով համարել տնակը և այլն:

Ուղտիկ դիդակտիկ խաղալիքներից և նկարներից, վորոչ
խաղեր սեփական նախաձեռնությամբ հնարում են իրենք յերե-
սխաները: Որինսով, յերեսխաները կարող են իրենց ուզածի պես
տաշեղներից կամ մողախից կազմավորել զանազան պատկերում-
ներ կամ ողտադործել զանազան գոգավոր մանր առարկաներ
վորպես ավաններ՝ տիկնիկներին հյուրասիրելու համար և այլն:

Բոլոր խմբերում մեծ տեղ պետք ե դրավեն անհատական
կամ վորք խմբերով խաղերը, բայց վորոչ խաղերը կարող են
անցկացվել նաև մեծ թվով խաղացողների հետ. որինսով, հանե-
լուկ—խաղեր՝ «Իմացիր, ի՞նչ կա ձեռքումս», «Ո՞վ կանչեց,
ձայնից ճանաչիր»:

Յերբեմն դաստիարակը խաղի մեջ մտցնում ե յերեսխաների
մտքում ծագած հետաքրքիր առաջադրանքները, յեթե այդ բոլոր-
ը ավելի դրավիչ են դարձնում խաղը և յերեսխաներին ինքնու-
քույնությունից և անկաշկանդ վարժությունից չեն դրկում:

Խաղը դեկավարելու դործում չի կարելի չոր ու ցամաք դի-
դակտիկ, ձևական վարժություններ, կամ բարդ առաջադրանք-
ներով յերեսխաների ծանրաբեռնում թույլ տալ: Դիդակտիկ խա-
ղերը պետք ե այն աստիճան դրավիչ լինեն, վոր յերեսխան խա-
ղալիս չնկատի, թե ինքն ինչ—վոր վարժություններ ե կատարում:

Առանձնապես արժեքավոր են այն խաղերը, վորոնք հիմ-
նված են ինքնստուգման սկզբունքի վրա (տնակներ մողախի-
կից, իրար մեջ հաջորդիկ իրեր և այլն), վորովհետե դրանցով
խաղալիս յերեսխան ինքը կարող ե նկատել իր սխալը և ուղղել
այն: Հետաքրքիր և արժեքավոր են նույնպես դիդակտիկ խաղե-
րը սոճու կոներով, կաղիճներով, մասուրներով, մանր քարերով
և այլն:

Խաղն ընտրելու ժամանակ դաստիարակը հաշիվ չե անում
միջ միայն յերեսխաների հասակը, այլև նրանց հակումները, դար-
դացումը: Շատ խաղեր, վորոնք առաջարկված են վորքերի խմբի
համար, հետաքրքիր են նաև ավելի մեծ յերեսխաների համար և
բնդհակառակը, վորոչ դեպքերում, վորքերի խմբի յերեսխաներին
կարելի չե առաջարկել խաղեր, վորոնք մատնանշված են միջակ

խմբի համար: Չասխազանց կարելիոր է, վոր դաստիարակը շատ
խաղեր իմանա և կարողանա խաղեր հորինել:

Դիզակտիկ խաղերում փոքր խմբի յերեխաներին կարող են
տրվել, որինակ, հետևյալ առաջարկությունները:

Տարբերել հիմնական դույները, որինակ, ձողիկի վրա շարել
բոլոր կարմիր ողակները, ջոկելով դրանք մյուս դույների ողակ-
ներից, դրոքել կապույտ դեղիկը՝ յերբ բարձրացնում են կա-
պույտ դրոշակը, իսկ յերբ բարձրացնում են կարմիր դրոշակը՝
դրոքել կարմիր դեղիկը և այլն:

Տարբերել ձևերը և չափերը, որինակ, տարբերել չափի մատ-
րյոչկաների խառնիխուռն կեսերից ջոկել համապատասխան կե-
սեր և ամբողջ մատրյոչկաներ կազմել: Ճիշտ կազմել աստիճա-
նաբար դեպի գազաթը փոքրացող ողակներով աշտարակը:

Տարբերել միմյանցից խիստ տարբերվող ձայները. որինակ՝
վորոշել թե ի՞նչ են նվազում, սրինդ, թե՛ թմբուկ, վորոշել՝ դան-
դակի՛ ձայն է, թե՛ բոժոժի, ձայնից ճանաչել, թե՛ ով կանչեց:

Տալ առաջադրանքներ, վորոնք զարգացնում են ուշադրու-
թյունը և տեսողական հիշողությունը. որինակ, տեսակների բա-
ժանել դեղակները սոճու կոները, մանրիկ քարերը, իմանալ, թե
վո՞ր խաղալիքը պահանջ հավաքածուից:

Տարբերել առարկաները՝ շոշափելով. որինակ՝ դուշակել թե
ի՞նչ է պահված պարկում: Գուշակելու համար կարելի յե տալ
տարբեր ձև ունեցող խաղալիքներ, բանջարեղեններ, մրդեղեն և
յերեխաներին լավ ծանոթ դանազան առարկաներ:

Միջակ խմբում յերեխաներին կարելի յե տալ, որինակ,
հետևյալ առաջադրանքները (բացի փոքրերի խմբի համար մատ-
նանշված առաջադրանքներից) .

Տարբերել և անվանել լրացուցիչ դույները և հիմնական դույ-
ների դանազան յերանդները. որինակ, յերեխաներին առաջարկ-
վում է բերել այսինչ գույնի ողակը, կամ դասավորել հերթով
մոզաիկան, ընտրելով կարմիր, կապույտ կամ վորևե այլ գույնի
յերանդները:

Ձեմբրի և չափերի տարբերելը, նրանց անվանումը որի-
նակ՝ կազմել «առարկայական մոզաիկայից» մի վորևե առարկա
և այլն:

Շոշափելով իմանալ թե ինչի՞ց են շինված խաղալիքները,
որինակ, առանց նայելու, շոշափելով տարբերել ուետինե դեղակը,

փայտյա դեղիկը, կամ տարբերել և անվանել տիկնիկների մե-
տաքայա ու մորթե գլխարկները և այլն:

Գույների և ձևերի համախմբում կատարել որինակ, հնարել
և կազմել վորևե զարդանկար (նախշ) մոզաիկներից, նկարից
ընդորինակելով՝ մոզաիկայից, տաշեղներից կամ մանրիկ քարե-
րից տուն, ծառ, շոգեքարը դասավորել:

Առաջադրանքներ՝ վորոնք զարգացնում են ուշադրու-
թյունը և հիշողությունը, որինակ, հիշել մի քանի առարկաների
հաջորդականությունը և դասավորումը (խաղեր՝ «Ասա, ի՞նչ -
պես եր», «Ի՞նչն է փոխվել»):

Տարբերել ձայները և հիշել ութմը. որինակ, իմանալ, թե
ի՞նչ են նվազում՝ թառ, մանդոլին, ջութակ, թե՞ խաղալիքային
դորժիք: Կրկինել թմբուկի վրա պարզ ութմը («Նվազել է ինձ
նման»), ճանաչել առանց բառերի յերգած յերգը («Նվազախումբ»
խաղը):

Յեթե յերեխաները հեշտությամբ են կատարում այս կամ
այն առաջադրանքը, խաղերը բարգացվում են. որինակ, կարելի
յե անցկացնել այնպիսի խաղեր, ինչպես՝ «Ո՞վ շուտ աշտարակ
կկազմի», «Ո՞վ այլելի շատ մատրյոչկաներ կսարքի» խաղերն են:

Մեծերի խմբում: Բացի նախորդ խմբում ցույց տրված խա-
ղերից, անց են կացվում հետևյալ առաջադրանքներով խաղերը:

Տարբերել և անվանել հիմնական և ոժանդակ դույների
յերանդները (այսինքն յերկրորդական դույները), որինակ, հա-
վաքել և աստիճանական կարգով դասավորել միևնույն գույնի,
բաց տարբեր յերանդների, աշտարակը, կամ ջոկել տիկնիկների
համար միևնույն գույնի, բաց տարբեր յերանդներից հազուստը՝
գլխարկ, դեկատ, դոաի և այլն:

Գույների և ձևերի համախմբում, որինակ, կազմել մո-
զաիկայից մի զարդանկար (նախշ), ողավելով տարբեր գույնե-
րից և նրանց նրբերանդներից. մոզաիկայից և տաշեղներից նախշ
կամ նկար կազմել և այլն:

Տարբերել և հիշել տարբեր բարձրության և ուժի ձայները:
Կսիլոֆոնի վրա դուրս բերել վորևե թեթև մանկական յերգ՝
խաղալ «բարձրաձայն և մեղմ յերաժտություն» և այլն:

Ձեռքերի դասասակի և մատների մկանների զարգացում. որի-
նակ՝ «բլոչկի», «չոփախաղ», «բլրլյուկի», «թուշող թանակներ»,
«խճճված անցը», «լաբյուրինթոս» խաղերում (ներս գցել յերեք

գնդիկները հատուկ անցքերով, կա միներին քչել իրենց բները և այլն) :

Ուշադրութեան, հիշողութեան և յերևակայութեան դարգա-
ցում . որիննակ՝ հիշողութեամբ, առանց որիննակին նաշելու սեղա-
նի կառուցողական նյութերից, կոնստրուկտորից մնակ կազմել,
մոզահիկայից, դույնդույն տաշեղներից վորեւ նախ հնարել :
Այս խաղերի թվին են պատկանում նաև «չաշիկ» խաղը սրաղեց-
բած կանոններով, «գլխացալանք— հանելուկներ»—ը և այլն :

Մտքի (լեզվական ունակութեանները), սրամտութեան,
հնարադիտութեան դարգացում . որիննակ, խաղեր՝ վորտեղ պա-
հանջվում և դտել ուրիշ մտքում պահած բառը, խաղեր՝ վո-
րոնք պահանջում են բառերի ընտրութեան կամ արդելում են
այս կամ այն բառերը, պահանջում են արագ պատասխան դրու-
նել, նկարագրված խաղալիքի անունը տալ և այլն :

Ինդակտիկ խաղերի մեջ առանձին տեղ են գրավում և կարեն-
բով խաղերը : Այդ խաղերի մեջ հատուկ նպատակով հախաած
նկարների ողնութեամբ հարստացվում են յերեխաների հասկա-
ցողութեանները շրջապատող կյանքի մասին, դարգացում են
դիտուենակութեանը, ուշադրութեանը, յերևակայութեանը, լե-
զուն և այլն : Նկարներով, ինչպես և խաղալիքներով՝ յերեխա-
ները կարող են խաղալ իրենց ուղածի պես, հնարել զանազան
խաղեր, որիննակ, «կինոյում» նկարները, ցույց տալ, տարբեր
գոմբիւնացիաներով դասավորել նկարները :

Դաստիարակը պարզ և հասկանալի ձևով բացատրում և
խաղը և խաղում յերեխաների հետ միասին : Ամենից հաճախ
խաղից առաջ յերեխաները դիտում են նկարները :

Դաստիարակը կարող է վորոշ չափով փոփոխել խաղի վարդ
ու կանոնները . նա յերբեմն հեշտացնում է խաղը կամ, ընդհա-
կառակը, բարդացնում է նրա առաջադրանքներն ու կանոնները :
Մինեռւն խաղը տարբեր վարիանտներով կարող է անցկացվել
մեծահասակ և փոքրահասակ յերեխաների հետ : Նկարները տար-
բեր կոմբինացիաներով և զանազան հավելումներով կարող են
նյութ ծառայել բազմազան խաղերի համար . որիննակ, «Մանկիկ-
ներ» լուտոն կարելի յե ողտագործել բորո խմբերի խաղերում՝
փոխելով խաղի կանոնները և բովանդակութեանը, ինչպես նաև
փոփոխելով նկարների ժողովածուն :

Նկարներով խաղերից շատերը փոքրերի խմբի համար կա-

աուցվում են բորո խաղացողների միաժամանակ կատարվող և
միանման գործողութեանները վրա, որիննակ՝ «Պահանք ու գտններ»
խաղը : Մի փոքր ավելի բարդ են այն խաղերը, վորոնք պահան-
ջում են յերեխաներից գործողութեանները կատարել հերթով,
որիննակ, «Հանձնարարութեաններ», «Կորստետեսութեան» խաղերը :
Փոքրերի խմբի յերեխաներին խաղերում առաջարկվում են հե-
տեվյալ խնդիրները . գտնել տվյալ նկարի համապատասխան
գույքը, գտնել դաստիարակի անվանած նկարն ուրիշ նկարների
միջից, վորոնք խառը դրված են սեղանին, կամ սենյակում աչքի-
քնկնող վորեւ այլ տեղ, խմանալ՝ թե վո՞ր նկարը պակասեց (ո-
րիննակ, «Ով գնաց» խաղը) . նկարը կազմել յերկու, յերեք կամ
չորս մասից (քանդուկի նկարներ), ճանաչել նկարում պատկերված
առարկան նրա բնորոշ հատկանիշով, որիննակ, ձայնը նմանեցնե-
լու ողնութեամբ ճանաչել կովը կամ ձին :

Փոքրերի հետ անցկացվող խաղերի համար կարելի յե ող-
տագործել, որիննակ, «Նկարներ փոքրիկներին», «Լուտո փոքրիկնե-
րին», «Փոքրիկներ», «Քանդուկի նկարներ», «Մուղղողը» և այլն :

Միջակ խմբում հարկավոր են ավելի բարդ կանոններով և
ավելի բազմազան բովանդակութեամբ խաղեր, քան թե փոքրերի
համար, որիննակ, լուտո, վորտեղ պահանջվում է փոքրիկ նկարնե-
րը ջոկել ըստ վորոշ հատկանիշի : Մտցվում են խաղեր՝ վորոն-
ցում պահանջվում է առարկաների ավելի նուրբ ու մանրազին
տարբերում, որիննակ, «Գույնդույն ամանեղեն» լուտոյում համե-
մատվում են ձևով մոտ այնպիսի առարկաներ, ինչպես՝ բաժակը
և դավաթը, ինչպես՝ կճուճը, թեյամանը, կաթնամանը և այլն :

Վորոշ խաղերում յերեխաները համեմատում են առարկա-
ներն ու համախմբում նրանց ըստ առանձին հատկանիշների,
որիննակ, ջոկում են այն նկարները, վորոնցում պատկերված է
ամեն բան, «ինչ վոր կարելի յե ուտել» կամ «ինչով կարելի յե
խաղալ» և այլն :

Վորոշ խաղերում առաջադրվում են նույն առաջադրանքները,
ինչ վոր փոքրերի խմբում, բայց մտցվում են բարդութեաններ,
վորոնք պահանջում են ավելի հնարադիտութեան, որիննակ, «Ով
գնաց և ո՞վ յեկալ», «Վորտեղ թագնուկից վորնին» և այլ խաղեր :

Յերբեմն յերեխաներին առաջարկվում է ասել, թե ինչն
ինչին է վերաբերում (որիննակ, անիվն՝ ավտոմոբիլին, սլաքը՝
ժամացույցին) . լուծել հանելուկը, վորը կապված է տվյալ նկա-

ընդհատ, կազմել նկարն ասելի բաղմամբիւ ու բարդ ձևով վրա-
բաստված մասերից, զան փոքրերի խմբում:

Բացի նախորդ խմբի համար մատնանշված խաղերից, կա-
րելի յե. տալ որինակ, այնպիսի խաղեր, ինչպես՝ «Գունազրույն
պանակներ», «Բուսաբանական լոտո», «Կենդանաբանական լոտո»,
«Իրարանցում» (պարզեցված վարիանտ), «Տես ու հիշիր» և այլն:

Մեծերի խմբում յերեսխաներից պահանջվում են համեմատե-
լու և ընդհանրացնելու ավելի մեծ հմտություն, որինակ, մի
քանի խաղերում պահանջվում է ցույց տալ, թե վո՛րտեղ ի՛նչ է
բուսկում, թե վո՛ր կենդանին է ուժեղ: Մյուս խաղերում պետք
է կշռադատել, թե ինչպիսի հաղուստ է հարկավոր հրդեհաշեջին,
կարմիրբանակայինին, Հյուսիսի բնակչին և այլն:

Մեծ յերեսխաների ինչպես և նախորդ խմբերի, խաղերից
չատերը հանելուկները բնույթ են կրում. որինակ, մի քանի խա-
ղերում առաջարկվում է լուծել հանելուկը, վորպեսզի ստացվի
նկար, կամ նկարազրեկ նկարում պատկերած առարկան և յե-
րեվույթը, առանց նրա անունը տալու:

Մի քանի խաղեր հեքիաթների կամ պատմվածքների դրա-
մատիկական ներկայացման բնույթ են ընդունում, դրանց սյու-
ժետը յերբեմն յերեսխաներն իրենք են հորինում: Բացի միջակ
խմբի խաղերից, մեծ յերեսխաներին կարելի յե. տալ նաև այնպի-
սի խաղեր, ինչպես՝ «Բանջարեղեն և պտուղներ», «Մաղիկներ»,
«Ջրային արանսպորտ», «Ցամաքային փոխադրական միջոցներ»,
«Սիմաֆոր», «Իրարանցում», «Կենդանիների ձայները» (առանց
տեքստի), «Գեքույկախաղեր», «Կա՛նգ առ», «Պարաշյուտիստներ»
և այլն:

Բարձր խմբի խաղերի համար կարելի յե. տալ նկարներ,
վորոնք պատկերում են զանազան ժողովուրդների կյանքը, տաք
և ցուրտ յերկրների նկարազրույթյունը և այլն:

ԳԼՈՒԽ III.

Նկարչություն, ծեփ (կապապարում) և այլ նյութերով
գրազմունքներ

Նկարչույթյունը, ծեփը և այլ նյութերով (թուղթ, փայտ)
պատմունքները նախադպրոցական հասակում հիմնականում
պլանադրական բնույթ են կրում. յերեսխաները ծեփի, նկար-
չույթյան և իրենց այլ աշխատանքների միջոցով սովորաբար
պատկերում են այն, ինչ վոր իրենք տեսել են շրջապատող
կյանքում, այն, ինչ վոր նրանց համար ընթերցել են, ինչ վոր
նրանց պատմել են:

Այդ տեսակ գրազմունքները սերտ կապված են խաղի հետ:
Յերեսխան փայտից մի բան է շինում, կավից ծեփում է,
թղթից կտրատում և հաճախ իր պատրաստածի հետ խաղում,
ծեփել է մի սավառնակ և ահա ձեռքին բարձր բռնած վաղվորում
է սենյակում, «թռչում է». փայտի վտորներից մի ավտոմոբիլ է
շինել, նստել վրան ու «բռնում» է:

Նկարչությունը, ծեփը և այլ նյութերով գրազմունքները,
նրանց ճիշտ ղեկավարման պայմաններում մեծ հաճույք են պատ-
ճառում յերեսխան և նպաստում են նրա ընդհանուր զարգաց-
մանը:

Այդ տեսակ գրազմունքներում դաստիարակի առաջ դրվող
հիմնական խնդիրներն են զարգացնել յերեսխաների ստեղծագոր-
ծական ընդունակությունները, գեղարվեստական ճաշակը,
հնարազիտությունը: Յերեսխանի մտահղացումների իրակա-
նացումը նրա այլ և այլ ստեղծագործական գրազմունքներում
դաստիարակում է նրա ակտիվությունը, կամքը, հաստատակա-
մությունը, խոչընդոտները հաղթահարելու հմտությունը: Այդ
գրազմունքներում, ինչպես և շրջապատող կյանքը գեղարվեստա-
կան միտք գունեղությամբ պատկերող կերպարվեստի ստեղծագործու-
թյուններից ստացած ապավորությունների ոգնությամբ, դաստիար-

քակն ընդլայնում է յերեխաների մտապատկերները, յերեխաների մեջ սեր է դաստիարակում դեպի հայրենիքը, նրա առաջնորդները և հերոսները:

Ստեղծագործական միատեղ զբաղմունքների ժամանակ յերեխաներն ապրում են ընդհանուր խոհերով, ընդհանուր զգացմունքներով, տպավորութիւններով փոխանակում են կատարում, ուժեղանում և նրանց փոխադարձ մտերմութիւնը, սովորում են միատեղ և ստեղծագործական աշխատանքի՝ համաձայնութեան դալով և միմյանց ոգնելով:

Նկարչութեան, ծեփի և այլ նյութերով զբաղմունքների ոգնութեամբ զարգանում են յերեխաների աչքաշարիւր և ձևի, գույնի, մեծութեան ու տարածութեան մտապատկերները:

Միատեղ ապեք է սովորեցնել յերեխաներին մատիտից, մկրատից, վրձինից, սոսինձից, ներկերից ողտվելու ճիշտ ձևը, վորը կողմի յերեխային ավելի լավ պատրաստել նկարը, ծեփածքը, ավելի լավ շինել խաղալիքը:

Զբոսանքներին, էքսկուրսիաներին յերեխաներն ստանում են բազմապիսի նոր տպավորութիւններ: Դաստիարակը զարգացնում է յերեխաների դիտողականութիւնը, սովորեցնում է տեսնել շրջապատող կյանքի արտահայտիչ ձևը, գույները, գեղեցիկ գույնը, յերեխաների ուշադրութիւնն է հրավիրում առարկայի հիմնական հատկանիշներին՝ գույնի մեծութեան վրա և այլն:

Յերեխայի գեղարվեստական ճաշակը և ստեղծագործական ընդունակութիւնը զարգացնելու համար մեծ նշանակութիւն ունեն նրան շրջապատող շրջադրութիւնը, առարկաները, գեղեցիկ կահավորումը, ամանեղենը, ծաղիկները, զանդակները, յերեխաների ըմբռնողութեանը մատչելի գեղարվեստական ստղծագործութիւնները:

Այդ բոլոր զբաղմունքներում շատ կարևոր է նյութերի ընտրութիւնը, նրանց բազմազանութիւնը և խնամքով նախապատրաստելը՝ լավ լուծված ներկը, փափուկ, ձեռքերին չվնասող կապիք, հարթ, չոր տախտակի կտորները և այլն:

Ավելի հաճախ նոր նյութերը յերեխաներին տրվում են սահմանված զբաղմունքների ժամերին և հետո թողնվում են՝ ազատ ոգտանգործելու համար:

(1 Փոքրերի խմբում կազմ և ներկերը, վորպես ավելի բարդ նյութեր տրվում են առավելագույն սահմանված զբաղմունքներին:

Բոլոր նյութերը պետք է պահպան ակուրատ, դասավորվեն վորոշ կարգով և արհեստ, վոր յերեխաները կարողանան խնքնուրույն կերպով վերցնել ուղածը:

Իր վարքով դաստիարակն ակուրատութեան և կարգ ու կանոնի որինակ է տալիս յերեխաներին՝ խնամքով և վերաբերվում նյութերին, պիտուցներին և յերեխաների աշխատանքներին, համարում է դրանք մի վորոշ տեղ: Դաստիարակը յերեխաներին մասնակից է դարձնում պարսպունքների նյութերը նախապատրաստելու և ասքա նրանց հավաքելու աշխատանքին. որինակ, առաջարկում է թողթը դասավորել սեղանի վրա, շարել սոսինձի և ներկի սրվակները, բաժանել կապիք վրան ոգնելու տախտակները և այլն:

Զբաղմունքների ընթացքում դաստիարակն ոգտվում է դեկավարութեան դանադան ձևերից, չխախտելով յերեխաների նախաձեռնութիւնն ու խնքնուրույնութիւնը: Յերեխան հետաքրքրելի ներածութեամբ դաստիարակը հիշեցնում է յերեխաներին այն մասին, ինչ վոր նրանք տեսել են: Յուցում տալով, թե ի՞նչ կարելի յե շինել, հորինել, դաստիարակը խթանում է յերեխաների նախաձեռնութիւնը, նրանց ուշադրութիւնը բեկեռում է արարատած նյութի վրա: Մի հարց կամ վորևէ խորհուրդ տալով, նա ոգնում է նկարն իր բովանդակութեամբ ավելի հետաքրքրական դուրս բերել, ոգնում է ավելի լավ թողթ կամ ներկ ընտրել և այլն: Հետևում է յուրաքանչյուր յերեխայի զբաղմունքին, ցույց է տալիս աշխատանքը կատարելու ավելի հեշտ ձևը, կամ ըղհակարակը, ցույց է տալիս, թե ի՞նչպէս բարդացնել աշխատանքը, ի՞նչպէս այն ավելի հետաքրքրական դարձնել:

Չափադանց կարևոր է դաստիարակի ուշադիր և խնամքոտ վերաբերմունքը բոլոր յերեխաների աշխատանքներին և դրանց համարնութիւնն տալը. կալի աշխատանքներից ջովում են լավագույնները և պահվում, մյուսները վորջնացվում են, բայց վորջ յերեխաների ներկայութեամբ:

Յերեխաների նկարչական աշխատանքները պահելու համար դաստիարակը գործ է ածում անհատական ծրարներ՝ յուրաքանչյուր յերեխայի համար առանձին ծրար, վորտեղ ամեն մի յերեխա գետեղում է իր աշխատանքը:

Ծրարների վրա նշաններ են դրվում, վորպեսզի յե-
րեխաները ճանաչեն իրենց ծրարը: Աշխատանքի վրա նշվում է
ամսաթիվը:

Յերբեմն հարկավոր է լինում նաև քննադատական դիտո-
ւյուններ անել. որինմալ, տալ աջակցի հարց. «Իսկ ո՞ւր
են աղվա աչքերը», «Տնակը դուռ չունի, ապա վո՞րտեղից պետք
է տուն մտնել»: Մեծահասակ յերեխաների աշխատանքների նը-
կատմամբ համեմատաբար խիստ պահանջներ պետք է առաջադրել
բովանդակութեան և կատարման տեսակետից:

Նկարչութիւնը, ծեփը և այլ նյութերով զբաղմունքներն
անց են կացվում սահմանված սարքավորումներով կարգով կամ
յերեխաների ազատ ընտրութեամբ տեղի ունեցող զբաղմունքնե-
րի կարգով:

Սահմանված սարքավորումների, ինչպես և խաղերի և ազատ
ընտրութեամբ զբաղմունքների ժամանակ դաստիարակն ուշադ-
րութեամբ հետևում է յուրաքանչյուր յերեխայի, ոգնում է նրա
մտադրութեան իրականացմանը, դաստիարակում է յերեխաների
հաստատակամութիւնը և կենտրոնանալու ունակութիւնը: Տես-
նելով, վոր վորևէ բանում յերեխան դժվարութեան է հանդի-
պում և վոր նա պատրաստ է աշխատանքից ձեռք ջարել, դաս-
տիարակը հրահրում է յերեխայի հետաքրքրութիւնը սկսած աշ-
խատանքի շուրջը, ոգնում է դռնել համապատասխան նութերը:
Յեթե աշխատանքը բարդ է և հոգնեցնում է յերեխային, դաս-
տիարակն առաջադրում է այն ընդհատել և վերջացնել մի ուրիշ
անգամ: Յեթե յերեխան շարունակ միայն նկարում է կամ միայն
ծեփում, սրտք է նրա համար հետաքրքրական դարձնել նաև
մյուս զբաղմունքները, առաջարկել նոր նյութեր, տալ վորևէ
հետաքրքրական առաջադրութիւն, յերբեմն ոգնել այն վրատա-
քելու, նշել նրա աշխատանքի լավ արդիւնքները և այլն:

Սահմանված զբաղմունքների ժամանակ յերեխաները նկա-
րում են, ծեփում են, թուղթ են կտրատում իրենց ընտրած կամ
զբաղմունքի առաջադրած թեմայով: Յերկու դեպքումն էլ դաս-
տիարակն ուշադրութեամբ հետևում է յուրաքանչյուր յերեխա-
յի զբաղմունքին, ոգնում է համապատասխան նյութեր ընտ-
րելու և աշխատանքն իր բովանդակութեամբ արվելի հետաքրքրա-
կամ դարձնելու:

Յեթե յերեխաներին առաջադրանք է տրվում, ապա այն

պետք է մատչելի և հետաքրքրական լինի նրանց համար: Առ-
տիճանաբար բարդացնելով առաջադրանքը, դաստիարակը դաս-
դացնում է յերեխաների ստեղծագործական ընդունակութիւնը:

Վորոշակի թեմայով զբաղմունքները հիմնականում տրվում
են բարձր խմբում. միայն շատ հեշտ առաջադրանքներ կանխելի
յե յերբեմն նաև միջակ խմբի յերեխաներին:

Փոքրիկ խումբը. — Մանկնապարտեզի փոքրերի խմբում անց
են կացվում զբաղմունքների հետևյալ տեսակները.

Նկարչութիւն՝ սև և դուրսովոր մատիտներով, նկարչու-
թիւն՝ ներկերով, նկարչութիւն՝ կավով (զրատախտակի վրայ),
վերջինս խաղերի և յերեխաների ընտրած ինքնուրույն զբաղ-
մունքների ժամերին:

Ծեփ՝ կավից:

Թղթի զբաղմունքներ՝ վտրատել ամուր թղթից, փակցնել
դուրսովոր թղթից կտրած պատրաստի ձևեր (քանակիւտի,
չրջան, յեռանկյունի) ու վոչ-բարդ նկարներ (խնձոր, գնդակ
և այլն), աղատ կտրել և փակցնել (ապիկիացիաներ) դուրսդուրս
թղթից:

Յերեխաներին հնարավորութիւն տալով զբաղվել արտոն նը-
կարչութեամբ, ծեփով և թղթի վտրատումով, դաստիարակը հե-
տըհետե հասցնում է նրանց ծանոթ առարկաներ նկարելու հըմ-
տութեանը, առանձին յերեխաներին հարցնում է, թե ինչ են
նրանք նկարում, խորհուրդ է տալիս վերցնել մի ուրիշ գույնի
ներկ և այլն:

Կարևոր է յերեխաներին սովորեցնել մաքրութիւն պահ-
պանել ձեւիելու և նկարելու ժամանակ, սեղանը, իրենց հարուս-
տը չկեղտոտել, կավը չթափել հատակին, վրձինը, ջերով բա-
ժակի յեզրին, կամացուկ մզել, ներկերը չխառնել, մատիտը,
վրձինը, մկրպտը կանոնավոր բռնել, մատիտը չսփիթ դուրս չը-
սեղմել և այլն:

Թղթից կտրած ձևերը փակցնելիս պետք է յերեխաներին
սովորեցնել սոսինձը շատ թանձր չքսել և խնամքով փակցնել
թղթից կտրած ֆիգուրները և հարթել շորի կտորով: Դաստիա-
րակը յերեխաներին սովորեցնում է ճիշտ անվանել իրենց գոր-
ծածած ներկերը և թղթի գույները: Սկզբում յերեխաներին պետք
է տալ մատիտներ՝ վորպես ավելի ծանոթ և արագ նյութից հե-
տո՝ կավ, վորոչ ժամանակից հետո ներկեր (գուրջ, սոսնձաներկ

և այլն)՝ նախ 2—3 խխտ միմյանցից տարբերվող դույնի, իսկ հետո ավելացնել և ուրիշները: Գյուղի մանկապարտեզի պայմաններում, վորտեղ յերեխան փոքր հասակից ոգտվում է բնական նյութերից (ավաղ, կավ), կարելի յե այդ նյութերը տալ առաջին հերթին:

Գունավոր մատիտները և ներկերը պետք է տալ վառ կոնսրաստ, առաջին հերթին՝ հիմնական դույների: Մատիտների և ներկերի քանակը շատ չպետք է լինի՝ տարվա սկզբին 2—3 դույնի: Հետագայում յերեխաները կարող են ոգտվել մոտ 5—7 դույնի մատիտներից: Մատիտներով նկարելու համար պետք է գործածել ամուր թուղղ, ուղղանկյուն կտրտված (որինակ, 20×15 սմ), իսկ ներկերով նկարելու համար քայ դունավոր սեղանի թուղղ 20×30 սմ չափի: Ներկերի համար պետք է տալ խողի մազի վրձիններ (մոտ 1 սմ հաստութամբ):

Ծեփելու համար ավելի լավ է սգտադործել կավ և վոչ թե պլաստիկն: Պետք է ծեփել փոքրիկ ստիտատիներ Վրամ լինովու՝ մի վրա: Նպատակահարմար է այդ խմբում կավը տալ առանց լրացուցիչ նյութերի:

Թղթից կտրատելու և փակցնելու համար լավ է գործածել կոնսրաստ դույնների վառ թուղթ, սկզբում 2—3 դույնի, հետո ավելացնել մյուս դույները (նույնը, ինչ վոր ներկերով նկարչության համար): Թուղթը կարելի յե գործածել դունավոր, չփայլող կամ վայուն, սոսինձը՝ կարտոֆելի կամ ցորենի ալյուրից, մկրատը՝ փոքր չափի և անսպասան բութ ծայրերով:

Միջակ խումբը.— Միջակ խմբում անց են վացվում հետևյալ գրադմունքները՝ նկարչութուն մատիտներով և ներկերով, ազատ կամ դաստիարակի առաջարկած թեմայով: Դեկորատիվ նկարչութուն ներկերով, յերկրաչափական ձևեր (չրջան, քառակուսի, յեռանկյունի) նկարելը, նկարչութուն սպիտակ և դունավոր կավիճներով՝ դրատախտակի վրա:

Ծեփ՝ ազատ, յերբեմն առաջադրանքով:

Ձմռան դրոսանքների ժամանակ հնարավոր է ձյունից դնելը դլորել և այդ դնելը դարդարել պատրաստի ներկած սառցակտորներով, դրոշակներով տիկնիկների համար սառցարլուր կառուցել և այլն:

Ձրադմունքները թղթով՝ կտրտելը և փակցնելը (ապլիկացիա) դունավոր թղթից:

Յերեխաներին պետք է տալ յերկրաչափական ձևեր կտրտել ուրվագծերով և նրանք փակցնել նախշերի ձևով, ինչպես և նըրանցից ազատ կոմբինացիաներ կազմել ըստ դույնի և ձևի: Ամուր թղթից ուրվագծերով կտրտել ծանոթ առարկաների սլուեաներ և ուտադործել խաղի ժամանակ: Ծարելու միջոցով թղթից խաղալիքներ պատրաստել (մակույկ, դլխարկ և այլն):

Այլ նյութերով դրադմունքներ՝ պատրաստել ամենապարզ խաղալիքներ (խաղալիք կահույք, սավառնակներ, շողենալներ), գանադան սուսիերից, կոճերից, տախտակի կտորներից, քառանկյունի և կլոր ձողերից, փոքրիկ անիվներից, կարտոնի կտորներից և այլն: Հողի կամ ավաղի մեջ խաղալիք՝ սեղաններ, նրատարաններ չինել: Մանր քարերից, կոճերից, կաղիններից, մասուրներից նկարներ, նախշեր չարել:

Յերեխաների ստեղծագործութունը դարձացնելու համար դաստիարակը խրախուսում է յերեխաների նախաձեռնությունը, յերբեմն տալիս է փոքրիկ, պարզ առաջադրանքներ, որինակ՝ նկարել՝ ինչպես են թռչում սալամանակները, կավից շինել դանադան պտուղներ, բանջարեղեն, ամանեղեն, կենդանիների և մարդկանց Փիղուրներ և այլն:

Պարապմունքների ժամանակ դաստիարակը ցուցումներ է տալիս, թե ինչպես պետք է ձևա ոգտվել նյութերից՝ մատիտից, վրձինից և այլն, ցույց է տալիս ավելի ձևա ձևերը, ոգնում է ավելի լավ պատկերել առարկաները՝ խորհուրդներ տալով հիշեցնելով տվյալ առարկայի կամ յերեույթի մասին, յերեխաների հետ մխասին դխտելով առարկան, յերեույթը և այլն:

Ձանադան նյութերից վորեե բան կառուցելիս՝ յերեխայի համար դժվարութուն առաջ դալու դեպքում դաստիարակն անմիջապես ոգնում է նրան (կապում է շպագատը, սղոցում է տախտակը և այլն) և յերեխաներին ել մասնակից է դարձնում իրենց ընկերներին ոգնելու գործին:

Յերեխաները հետզհետե վարժվում են պատկերել մի ընդհանուր թովանդակությամբ մխավորված առարկաների փոքրիկ խմբերն ոգտադործել նկարները քաղմասպիսի դուդորդումներով և տալ վոչ բարդ նախշեր դեկորատիվ նկարներում և այլն:

Յերեխաներն ըստեղանում են ներկը ինամքով վերցնել վրձինով, վրձինը փողոկել ջրի մեջ և սրբել շորով, ձևա ձևով ոգտվել մկրատից և ինամքով վերաբերվել նյութերին:

Նկարչու թխան համար նպատակահարմար և բացի սպիտակ թղթից տալ նաև բաց դույնի թուղթ:

Յերբեմն կամի հետ կարելի չե տալ լրացուցիչ նյութեր՝ ձողիկներ, ճյուղեր, մանր քարեր, խխունջի խեցիկներ և այլն: Կամ չունենալու դեպքում այդ հասակի յերեխաներին կարելի չե տալ պլաստիկ, բայց բավարար քանակությամբ, վորպեսզի աշխատանքները չափազանց մանր դուրս չգան և հնարավոր լինի վորոչ ժամանակ պահել նրանց խմբում:

Տախտակի կտորները, քառանկյունի ձողիկները, վորոնք գործ են անում խաղալիքներ շինելու համար, պետք է լինեն հղկված: Տախտակի կտորները պետք է լինեն փափուկ տեսակի փայտից՝ սոճի, յեղևնի, լորենի: Մուրճի քաշը՝ 100—125 գրամ:

Մեծերի խումբը և 7 տարեկան յերեխաների խումբը: Մեծերի խմբում և 7 տարեկան յերեխաների խմբում անց են կացվում հետևյալ սրահայմունքները. Նկարչութուն՝ ազատ և ըստ առաջադրանքի, դունավոր մատիտներով և ներկերով դեկորատիվ նկարչութուն (սոսնձաներկ, ջրաներկ, դուռաչ), սպիտակ և դուռնավոր կավիճներով գրատախտակի վրա ազատ նկարչութուն:

Ամառվա պայմաններում պետք է խրախուսել նկարչութունն ավաղի վրա, նկարներ դուրս բերել, շարելով ավաղի, հողի վրա զանազան նութեր, նայած բնական պայմաններին (մանր քարեր, սոճու կոներ, խխունջի խեցիկներ, մասուր և այլն): 7 տարեկան յերեխաների խմբում առաջադրանքով նկարչութունն ավելի մեծ տեղ է բռնում քան նախորդ խմբում:

Ծեփ կավով՝ ազատ և առաջադրանքով: Կարելի չե ուղտագործել և լրացուցիչ նյութ՝ ձողիկներ, ճյուղեր, դրոշակներ և այլն:

Ձմեռը յերեխաները կարող են տեղամասում ձյունից ծեփել կենդանիների, մարդկանց Փիգուրներ, տնակներ, շոգենավեր՝ խաղի համար և այլն, զարդարելով դրանք դաստիարակի հետ միասին նախորդ պատրաստած դունավոր սառցակտորներով, ձյունի վրա շտամպներով դրոշմել Փիգուրաներ:

Պարսպունքներ թղթով՝ ազատ կտրատել և փակցնել, յերկրաչափական ձևեր կտրատել ուրվագծերով և նրանցից դեկորատիվ ապլիկացիաներ կազմել:

Ամուր թղթից կամ կարտոնից Փիգուրներ կտրտել (ուրվագծերով), ամբաջնել դրանք հենարանների կամ ձողիկների վրա և ուղտագործել խաղերի կամ սուվերային թատրոնի համար:

Թուղթը կորացնելով և ծալելով պատրաստել դանաղան սնամեջ խաղալիքներ (մակույկներ, դլխարկներ, դամբոլուկներ, տնակներ, տոնածառի համար լապտերներ և այլն) և նախել:

Ձրաղմունքներ բնական և այլ նյութերով՝ սյուժետային և դեկորատիվ ապլիկացիա չորացրած ծաղիկներից, կեչի ծառի բարակ կեղևից, մամուռից: Ինքնադործ խաղալիքների կառուցում կաղիններից, սոճու կոներից, ծառի կեղևից և այլ տեղական քանական նյութերից: Թելի կամ լարի վրա շարել կաղիններ, կոներ, հատապտուղներ (մասուր և այլն), նրանցից զարդարանքներ պատրաստել տիկնիկների անկյունի համար և այլն:

Խաղալիքներ կառուցել դանաղան տուփերից, տախտակի կտորներից, քառանկյունի և գլանաձև ձողերից, անխմբերից, կոճերից: Կարտոնից, թղթի կտորներից և այլ բազմազան նյութերից՝ ուղտագործելով սոսինձ, թել, մեխեր և այլն:

Վերոհիշյալ աշխատանքներից մի քանիսը կարելի չե ներկել սոսնձաներկերով, անելինի ներկերով: Ամառը պետք է խրախուսել դեռևս վրա խաղատնակների, ցանկապատերի, նույնպես և տիկնիկների համար ծածկեր, օղակափարներ կառուցելը: Պետք է յերեխաներին խաղերի և պարսպունքների համար կավ և ավաղ տալ (առվակներում պատվարներ շինելու, տիկնիկների տնակները սվաղելու և այլ աշխատանքների համար):

Յերեխաներին պետք է հնարավորութուն տալ կարել և ասեղնագործել դանաղան տիկնիկային պարազաներ՝ անձեռնոցիկներ, սրբիչներ, շապիկներ, տրուսիկներ, դլխարկներ և այլն: Մեծահասակ յերեխաներն արդեն իրենք կարող են կարել կոճակները: Հարկավոր է, վոր յերեխաները, շուրջելով, սպիտակ կամ բաց միագույն կտորի վրա վառ դույնի թելերով ասեղնագործեն: Միզբում նպատակահամար և յերեխաներին պատրաստի նկար տալ, հետագայում յերեխաներն իրենք կարող են ասեղնագործի համար նկարներ հորինել: Դաստիարակը ցույց է տալիս, թե ինչպես պետք է բռնել ասեղը, ինչպես պետք է միմյանց հետ կարել գործվածքի յերկու կտորներ և այլն:

Կազմակերպելով յերեխաների ծեփը, նկարչութունը և մյուս պարսպունքները, դաստիարակը պետք է ձգտի այն բանին, վոր յերեխաները կարողանան աշխատել վոչ միայն ինքնուրույն կերպով, իրենց մտքում ծագած թեմայով, այլ և դաստիարակի առաջարկած թեմայով: Թեմաները դաստիարակը կարող է վերց-

նել բնության յերևութներէց, հասարակական կյանքից կամ կար-
գացված հեքիաթից, դբքից, որինակ, թուշուների չիկլը, տերեա-
թափը, պուրակը ձմեռ ժամանակ, տոնակատարութիւնն և նոյնն:

Յշխատանքի պրոցեսում դաստիարակը կարող է ողնել յե-
րեխաներին, անմիջականորեն ցույց տալով տվյալ աշխատանքի
կատարման առանձին ձևերը: Աչքի չափով թուղթ կտրտելու ժա-
փանակ կարելի չէ ցույց տալ դանազան համաչափ առարկաներ
կտրտելու ձևը՝ թուղթը յերկատակ ծալելու միջոցով: Յերկրաչա-
փական ձևերից նախշեր կազմելու կամ զարդանկարչութիւն հա-
մար սկզբնական պարագմունքների ժամանակ կարելի չէ ցույց
տալ պատրաստի որինակներ:

Անծ յերեխաներին կարելի չէ զարդանկարելու համար տալ
յերբեմն դանազան ձևի ամանեղենի սիրուեալներ, որինակ՝ սա-
փուր, վաղ, դափաթ և այլն, կամ առաջարկել յերեխաներին հորի-
նել զարդանկար՝ տիկնիկային գորգէ, դոզնոցի, անձեռոցիկի
համար: Յերեխաները կարող են նույնպէս մասնակցել խաղերի
համար զգեստների զարդարմանը (տրաֆուրետի ողնութիւն):
Յերբեմն կարելի չէ տալ սպիտակ թուղթ՝ դանազան դույներով
կամ մարմարի դույնի ներկելու համար:

Ներկերով նկարելու ժամանակ պետք է սովորեցնել յերեխա-
ներին խոսնել ներկերը վորոչ դույներ ստանալու համար (կանաչ,
բաց մանուշակագույն, նարնջագույն):

Դաստիարակը մեծ ուշադրութիւն պետք է դարձնի նույն-
պէս դանազան նյութերից խաղալիքներ կառուցելու վրա:

Յերեխաները յերբեմն իրենք կարող են տախտակի կտորները
կտրտել սղոցատուփի ողնութիւն:

Պարագմունքները բնթացքում դաստիարակը յերեխաներին
սովորեցնում է լավ կշռագատել իրենց աշխատանքը, տալ ավելի
բազմազան բովանդակութիւն նկարներ և այլն և, ըստ ձևի՝ ա-
վելի կատարելագործված, այսինքն ավելի բազմաթիւ հատկա-
նիշներով պատկերված առարկաներ՝ որինակ, թուշող սափառնակ-
ներ կարինով, նրա մեջ նստած ողաչուով, պրոպիլերով և ստան-
ձին առարկաների և նրանց մասերի միջև ավելի ճիշտ համաչա-
փութիւն պահպանելով:

Դաստիարակն աստիճանաբար զարդացնում է յերեխաների
մեջ քննադատական վերաբերմունք իրենց աշխատանքների նկատ-
մամբ, զգուշութիւն մատնանշում է յերեխաների աշխատանքի ա-

ռանձին թերութիւնները՝ նրանց ուղղելու նպատակով, խրախու-
սում է յերեխաների ձգտումը՝ միանալ փոքրիկ խմբերով ընդ-
հանուր աշխատանքի համար, ողնում է նրանց՝ աշխատանքի բա-
ժանում կատարելու գործում:

Այդ խմբերի յերեխաներին տրվում են ավելի բազմազան
նյութեր՝ լրիւ կոմպլեկտներով դուճակով մատիտներ, ներկեր,
դուճակով կալիճներ, զանազան տեսակի և դույնի թուղթ, պարզ
կամ ծաղկանկարներով դանազան դույնի փափուկ գործվածքներ,
դույնագույն թելեր, տախտակի կտորներ, քառանկյունի և դլա-
նածէ ձողիկներ, փոքրիկ անխիւներ, Փաների շերտիկներ և
այլն: Նախորդ խմբերի համար մատնանշված նյութերն այստեղ
չեն թվաբկվում, բայց նրանք մնում են գործածութիւն մեջ նաև
այս խմբերում:

ԳԼՈՒԽ IV

ՅԵՐԱՎՈՒՆՆԵՐԻ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Յերաժշտական դաստիարակութիւնը նպաստում է նախադպրոցական յերեխայի ընդհանուր յերաժշտական դարձացմանը՝ դաստիարակում է նրա հետաքրքրութիւնը դեպի յերաժշտութիւնը, դարձացնում է նրա յերաժշտական լսողութիւնը, յերաժշտական հիշողութիւնը:

Դրա հետ աւելնելով յերաժշտական դաստիարակութիւնը նըպաստում է յերեխաների մեջ աշխուժ և ուրախ տրամադրութիւն ստեղծելու, դաստիարակում է նրանց մեջ սեր դեպի մեր հայրենիքը, դեպի նրա առաջնորդները, հերոսները, դեպի խորհրդային յերկրի լայնագոյն մարդիկ, նպաստում է մանկական կողեկտիլի կազմակերպմանը, հույզերի դաստիարակմանը, դարձացնում է յերեխայի յերեւակայութիւնը, ուշադրութիւնը, շարժումների վորոշակիութիւնը և արտահայտիչ բնույթը:

Յերեխաների յերաժշտական դաստիարակութիւնն անց է կացվում յերաժշտութիւնն ունկնդրման, յերգեցողութիւնն և նվազի տակ կատարվող շարժումները*) ձևերով, վորոնք կազմում են մի անբաժան ամբողջութիւն և դաստիարակչական աշխատանքում սերտ կերպով հյուսված են միմյանց հետ:

Յերաժշտական դաստիարակութիւնն ինդիւրները կարելի յե իրադործել միայն այն դեպքում, յերբ դաստիարակը սխտեմատիկ աշխատանք տանի յերաժշտական դաստիարակութիւնն ուղղութիւնը, յերբ յերգը և նվազի տակ կատարվող շարժումները մտնեն մանկապարտեզի ամենորոյա կյանքի մեջ:

Կարելի յե անցկացնել յերաժշտութիւնն ունկնդրում, նվա-

*) Մանրագրութիւն. «Ռիթմիկ» դարձվածքը փոխարինված է «շարժումներ յերաժշտութիւնն տակ» դարձվածքով: Այդ հասկացողութիւնն ավելի լայնորեն և ավելի լրիվ է ընդգրկում ծրագրում ամփոփված շարժումները՝ ծավալը և բաղմատեսակ բնույթը:

զի տակ կատարվող շարժումներ՝ տիկնիկային թատրոնի ցուցադրման, հեքիաթի դրամատիզացիայի, յերեխաների խաղի ամառային դրոսանքների ժամանակ և այլն:

Մանկապարտեզի բոլոր խմբերում պետք է վորոշակի որեր և ժամեր հատկացնել սահմանված յերաժշտական պարապմունքներին համար:

Մովորաբար յերաժշտական պարապմունքներին մեջ մտնում են յերգերը, յերաժշտական հատվածի կամ յերգի ունկնդրումը և շարժումները (յերաժշտական խաղ, պար և այլն):

Պարապմունքներն անց են կացվում յերեխաների ամբողջ խմբի հետ միաժամանակ, յերբեմն էլ՝ փոքրաթիւ խմբի հետ:

Պարապելով յերեխաների փոքրաթիւ խմբի հետ, դաստիարակը կարող է լսել մի քանի յերեխաների յերգը, հնչեցնելով և յերկար չպահելով ամբողջ խումբը, յերեխաների հետ պար նախապատրաստել, լսել ծնծղա նվազող յերեխաներին, ողնել նրանց, տալով հարկավոր ցուցումներ:

Դաստիարակը հնարավորութիւնն պետք է տա յերեխային դրսևորել իր ստեղծագործական ունակութիւնը, որինակ, յերաժշտութիւնը լսելուց հետո յերեխան շարժումներով յորորեն վերարտադրում է յերաժշտութիւնն բնույթը և յերաժշտական յերկի տարբեր մասերը:

Պարի հաջող հորինված շարժումները դաստիարակը կարող է խրախուսել և առաջարկել այն կատարել բոլոր յերեխաներին:

Յերեխայի ստեղծագործական ունակութիւնը դրսևորվում է յերբեմն այն բանում, վոր նա յերգում է իր մեկողիաները դանաղան տեքստերով, վանկերով (լյա-լյա), նվազում է մեկողիաներ ծնծղայի վրա: Դրա համար պետք է յերեխաներին տալ ճշտորեն լարած ծնծղաներ, քսիլոֆոններ, դանդակներ, դալներ, հնչուն յեռանկյուններ, թմբուկներ:

Ավելորդ աղմուկից խուսափելու նպատակով անհրաժեշտ է տալ փոքր քանակութիւնը յերաժշտական խաղալիքներ (ծնծղաներ՝ յերկուսից վոչ ավելի) միաժամանակյա ազատ ոգտադործման համար:

Դաստիարակը պատասխանատու յե իր խմբի յերաժշտական դաստիարակութիւնն համար և սկտիվորեն մասնակցում է այդ դործին նաև այն մանկապարտեզներում, վորտեղ կա հատուկ յերաժշտական աշխատող: Դաստիարակը մասնակցում է յերաժշ-

կան պարապմունքների պլանավորմանը, քննարկում է յերաժշտական աշխատողի հետ միասին առանձին յերեխաների յերաժշտական դաստիարակության հաջողություններն ու թերությունները և միջոցառումներ է նշում թերությունների վերացման նկատմամբ:

Դաստիարակը յերաժշտական աշխատողի ուղնությամբ յորաջանում է յերաժշտական նյութը, վերաբերել կարողանա ճիշտ անցկացնել յերգեցողությունը, խաղերը, սյարերը, յերաժշտության ունկնդրումը (որինակ, պատեֆոն), յերաժշտական աշխատողի ուղնությամբ սովորում է նվագել յերաժշտական խաղալիքները և այլն: Այսպիսով դաստիարակը հետզհետե լծվում է յերեխաների հետ անցկացվող ամեն տեսակի յերաժշտական աշխատանքներին և պատրաստվում է յերաժշտական պարապմունքներ անցկացնելու համար:

Այն մանկապարտեզներում, վորտեղ դաշնամուր չկա, յերաժշտական պարապմունքներն անց են կացվում ուրիշ գործիքների (ջուլակ, մանդոլինա, կիթառ և այլն), դաստիարակի յերգի տակ, պատեֆոնի, ռադիոյի (մանկական հաղորդումներ) ուղնությամբ: Մեծ չափով կարող են ողտագործվել ժողովրդական յերաժշտական զանազան գործիքներ:

Յուցումներում սրված է որինակելի ուսերտուարներն ըստ խմբերի, բայց այդ չի նշանակում թե ուսերտուարը պետք է կատարել ամբողջությամբ և նույն կարգով, ինչպես սրված է: Նյութն ընտրելու ժամանակ դաստիարակը հաշի պետք է առնի սովյալ մանկապարտեզի աշխատանքի կոնկրետ պայմանները: Ռուսերտուարում ցույց սրված ժողովրդական յերգերի հետ միասին, պետք է ողտագործել նաև տարբեր ազգությունների ժողովրդական յերգերից իրենց մեղոթիայով և տեքստով յերեխաների համար մատչելի յերգեր:

Անհրաժեշտ է նաև ողտագործել յերեխաների համար մատչելի ազգային պարերը:

Տարբեր ազգությունների ժողովրդական յերգերը, պարերը, յերաժշտությունը յերեխաների մեջ հետաքրքրություն են դաստիարակում դեպի նրանց ստեղծագործությունները, նպաստում են յերեխաներին ինտերնացիոնալ վոյով դաստիարակելու գործին:

«Յերաժշտության ունկնդրում», «Շարժումներ նվագի տակ» հատվածներում վորոշ պահանջներ կրկնվում են տարբեր խմբերում,

բում, սակայն այդ պահանջները յորաքանչյուր հաջորդ խմբում կատարվում են ավելի բարդ յերաժշտական նյութով:

Փռքերի խումբ: Յերաժշտության ունկնդրում: Յերեխաներն ամենից հեշտ են յուրացնում առանց գործիքի նվագակցության ձայնով յերգվող յերգը:

Մակայն, աստիճանաբար կարելի յե մտցնել յերգերի ունկնդրում գործիքի նվագակցությամբ, ինչպես նաև դաշնամուրի կամ մի այլ յերաժշտական գործիքի վրա կատարած յերգի ունկնդրում: Յերաժշտության ունկնդրումն այս խմբում անց է կացվում զլխավորապես նվագածությամբ կատարվող շարժումների հետ գուրգուրված (խաղեր, պարեր, վորոշ մարզանքներ): Որինակ նախ քան «Միտիկներն ու կատուն» խաղն սկսելը, դաստիարակն առջարկում է յերեխաներին լսել յերաժշտություն այն մասին, թե ինչպես են թուշում ծիտիկները, ինչպես է քայլում կատուն:

Այդպիսով յերեխաները սովորում են լսել մանկական յերգերը մեծահասակների կատարումով, ճանաչել յերգերը, լսելով լոկ յեղանակներն՝ առանց խոսքերի, ճանաչել յերգերը՝ լսելով նրանց բնորոշ ներածությունը, կամ լսել ամբողջը յերաժշտական գործիքի (դաշնամուրի, մանդոլինի) կատարումով, լսել վորքիկ, վոչբարդ և իրենց բնույթով արտահայտիչ յերաժշտական հատվածներ:

Յերգեցողություն: Սկզբներում յերեխան միայն լսում է յերգը, վորը կատարում է դաստիարակը: Լսելով յերգը, նա սկսում է ձայնակցել, յերգելով նախ առանձին բառեր, յերգի մասեր և ապա ամբողջ յերգը: Հետզհետե յերեխաները սովորում են ինքնուրույն կերպով վերջացնել դաստիարակի սկսած յերգը: Յերգի տեքստը չպետք է սովորեցնել առանձին, այլ միայն յերգի հետ: Տեքստի հստակ արտասանությամբ դաստիարակը նպաստում է տեքստի ճիշտ արտասանությանը յերեխաների կողմից:

Հարկավոր է ընտրել այնպիսի յերգեր, վորոնք իրենց բովանդակությամբ մատչելի և մոտիկ են յերեխաների հասկացողությանը, ունեն պարզ մեղոթիա և հեշտ է կատարել (համառոտ ֆրազներով և հնչյունների վորքը ծավալով, կամ ինչպես առում են՝ վորքը զխապաղոնով):

Այս վարժությունների ուղնությամբ յերեխաները հետզհետե սովորում են յերգել մանկական յերգեր՝ յերաժշտական գործիք

ների նվազակցութեամբ, դեկավարի ողնութեամբ, առանց մեկ-մեկուց հետ մնալու կամ առաջ ընկնելու:

Շարժումներ նվազի տակ: Նվազի տակ անց են կացվում միայն այն շարժումները, վորոնք յերեխաները լայլ են տիրապե-տել, այն է՝ քայլք, վազք և պարի շարժումներ (որինակ, ծափ տալը, վորտքերի դուրսընթաց, յերկու վորտքով ցատկելը, դարձեր և այլն): Այդ շարժումներն անց են կացվում խաղերում և պարե-րում:

Դաստիարակը յերեխաներին ցույց է տալիս շարժումները և մասնակցում է խաղերին ու պարերին: Հետզհետե յերեխաները սկսում են շարժումներն ինքնուրույն կատարել:

Այդպիսով՝ յերեխաները վարժվում են իրենց շարժումներով արտացոլել յերաժշտութեան ընդհանուր բնույթը (որինակ, հան-դարտ նվազի դեպքում նստում են, ուրիս նվազի դեպքում՝ պա-րում), սովորում են արտացոլել յերաժշտական արտահայտու-թեան առանձին ձևերը, այն է՝ հնչյունի ուժը, ուժգին, մեղմ (որինակ, ճոճում և պահում են դրոշակները), հնչյունի ռեզիս-տը՝ ցածր և բարձր (որինակ, «Ալտոնոբել և թռչնիկներ» խաղը) և տեմպն՝ արագ ու դանդաղ (որինակ, քայլք և վազք «Զիեր» խաղի մեջ):

Միջակ յերեխաների խումբ: Յերաժշտութեան ունկնդրում: Յերաժշտական դաստիարակութեան սխառնատիկ աշխատանքի պայմաններում միջակ յերեխաների խումբը կարող է ճանաչել դաշնամուրի կամ յերաժշտական մի այլ դործիքի վրա նվազած վոչ բարդ յերկերը, ինչպես նաև վորոշել յերկու կոնարաստ հան-դիսացող հատվածների յերաժշտութեան բնույթը՝ որինակ, դաս-տիարակը տալիս է յերաժշտական յերկու յերկ՝ «Նապաստակ-ները» և «Արջը», իսկ յերեխաներն իրենք են վորոշում, թե վոր յերաժշտութեանն է պատկերում նապաստակը և վորը արջը, կամ վոր յերաժշտութեանն է պարելու հարմար և վորը քայլելու: Իհարկե պարտադիր չէ, վոր յերեխաները միշտ վորոշեն յերաժշ-տական յերկի բնույթը, յերեխաները կարող են լսել յերաժշ-տութեանը՝ ըմբռնելով այն անմիջականորեն, առանց վերլու-ծութեան:

Յերաժշտութեան ունկնդրումը անց է կացվում վորպես ընդ-հանուր յերաժշտական պարապմունքի մի մասը, այլև վորպես ինքնուրույն պարապմունք: Այդ պարապմունքների ժամանակ յե-

րեխաները լսում են դործիքային յերաժշտութեան 1—2 հատված և դաստիարակի կատարած 1—2 յերգ: Այդպիսով պարապմունք-ները համերգի բնույթ են կրում և կարող են անցկացվել մոտա-վորպես ամսական 1—2 անգամ:

Այդ պարապմունքների արդյունքը լինում է այն, վոր յերե-խաները սովորում են լսել իրենց ըմբռնողութեան մասնակցի ման-կական յերգեր և մեծահասակների յերգեր՝ մեծերի խմբի յերե-խաների կատարմամբ (սոլո և խմբական), լսել յերաժշտական փոքր հատվածներ դուենդ, պատկերավոր բնույթ ունեցող դոր-ծիքային յերկերից, որինակ, Բարխուդարյանի պարերը և Տիգ-րանյանի, Լ. Սարգսյանի, Ա. Մանուկյանի մանկական յերգերը՝ «Արջը», յերաժշտութեան Վ. Ռեբրիկովի, «Նապաստակը», յերա-ժեշտ Ա. Գրիչանինովի, տարբերել խիստ կոնարաստ ներկայաց-նող յերկու յերաժշտական հատվածների բնույթը, որինակ, «Ռ-րոր» և «Բայլերգ», յերաժշտութեան Ա. Գեդիկելի, ճանաչել դործիքային յերաժշտական ծանոթ ու համեմատաբար ավելի հեշտ յերկերը:

Յերգեցողութուն: Յերգ սովորեցնելու ժամանակ դաստիա-րակը հետևում է մելոդիայի ճիշտ կատարմանը, յերեխաների ուշադրութեանը բուռնում է բառերի առողանութեան վրա, բա-ցատրում է առանձին բառերի նշանակութեանը և ցույց է տա-լիս, թե ինչպես պետք է այդ բառերը ճիշտ արտասանել, հետե-վում է, վոր յերեխաները ճիշտ կեցվածք ընդունեն յերգելու ժա-մանակ (վոր յերեխաները ջկոսանան, դուրսները չկախեն):

Յերգերի նյութի համապատասխան ընտրութեամբ, իր սե-փական որինակով, ցուցումներով (չգոռալ, բառերի վերջավո-րութեանը տալ առանց գոռալու, ճիշտ շեշտել բառերը) և այլ ձևերով դաստիարակը սովորեցնում է յերեխաներին յերգել ա-ռանց ճչալու:

Աստիճանաբար յերեխաները սովորում են յերգել վորոշ յերանգավորումով, որինակ, յերգել մեկ կուպլետն ուժգին, մյուսը՝ մեղմ, նայած յերգի բնույթին ու տեքստին:

Յերեխաները կարող են յերգել վորոշ յերգեր խմբերի բա-ժանվելով, այնպես, վոր յերեխաների մի խումբը կատարի յեր-գի չկրկնվող մասը, մյուսը՝ յերգի կրկնվող մասերը:

Ի վերջո՝ յերեխաները սովորում են յերգել բնական ձայնով (առանց գոռալու)՝ տալ ամենապարզ յերանդները՝ յերգելու մեջ

(յերգել ուժգին, մեղմ), ճիշտ կատարել ամենապարզ յերգերի մեղուխաները, (գործիքի նվազակցութեամբ կամ դաստիարակի ոգնութեամբ):

Շարժումներ նվագի տակ: Միջակ խմբի յերեխաները կարող են ավելի ճշգրիտ արտացոլել յերաժշտական արտահայտութեան վորոշ միջոցները (ուժգին, մեղմ, արագ, դանդաղ), տարբերել խիստ կոնտրաստ ներկայացնող յերկու յերաժշտական հատվածների բնույթը և շարժումներով արտահայտել յերաժշտութեան բնույթը («ցատկում են նապաստակները» կամ «քայլում են արջերը»), ընդհատել շարժումները յերաժշտական յերկի վորևե մասը վերջացնելու հետ կամ փոխել շարժումները՝ յերբ սկսվում է մյուս մասը:

Պարերի և մարզանքները ժամանակ դաստիարակը մեծ մասամբ յերեխաներին ցույց է տալիս շարժումները, իսկ խողերում յերեխաներն առավելապես յերաժշտութեան բնույթն արտահայտում են շարժումներով, առանց նախորդ տեսնելու այն:

Ի վերջո՝ յերեխաները սովորում են իրենց շարժումներով ընդգծել յերաժշտական արտահայտութեան վորոշ միջոցները՝ հնչյունի ույժը (ուժգին, մեղմ), ռեդիստրները (բարձր և ցածր հնչյուններ), տեմպը (արագ, դանդաղ), իրենց շարժումները հարմարեցնել յերաժշտական ձևին, շարժումներով ընդգծել յերգի չկրկնվող և կրկնվող մասերն ու գործիքային յերաժշտական նյութի առանձին մասերը:

Մեծերի խումբ: Յերաժշտութեան ունկնդրում: Մեծերի խումբում ունկնդրելու համար արվում է ավելի բարդ յերաժշտական նյութ, քան նախորդ խմբում, — ավելի յերկար յերաժշտական հատվածներ, իրենց մեղուխայով և հարմոնիայով ավելի բարդ յերաժշտական յերկեր:

Այս պարապմունքերի միջոցով յերեխաները սովորում են լսել մանկական յերգերը և մեծահասակների յերգերը (հեղափոխական, ժողովրդական, մասոսյական) վորոշ մասջելի յեն յերեխաների ըմբռնողութեանը, բայց բարդ են յերեխաների կատարման համար (մեծահասակների կատարմամբ՝ սոլո, դուետ, խումբ) լսել վոչ-ընդարձակ յերաժշտական հատվածներ դուետը, պատկերավոր բնույթ ունեցող գործիքային յերաժշտական յերկերից, տարբերել յերաժշտական յերկերում կոնտրաստ հանդի-

սացող մասերը, ճանաչել տարբեր յերաժշտական գործիքների վրա նվագած ծանոթ յերաժշտական յերկերը:

Յերգեցողութեան: Դաստիարակը մեծ ուշադրութեամբ և դարձնում մեղուխայի ճիշտ կատարմանը, ուշադրութեամբ դրահամար այնպիսի ձևեր, ինչպես սովյալ մեղուխան յերաժշտական գործիքի վրա նվագելը, յերգի անհաջող դուետ յեկած հատվածները կրկնելը մի քանի անգամ, առանց բառերի յերգելը դանդաղան վանկերով («լա», «լե»):

Այս խմբում յերգի կատարման նկատմամբ կարելի յե արդեն պահանջել ավելի արտահայտիչ յերանդամություն. որինակ յերեխան կարող է դանդաղեցնել յերգի վերջավորութեանը: Դրան դուղնթաց, դաստիարակը շարունակում է աշխատանքը՝ բառերը ճիշտ չեչառելու և դիկցիան պահպանելու ուղղութեամբ:

Աստիճանաբար պետք է մոտեցնել յերեխաներին այն բանին, վոր նրանք միասին սկսեն յերգը գործիքային ներածութեանից հետո կամ (առանց նվագի յերգելու ժամանակ) դաստիարակի սոված նշանով:

Ի վերջո՝ յերեխաները պետք է սովորեն հետեվյալը. յերգել ընական ձայնով, առանց դուռալու, բառերն արտասանել պարզորոշ, յերգի կատարման մեջ տալ վորոշ յերագավորում նայած յերաժշտութեան և տեքստի բնույթին (ուժգին, մեղմ, դանդաղեցնելով), յերգել (առանց դաստիարակի ոգնութեան, գործիքային նվագակցութեամբ) վոչ-բարդ յերգեր, ճիշտ կատարելով մեղուխան:

Շարժումներ նվագի տակ: Նվագի տակ կատարվող շարժումներում բարձր խմբի յերեխաներն ավելի մեծ չափով, քան նախորդ խմբում, կարող են դբսևորել յերաժշտական յերկի բնույթը. որինակ, Վ. Ռեբիկովի «Արջ» յերաժշտութեանը կատարելիս յերեխաները վոչ միայն ման են դալիս, պատկերելով արջին, այլև իրենց շարժումներով արտահայտում են սովյալ յերաժշտական յերկի բնույթը ուրիշմբ:

Բացի այդ, յերեխաները կարող են տալ յերաժշտական յերկի առանձին մասերն ավելի բարդ շարժումներով և շարժումների ավելի բարդ հաջորդականութեամբ, պարերում, առարկաներով (դնդակներով, գրողակներով, շրջանակներով և այլն) մարզանքներում:

Ի վերջո՝ յերեխաները պետք է սովորեն իրենց շարժումներ

ըով արտահայտել՝ ա) յերաժշտական յերկի ընդհանուր բնույթը, բ) յերաժշտական արտահայտութեան առանձին միջոցները, այն է՝ տեմպը (սովորական և դանդաղ քայլք, քայլք և թեթև վազք), հնչյունի ուժը (բարձր և ցածր, թեթև և ծանր քայլք), սահուն և հատու շարժումներ (լեզատտո և ստոկատտո), ռիթմը (քայլվածքով և վոստյուններով, կատարել յերգի կամ յերաժշտական դործիքներով նվագած յերկի վոչ ընդարձակ հատվածները, ծափ տալու, վոտներով դոփելու միջոցով, հարվածներով նվագող դործիքներով, խաղերով, պարերով և մարզանքներով), դ) ձևը, այն է՝ կուպլետները, յերգի ջերկնվող և կլոկնվող մասերը և դործիքային յերաժշտական յերկրի առանձին մասերը:

7 տարեկան յերեխաների խումբ: Յերաժշտութեան ունկնդրում: Այս խմբում դաստիարակն աստիճանաբար յերեխաներին մասնակցից է դարձնում յերաժշտական յերկի ընդհանուր բնույթը և նրա առանձին մասերի բնույթը վորոշելուն: Բացի այդ, ինչպես նախորդ խմբերում, անց է կացնում յերաժշտութեան ունկնդրում¹⁾:

Այս աշխատանքի նպատակն է՝ սովորեցնել յերեխաներին լսել մեծահասակների կատարած հեղափոխական, մասսայական յերգերը, նաև այն ժողովրդական յերգերը, վորոնք մատչելի յեն յերեխաների ըմբռնողութեանը, բայց բարդ են յերեխաների կատարման համար, լսել դործիքային յերաժշտական վորջրիկ յերկեր, վորոշել ամբողջ յերաժշտական յերկի ընդհանուր բնույթը. որինակ աշխույժ՝ XVIII դարի Փրանսիական քայլերգը, ուրախ՝ «Հոպակ», յերաժշտ Մ. Մուսորգսկու, հանդիստ՝ «Որոր», յերաժշտ. Ն. Ռիմսկի—Կորսակովի, տխուր՝ «Տխուր յերգ», յերաժշտ. Գ. Չայկովսկու, ինչպես նաև վորոշել առանձին մասերի բնույթը, որինակ, «Յար—Սմել» հատվածում «Թագավորի հարսնացուն» ոսբերայից, յերաժշտ. Ն. Ռիմսկի—Կորսակովի, I և III մասի աշխույժ, քայլերդային բնույթը և II մասի խաղի, պարի բնույթը: Նույն մոտեցումով ոգտադործել Կարո Ղաղարյանի, Մպենդիարյանի, Ռ. Մելիքյանի, Ա. Մանուկյանի և այլ յերաժշտագետների յերաժշտական համապատասխան յերկերը:

1) Յերաժշտութուն ունկնդրելիս յերեխաներին կարելի յե ցույց տալ մի քանի կոմպոզիտորների պորտրետները և հաղորդել նրանց անգլանունները:

Յերգեցողութուն: Այս հասակի յերեխաներն արդեն բավական ազատ տիրապետում են իրենց ձայնին, ուստի նրանք կարող են յերգել այնպիսի յերգեր, վորոնք գրված են արագ տեմպով, յերգել սահուն և հանդարտ մելոդիաներ, տալ յերգի մեջ հնչյունի աստիճանական ուժեղացումը և այլն:

Այս աշխատանքի շնորհիվ յերեխաները պետք է սովորեն յերգել սահուն կերպով (որինակ, Ն. Ստեփանյանի «Որորոցի յերգը») արտասանել բառերը յերգելու ժամանակ ճիշտ և պարզորոշ: Արագ տեմպով գրված յերգերը (որինակ, «Չարաճճի մանուկի սխա», յերաժշտ. Դ. Ղաղարյանի):

Շարժումներ նվագի տակ: 7 տարեկան յերեխաների խմբում պահանջների ծավալը հիմնականում մնում է նույնը, ինչ վոր նախորդ խմբում:

Տվյալ խմբի դաստիարակը գլխավորապես ուշադրութուն է դարձնում այս կամ այն առաջադրութեան կատարման վորակի վրա և ընտրում է ավելի բարդ յերաժշտական նյութեր:

Իրենց շարժումներով յերեխաները նշում են յերաժշտական յերկի այնպիսի մանր մասերը, ինչպիսին են յերաժշտական Ֆրազը: Բարդանում են նաև շարժումները, որինակ, տրվում է կողքի դնալով վոտների դոփյուն, ավելի բարդ կոմբինացիաներ առարկաներով:

Աշխատանքի հետևանքով յերեխաները իրենց շարժումներով պետք է ավելի վորոշակի արտահայտեն. ա) յերաժշտական յերկի ընդհանուր բնույթը, բ) յերաժշտական արտահայտութեան միջոցները, այն է՝ տեմպը (սովորական, դանդաղ և արագ քայլ, վորջի ծայրերի վրա թեթև վազք, խոշոր քայլերով վազք), սահուն և հատու շարժումներ (լեզատտո և ստոկատտո) ավելի բարդ վարժություններում, վորոնք անց են կացվում դնակներով (գլորելը հատակին և նշանի նետելը), ռիթմը, այն է՝ ծափ տալով, դոփյունով կամ հարվածահնչյուն յերաժշտական դործիքներով կատարել պարզ ռիթմով դործիքային յերաժշտական յերկի կամ յերգի վոչ ընդարձակ հատվածը (խաղերում, պարերում, մարզանքներում), դ) ձևը, այն է՝ կուպլետները, յերգի ջերկնվող և կլոկնվող մասերը, դործիքային յերաժշտական յերկի մասերը, յերաժշտական Ֆրազը (մարզանքներում, պարերում, խաղերում):

Գ Լ Ո Ւ Խ V

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆԸ

Յերեխաների ծանոթությունը բնությանը հանդիսանում է յերեխայի բաղմահողմանի զարգացման հիմնական միջոցներից մեկը:

Բնությունն իր բաղմազանությամբ, գեղեցկությամբ, շարժունությամբ, զբաղում է յերեխաների ուշադրությունը, բավականություն, ուրախություն և պատճառում նրանց:

Բնության գեղեցկությունը, նրա ձևերի, գույների, հնչյունների հարստությունն ոժանդակում է յերեխաների գեղարվեստական դաստիարակությանը, զգայարանների զարգացմանը, սանդժագործության զարգացմանը:

Ծանոթություն բնությանը յերեխային հարստացնում է վառ սպալօրություններով, բնության կյանքի մասին վրոնկրեոս պատկերացումներով, ընդլայնում է յերեխայի մտահորիզոնը և զբանով ոժանդակում է նրա մտքի ու խոսքի զարգացմանը:

Յերեխաների ծանոթությունը բնությանը գործում դաստիարակի առջև կանգնած են հետեյալ խնդիրները.

Դաստիարակել յերեխայի հետաքրքրությունը գեպի բնությունը, զարգացնել նրա գիտունակությունը և հարցասիրությունը: Ուգտագործել բնության հարստությունն ու բաղմազանությունը՝ յերեխաների զգայարանների զարգացման և գեղարվեստական դաստիարակության համար:

Տալ յերեխաներին տարրական պատկերացումներ բնության յերևույթների մասին, նրանց միջև յեղած ամենահասարակ կապերի մասին, սրայբարել յերեխաների մեջ յերբեմն հանդիպող մտտիապաշտությունների և նախապաշարումների դեմ:

Ընտելացնել յերեխաներին կենդանիներ և բույսեր խնամելու

գործին, դաստիարակել հոգատար և խնամոտ վերաբերմունք գեպի նրանց:

Դաստիարակը ծանոթացնում է յերեխաներին նրանց ըմբռնողությանը մտաչելի բնության սեղոնային յերևույթներէ հետ, ծանոթացնում է կենդանիների և բույսերի հետ և այն բանի հետ, թե ինչպես է մարդն ոգտագործում նրանց:

Ներկա «Ձեռնարկի» մեջ ցույց են տրված յերեխաներին բնությանը ծանոթացնելու հիմնական բովանդակությունն ու ուղիները Հայկական ԽՍՀ միջին գոտու պայմաններում: Յերեխույ տվյալ շրջանի բնության առանձնահատկություններից, բնության կոնկրետ շրջապատից, հաշվի առնելով իր խմբի յերեխաների զարգացումը, դաստիարակը կարող է նշված նյութը փոխարինել մոտակա բնության շրջապատից վերցրած նյութով: Այսպես որինակ՝ Հայկական ԽՍՀ տարբեր շրջաններում յերեխաները տեսնում են տարբեր բույսեր՝ բամբակ, ծխախոտ, ճակնդեղ, կամ որինակ, դաշտային վայրերում յերեխաները ձյուն քն են տեսնում. անձրևային թխպոտ որերի հետ մխասին, ձմեռ. ժամանակ նրանք պիտի դիտեն արևային տաք որեր:

Գյուղական մանկադարտեգներում (կոլտնտեսություններում, խորհանտեսություններում) դաստիարակը հնարավորություն ունի յերեխաների հետ միտին դիտել դաշտային, բանջարանոցային աշխատանքները տարվա բոլոր յեղանակներին, ընտանի կենդանիներին՝ Փերմաներում, դոմերում և այլն:

Յերեխաների ծանոթությունը բնությանը պետք է կատարել բաղմատեսակ մեթոդներով: Այդ մեթոդներից հիմնականները անմիջական ծանոթությունը բնությանը՝ վառ, կոնկրետ և բաղմատեսակ նյութի հիման վրա:

Բնության անմիջական դիտումը զբոսանքների ժամանակ, խողերի, զբաղմունքների ընթացքում յերեխաներին ոժանդակում է Տիշտ պատկերացումներ տառնալ բնության մասին, ուժեղացնում է հետաքրքրությունը գեպի նա, դաստիարակում է կայուն ուշադրություն, զարգացնում զգայարանները:

Դաստիարակը մեծ տեղ պետք է հատկացնի բնության մեջ կատարված զբոսանքներին, եքսկուրսիաներին, վորոնք յերեխաներին տալիս են նոր, վառ սպալօրություններ, աջակցում են գե-

դարվեստական դաստիարակութեանը, դարդացնում յերեխաների մտահորիզոնը:

Պետք է լայնորեն ողորդործվեն բազմատեսակ խաղերը, վորնց ընթացքում յերեխաներն անմիջականորեն ծանոթանում են բնութեանը, — խաղեր բնական նյութերով (ավազ, ջուր, ձյուն, ծաղիկներ, տերևներ, պտուղներ և այլն), խաղալիքներով, վորոնք դործածութեան մեջ են մտնում ջրի, քամու միջոցով, փենդանիների ձայներն ու չարժուճներն ընդդրինակելու խաղեր:

Յերեխաների ուժերին համապատասխան՝ կենդանիները և բույսերը խնամելու վերաբերյալ պարագմունքները դաստիարակում են հողատար վերաբերմունք դեպի դրանք, յերեխաների մեջ դարդացնում են դիտունակութեան, հարցասիրութեան, պատասխանատվութեան զգացմունք:

Բացի անմիջական դիտողութեաներից, յերեխաներին բնութեանը ծանոթացնելու համար պետք է ողորդործվեն գեղարվեստական պատմվածքները, նկարները, գրքերը, այտակոպը, ըստ վերային թատրոնը, վորոնք ուժեղացնում են յերեխաների հետաքրքրութեանը դեպի այն յերևույթները, վոր նրանք դիտել են ճշգրտում են յերեխաների պատկերացումները նրանց մասին և ծանոթացնում են նոր փաստերի հետ, վորոնց անմիջական դիտումը հնարավոր չէ տվյալ պայմաններում:

Նկարչութեանը, ծեփը և մյուս նյութերի հետ կապված ըզբազմունքներն ունենում են յերեխային՝ ստեղծագործելով արտահայտել այն տպավորութեանները, վոր նա ստացել է բնութեանը ծանոթանալու ընթացքում:

Մեծերի խմբում նպատակահարմար է պահել բնութեան որպացույց, կազմել այրոմներ, ջոկել, խմբավորել բնական նյութերը՝ բազմատեսակ խաղերի և զբազմունքների մեջ ողորդործելու համար:

Անհրաժեշտ է մանկապարտեզում կազմակերպել բնութեան անկյուն, մանկական բանջարանոց և ծաղկանոց, ընտրել համապատասխան սարքավորում, — գրքույկներ, նկարներ, բազմազանազան պիտույքներ և խաղեր:

Բնութեան անկյունում դաստիարակը տեղավորում է յերեխաներին հետաքրքրող կենդանիներին (որինակ՝ ձկներ, թռչուններ, սկյուռ, վողնի, կրեա և այլն) բազմատեսակ տերևներով, ծաղիկներով տնային բույսեր: Ըստ սեղոնի, բնութեան անկյուն

ները լրացվում է նոր կենդանիներով և բույսերով: Դա ապահովում է յերեխաների տպավորութեաններին փոփոխումը, ոգնում է ճշտել սեղոնային յերևույթների մասին նրանց պատկերացումները: Բանջարանոցի և ծաղկանոցի համար ընտրվում են այն կուլտուրաները, վորոնք տարածված են տվյալ վայրում, մեծ խնամք չեն պահանջում և հետաքրքրական են յերեխաների հետ դիտողութեաններ կատարելու համար:

Դաստիարակը պետք է պահպանի յերեխաների հետաքրքրութեանը դեպի անկյան և տեղամասի կենդանիներն ու բույսերը: Այդ նպատակով նա դիտողութեանները դարձնում է բազմազան, կապում է դրանք դրոսանքների, եքսկուրսիաների ժամանակ կատարվող դիտողութեանների հետ, ողորդործում է պատմվածքները, վոտանավորները, հանելուկները: Անհրաժեշտ պայմանը, վորի միջոցով յերեխաների ծանոթութեանը բնութեանը կարելի յէ դնել անհրաժեշտ բարձրութեան վրա, հանդիսանում է իրեն՝ դաստիարակի անհրաժեշտ դիտելիքների և դեպի բնութեանն ունեցած հետաքրքրութեան առկայութեանը:

Փոքրերի խումբ: Աշուն: Զբոսանքների ժամանակ դիտել, թե ինչքան շատ տերևներ կան գետնին, վաղվեցել նրանց վրայով, լսել՝ ինչպես են նրանք խշխշում վոտի տակ, խաղալ տերևներով, պտուղներով (յեղևնակոններ, կաղիններ), տարբերել նրանց մեծութեանը (մեծ, փոքր), տերևների գույնը (կարմիր, դեղին, կանաչ):

Մենյակը դարդարելու համար դնել գեղեցիկ տերևներով ձյուղեր, ծաղիկներ, յերեխաների ուշադրութեանը դարձնել ծաղիկների գեղեցիկութեան վրա, տարբերել և ճանաչել տերևը, ծաղիկը, տարբերել ծաղիկներն ըստ գույների:

Խաղի ժամանակ տարբերել վորոշ բանջարեղեններ, պտուղներ (վորոնք ալիլի շատ են տարածված տվյալ վայրում) և տալ նրանց անունները: Քամի յեղանակին խաղալ պտուտաններով, դիտել թե ինչպես են թափվում տերևները: Անձրևային օրերին դիտել՝ անձրև է դալիս, մարդիկ կրկնակողիկներով են ման գալիս, մտնել են հովանոցների տակ, արդեն ցուրտ է, տաք հարուստներ են հագնում:

Ձմեռ: Զբոսանքների ժամանակ և լուսամուտից նայելիս դիտել, վոր ձյուն է դալիս, գետնի և ծառերի վրա շատ ձյուն կա,

ձյունը դեղեցիկ փայլում է արևի տակ: Խաղալ ձյունով, թխակեր
այն:

Նայել ձյան վրայի հետքերին՝ էր և մեծերի:

Դրսում ցուրտ է, մուշտակներ, բրդե ձեռնոցներ, կրկնա-
կոշիկներ են հաղնում: չըջում են սահակներով: Այժմ ձմեռ է:

Զբոսանքների ժամանակ դիտել և տարբերել ճնճողակներին,
կաշաղակներին, աղապներին, կերակրել նրանց: Խաղերի ըն-
թացքում ընդորինակել թռչունների ձայներն ու շարժումները:

Բացոթյա խաղերի ժամանակ դաստիարակը հետևում է, վոր-
պեսզի յերեսաները չմրսեն, պահպանում է նրանց առողջու-
թյունը:

Գարուն: Զբոսանքների ժամանակ դիտել, վոր ձյունը հալ-
չում է, հալչում են ձնե կառուցումները, սառցաշիթերը: Գե-
տակներին մեջ բաց թողնել փոքրիկ նավակներ ու նավեր: Խա-
ղալ սրտուտաներով: Նշել, վոր արդեն տաք է, թեթև հաղուտ
են հաղնում:

Ահանջ դնել ճնճողակների ճովողունին, աղապներին կռկո-
ցին, սարքակներին և ուրիշ թռչունների յերգերին:

Յերեսաների ուղադրությունը հրավիրել դեպի յերեսացող
կանաչ խոտը, դուրս յեկող անրևները, բացվող ծաղիկները,
թռչող թիթեռները:

Խմբակային սենյակում դնել բացված տերևներով և ծաղիկ-
ներով ձյուղեր: Ծաղիկներ քաղել, վնջեր կաղմել, տարբերել ծա-
ղիկների դույները: Անվանել ամենից շատ տարածված դարնա-
նային ծաղիկները. որինակ՝ ճնճաղիկ, շուշան, խոտուտիկ, մա-
նուշակ, կանաչ: Նայել թե ի՞նչ են անում բանջարանոցում մե-
ծերը: Յանել խոշոր սերմեր, որինակ, բակլա, սիսեռ, սոխ
տնկել:

Ամառ: Զբոսանքների ժամանակ դիտել, վոր խոտերը, տե-
րեպները կանաչ են, շատ ծաղիկներ կան: Թիթեռները թռչում
են, թռչունները յերգում են, դրտները վոստոտում են: Այժմ ա-
մառ է:

Ծաղիկներ ժողովել: Չոկել դրանք ըստ դույնի, նշել հոտը՝
բուրում են, չեն բուրում, անվանել ծաղիկները, որինակ, դան-
դակածաղիկ, յերիցուկ:

Հավաքել հասած հատապտուղներ, տարբերել պտուղներն
ըստ արտաքին տեսքի, համի. տալ նրանց անունները: Բազմա-

տեսակ խաղերի մեջ ողտադործել բնությունից վերցրած նյու-
թերը՝ յերևանակներ, ձյուղեր, կեղև, մամուռ, քարեր, խխունջ-
ներ:

Ձրել մարդերը: Գուրս քաշել բողկը: Ուտելու ժամանակ,
խաղերի ընթացքում տարբերել ըստ արտաքին տեսքաթի, շոշափե-
լով, ըստ համի՝ ամենից շատ դործածական բանջարեղենները.
որինակ, բողկ, սիսեռ, պամիդոր, դադար, տալ նրանց անուննե-
րը: Անվանել մի քանի մեծ ու վառ դույնի պարտիզային և դաշ-
տային ծաղիկներ:

Բնության անկյունում: Գիտել և կերակրել կենդանիներին
(ձկներին, թռչուններին, ճաղարներին), ուղադրություն դարձնել
նրանց շարժումներին, ձայնին, արտաքին բնորոշ նշաններին:
Գաստիարակն աստիճանաբար յերեսաներին ընտելացնում է բույ-
սերը շրեյուն:

Տարվա ընթացքում դաստիարակը բնության անկյունում
Նյութերը դարձնում է բազմադան՝ ավելացնելով ծաղիկող բույսեր,
ձանաչ ձյուղեր (ձմռան վերջին), կենդանիների համար աճեցնե-
լով կանաչ կեր (դարբի): Ամռանն անկյունում կարելի յե տեղա-
վորել դորս, թիթեռնիկներ: Գաստիարակը ստիճանացնում է յերե-
սաներին հոգատար վերաբերմունք ունենալ դեպի բույսերը,
կենդանիները, չվախենալ կենդանիներից:

Ծանոթություն ընտանի և վայրի կենդանիներին: Գիտել բա-
ժարահաշ շանը, բախտներին, կատվին, կատվի ձագերին, նրանք
ի՞նչ և ի՞նչպես են ուտում, ի՞նչպես են խաղում: Գիտել ձագարին
ի՞նչպես ե ցատկում, կրծում ճակագեղը, պոկում խոտը. ձագարի
համար խոտ հավաքել, կերակրել նրան:

Բակում հավաքել հավերին (աղապներին), նայել, թե ինչ-
պես են կացում, խմում: Լսել ինչպես ե կանչում աքաղաղը,
կչկչում հավը: Տարբերել հավն ու աքաղաղը: Գիտել, թե ինչ-
պես թուխը ման է պծում ճուտերին. ճուտերը փոքր են, աղ-
վամաղոտ, ծվծվում են:

Գիտել ձի, քուտակ, հորթ, կով, ինչպես են նրանք ուտում,
խմում: Ձին վաղում է, քաշում է սայլը (սահակը): Կովը կաթ
ե տալիս: Նայել ինչպես ե անցնում նախիրը:

Նկատել կենդանիների բնորոշ նշանները, որինակ, ձագարի
յերկար անհանջները, աքաղաղի կատարը, այժի, կովի յեղջուր-
ները:

Նկարները և խաղալիքները միջոցով ճանաչել արջը, նապաստակը, սկյուռը, կապիկը:

Յերեխաներին պետք է տալ խաղալիք-կենդանիներ, նայել նկարներ՝ վորոնք պատկերացնում են կենդանիներ, բանջարեղեններ պտուղներ, մանկական խաղեր (տարվա տարբեր յեղանակներին վերաբերող), յերեխաներին մատչելի բնության յերեկ-վիւթներ: Յերեխաները լսում են պատմվածքներ, յերդում են յերգեր բնության մասին, սովորում են վոտանավորներ:

Միջակ խումբ: Աշուն.— Զբոսանքների ժամանակ (բակում, սլարտեզում, դաշտում) նկատել, վոր տերևները դեղնել են, վայր են թափվում: Սաղի համար հավաքել տերևներ, ծառապտուղներ: Տերևները ընտրել ըստ դույնի և մեծության: Տալ այն տերեւիներին անունները, վորոնք ձևով խիստ վերայով տարբերվում են իրարից. որինակ, ծիրանի, սոճու, խաղողի: Ճանաչել վորոշ ծառերի պտուղները, որինակ, ընկույզ, ծիրան, դեղձ, վըշառ:

Նշել աշնան դեղեցկութունը:

Դաստիարակի ողնությամբ ծաղիկներ քաղել, ծաղիկները և դեղեցիկ ճյուղերից փնջեր կաղմել, նրանցով դարդարել խմբակի սենյակը: Տալ առանձին ծաղիկների անունները, վորոշել նրանց դույնները:

Մանկական բանջարանոցում հավաքել բանջարեղեններ, որինակ՝ բողկ, ճակնդեղ, բազուկ: Արտաքին տեսքով, համով, շոշափելով տարբերել և անվանել վորոշ բանջարեղեններ և պտուղներ:

Դյուզական մանկապարտեզում բանջարեղենների և պտուղների բերքահավաքը դիտում են կողմնաստեղծում (խորհարընտեսությունում):

Քամու ժամանակ դիտել առարկաների շարժումները (պտուտաններ, ծառեր, տերևներ):

Դիտել և կերակրել թռչուններին, որինակ՝ ճնճողկներին, աղաավներին, կաչաղակներին, նշել նրանց մեծությունը, դույնը, շարժումները:

Չմեռ.— Դիտել, վոր ցրտում է, ձյուն է դալիս, մարդիկ տաք են հագնվում, վառարանները վառվում են, սահնակներով դնում են: Այժմ ձմեռ է:

Դիտել վաթիլները, ձյունից կառուցումներ կատարել, քանդակել, ձևավորել:

Չյան վրա վորոշել կենդանիների, մարդկանց հետքերը: Սառույցից դարդարանքներ պատրաստել:

Սաղալ սառցաշիթերի հետ, սահել սառցի վրայով: Նայել սառած լիճը, դետը: Սառցի վրայով քայլում են, ճանապարհորդում, դրոնում դահուկներով:

Զբոսանքների ժամանակ (անտառում, պարկում, դետափին, լճափին նկատել ձմեռային տեսարանի դեղեցկությունը: Ճանաչել յեղենին (կամ սոսին) և բարդին: Բարդու վրա ձմռանը տերեւներ չկան, յեղենին կանաչ է:

Կերակրել թռչուններին, հետևել թե նրանցից վորոնք են թռչում դեպի կերակրամանը:

Գարուն.— Զբոսանքների ժամանակ (բակում, պարկում, անտառում, սկվերում) դիտել, վոր յեղանակը տաք է, արևը տաքացնում է, ձյունն ու սառույցը հալչում են: Առվակների մեջ բաց թողնել նավակներ, հետևել նրանց շարժումներին:

Դիտել դետի սառույցների ընթացքին (վորտեղ հնարավոր է): Սենյակը դարդարել ճյուղերով և ծաղիկներով:

Դիտել կանաչ խոտի, կանաչ տերևների յերևան դալը ծառերի և թփերի վրա, ծաղիկների բացվելը, թռչող թիթեռներին, մայրխյան բղեղներին:

Հավաքել ծաղիկներ, կաղմել փնջեր, անվանել վորոշ ծաղիկներ, որինակ՝ մանուշակ, ճնճաղիկ, նունուֆար:

Դիտել թռչուններին թե, ինչպես նրանք կառուցներով կրում են ճյուղիկներ, փետուր, ծղոտներ իրենց բների համար, լողանում են լճակներում: Այժմ դարուն է:

Մանկական բանջարանոցում, ծաղկանոցում ցանել սերմերի մեկ-յերկու տեսակ, որինակ՝ սխեռ, բազուկ, վարունդ, դըղում:

Ամառ.— Եքսկուրսիաների, դրոսանքների ժամանակ դիտել, վոր արևը խիստ տաքացնում է, շոգ է, շառ ծաղիկներ կան, ճպուտներ, թիթեռներ են թռչում: Հասել են պտուղները: Հասել է թուփը, բալը, կեռասը: Ամառ է:

Անտառում, այգում, մարդապետնում ծաղիկներ հավաքել, չոկել դրանք ըստ դույնի, փնջեր կաղմել, պատկներ հյուսել: Անցկացնել դույնով ծաղիկները ճանաչելու խաղեր: Անվանել մի

քանի դաշտային և պարտիզային ծաղիկներ, որինակ՝ անմոռուկ, մեխակ և այլն:

Հավաքել հատաստողներ և պտուղներ, տարբերել իրարից, տալ նրանց անունները: Անտառում կամ այգում հավաքել սունկեր, անվանել դրանցից մի քանիսը: Իմանալ, վոր դրանց վորոշ տեսակները չի կարելի ուտել:

Ջրոսանքները ժամանակ դիտել՝ անտառում կամ այգում գեղեցիկ է, շատ ծառեր, խոտեր, ծաղիկներ կան, դորտեղ և շատ ծառեր, խոտեր, ծաղիկներ կան, դորտեղ և շատ ծառեր, խոտեր, ծաղիկներ կան: Ունիկողրել անտառային ձայներին (տերևների շրջում, թռչունների յերգ): Խաղերի և պարապմունքների համար հավաքել բնական նյութեր:

Գետափին խաղալ այլալի հետ, հավաքել խխուկներ, քարեր:

Գետի մեջ հետևել ձկներին, վայրի բաղերին: Նայել ձկան փորսին, նայել, թե ի՞նչպես են նավակներով, նավերով դրոսնում:

Մարդադետնում հավաքել ծաղիկներ, լսել ձգրիզները ձայնը, հետևել խոտհնձին:

Բնաբան անկյունում: Դիտել և խնամել բույսերն ու կենդանիներին, հետզհետե ընտելանալով հերթապահության:

Նայել՝ ի՞նչպես դաշտը գեղեցիկ ալեկոծվում է: Նայել հունձը:

Ջրել թմբերը, մարդերը: Ծիլերով ճանաչել սոխը, պամիր դորը, վարունդը, կանաչի քաղել, բողկ հանել:

Դիտել և խնամել բույսերն ու կենդանիներին, հետզհետե ընտելանալով հերթապահության:

Գոտիարակի ողնոթյամբ ջրել և լվանալ տնային բույսերը նշել նրանց բարձրությունը, ձևը, տերևների և ծաղիկների դույնը, իմանալ դրանցից մի քանիսի անունները:

Վողջ տարբա ընթացքում բնության անկյունը լրացնել բույսերով, ծաղիկի փնջերով, նոյ կենդանիներով (թռչուններ, ճագար, վոզիկ և այլն): Ձմռանը սոխ տնկել, կենդանիների համար կանաչ կեր ցանել, ձմռան վերջում դիտել բողբոջների յերևալը ձյունների վրա (որինակ՝ բարդուս, դեղձենու, ծիրանի ծառի վրա): Գարնանը ծաղիկների խոշոր սերմեր ցանել (տաճկակաճ բակլա), հետևել բույսերի աճմանը:

Ամռան անկյունում հետևել դորտերին, դողոջներին, մոլորաներին, թռչուններին և այլն:

Յերեխաները սովորում են հողատար լինել գետի կենդանիներին ու բույսերը (ժամանակին կերակրել կենդանիներին, չըվախեցնել նրանց ջրելու, լվանալու ժամանակ, դրույշ վերաբերվել բույսերին):

Ծանոթաբար ընտանի և վայրի կենդանիներին: Հետևել և կերակրել ընտանի կենդանիներին և նրանց ծաղերին: Խնամել և հետևել մայր ձագարին և նրա ձագերին: Հետևել հավերին, բաղերին, սագերին: Նայել՝ ի՞նչպես են հավերը կերը կտցում, խմում, ի՞նչպես են փորփորում գետինը: Սագերը, բաղերը լողանում են, սուզվում ջրի տակ:

Նշել կենդանիները բնորոշ նշանները, համեմատել նրանց արտաքին տեսքով, շարժումներով ձայնով, որինակ՝ ձիուն և կովին, հավին, սագին և բաղին:

Դիտողություններից, պատմվածքներից իմանալ, վոր շունը պահպանում է տունը, կատուն մկներ է բռնում, ձին քաշում է սայլ, աշխատում է դաշտում, հավերը (բաղերը, սագերը) ձույնն ածում, թուխս են նստում, ձկներից ձուտ են դուրս գալիս:

Գյուղական վայրերում տեսնել թռչանոցը, ձագարանոցը, խողանոցը:

Նասպատակին, արջին, դայլին, փղին, կապիին և մյուս կենդանիներին ճանաչել նկարների միջոցով, իսկ վերադ հնարավոր է՝ դիտել կենդանաբանական պարկում:

Պատմվածքներից, դրքույկներից իմանալ, որինակ՝ վոր նասպատակն արագ է վազում, ձագարի նման դաղար կաղամբ է ուտում, վոր արջն սպրում է անտառում և պտուղներ, մեղր, սունկեր, մանր կենդանիներ է ուտում, յերբեմն հարձակվում է կենդանիների վրա, արջը խոշոր է, ծուլոտանի, արջի քոթոթները փոքր են, նրանք կարողանում են ծառերի վրա մաղցել:

Նայել նկարներ, դիաֆիլմեր, վորոնք պատկերում են բլանությունը, յերեխաների խաղերն ու զվարձալիքները (տարվա տարբեր ժամանակներին), կենդանիներ, մրդեր հատաստողներ, սունկեր: Խաղերի ժամանակ ողտագործել այն խաղալիքներն ու պատկերները, վորոնք թռչուններ, կենդանիներ և բնության յերեխաներ են ներկայացնում:

Պատմութիւններ լսել, նկարներով պատմել, հանելուկներ լուծել, վոտանալորներ, յերգեր անդէր սուրբել:

Մեծերի խումբ: Աշուն: Զրոսանքներէ, եքսկուրսիաների ժամանակ (պարկում, այգում, անտառում) դիտել բնութիւնն աշնանային փոփոխութիւնները (տերեւներէ գունաթափութիւն, տեղեւթափ, քամիներ, ամպեր, հաճախակի անձրեւներ):

Ամառ եր, այժմ աշուն և: Դիտել վտակն աշնան դեղեցկութիւնը: Աշնան վերջում նշել, վոր ծառերը տերեւազուրկ են, փրանց վրա մնացել են բողբոջներ, ջրափոսերը ծածկվում են սառույցով: Ծուտով ձմեռ կլինի:

Սաղերի և պարզմունքներէ համար ժողովել ծառապտուղներ և տերեւներ: Տարբերել ամենից շատ տարածված ծառերի տերեւներն ու պտուղները:

Դիտել, վորտեղ հնարավոր է, խաղողի վաղերի թաղը: Ծաղկանոցում ծաղիկներ քաղել, փնջեր կաղմել, դաստիարակի ուղնութեամբ ծաղկող բույսեր հանել և անկյունում տնկել, ծաղիկներ և տերեւներ չորացնել:

Մանկական բանջարանոցից ժողովել բանջարեղենները: Նայել՝ ինչպէս են փորում թմբերը, մարդերը, դիտել բանջարեղեններէ ու պտուղներէ բերքահատարը մեծերի կողմից: Բանջարեղենները և պտուղները հասնում են ամառը, աշնանը: Դիտել բերքահատարը:

Սաղերի ժամանակ դիտել թե ինչպէս են շարժվում պտուտանները, հողմաղացները, ինչպէս են թռչում կուռնիները:

Կերակրել թռչուններին, դիտել թե ինչպիսի թռչուններ են թռչում դեպի կերակրամանը: Իմանալ պատմվածքներից, իսկ վորտեղ հնարավոր է, դիտել, վոր մի քանի թռչուններ, որինակ, սարյակները, ծիծեռնակները չվում են տաք յերկրներ:

Ձմեռ: Դիտել բնութիւնն մեջ կատարվող փոփոխութիւնները: Աշուն եր, յեկալ ձմեռը: Ձմանը ցույտ է, ձյուն է դալիս, խիստ սառնամանիքներ, բուքեր են լինում: Գետերն ու լճերը սառչում են:

Զրոսանքներէ, խաղերի և դրամունքներէ ժամանակ (կառուցումներ ձյունից, ծեփ, ճանապարհներէ մաքրում, ձյան բլրի ստեղծում) դիտել, վոր տաք ժամանակ ձյունը կարելի յեծեփել, սառնամանիքին՝ նա փխրուն է, ճոճոտ է վտանքի

տակ: Յերնելով յեղանակից և ձյան վիճակից՝ ոգովել բահով, թիակով, ցախովելով:

Ձյան վրա նշել մարդկանց, դաղաններէ, թռչուններէ հետքերը: Ձյան վրա քանդակել և նկարել:

Կաղապարներէ մեջ ներկած ջուր սառցնել՝ տեղամասը դարդարելու համար: Ջուրը սառնամանիքին սառչում է:

Գետի գետը, լիճը կաղմակերպած եքսկուրսիաների ժամանակ դիտել՝ սառույցն ամուր է, սահուն, թափանցիկ:

Զրոսանքներէ և եքսկուրսիաների ժամանակ ուշադրութիւն դարձնել ձմեռային պեղծի դեղեցկութիւնը:

Ձմանը ծառերի վրա տերեւներ չկան, իսկ յեղեկները և սոճիները կանաչ են:

Կերակրել և դիտել թռչուններին կերակրամաններէ մոտ: Դիտողութիւնն ժամանակ համեմատել թռչուններին ըստ նրանց մեծութիւն, գույնի, քայլվածքի:

Գարուն: Զրոսանքներէ, եքսկուրսիաների ժամանակ դիտել դարնանային ուշադրաւ յերեւոյթները, արեգակը տաքացնում է, տաք է, ձյունն ու սառույցը հալչում են, առլակները հոտում են, դեղերը չորանում է: Նկատել ձյունն կառուցումների փոփոխութիւնները: Ձմեռ եր, յեկալ դարուն:

Սաղերի ժամանակ (առուններէ փորում, փոքրիկ նալակներէ բաց թողում, խաղեր պտուտաններով և ալի) դիտել ջրի, քամու շարժումը:

Դիտել (վորտեղ հնարավոր է) ձկան վորսը, մակույկներէ նալերի շարժումը:

Դիտել խոտի յերեւալը, բողբոջներէ դուրս դալը, ծառերի և թիւերի կանաչելն ու ծաղկելը:

Գարնանային ծաղիկներ հալաքել, փնջեր կաղմել: Ծաղիկներով խաղեր անցկացնել: Ընտրել ծաղիկներն ըստ նրանց դուրսի, հոտի, իմանալ այդ ծաղիկներն ըստ նկարագրութիւնն և հանելուկներէ:

Դիտողութիւններից, պատմվածքներից իմանալ, վոր դարնանք տաք յերկրներից չվում են թռչունները (արաղիկներ, կրուռնիկներ): Թռչունները բներ են շինում, ձու յեն ածում, ձագեր հանում:

Զրոսանքի ժամանակ նկատել՝ թիթեռները, բղերները, մե-

դուռները հայուհիները թուշում են, դորտերը վնասոտում են և կռակում: 6

Տեսնել ծառերի, թփերի, ծաղիկների տնկումը: Նրանք տնկում են, վոր դեղեցիկ լինի: Ծառերը, թփերը մեղ պաշտպանում են շոգից, հարկավոր և նրանք պահպանել: Մանկական բանջարանոցում փոցխերով կրկին փորել և փխրացնել մեծերի փորած հողը: Սերմեր ցանել, թմբեր ջրել, հետեել ծխերի յերեվալուն, նրանց ածմանը:

Նայել (վորտեղ հնարավոր է) մոտակա բանջարանոցում կամ դաշտում կատարվող աշխատանքը (վարում են, ցանում, մեքենաներն աշխատում են):

Սմառ: Դիտել բնության մեջ կատարվող փոփոխությունները՝ տաք, արևոտ սրեր, քեղեցիկ ամպերով կապուտակ յերկինք, ուժեղ անձրևներ, ծիածան, ամպրոպ, հասնում են պտուղները, բանջարեղենները, մրգերը:

Գարուն եր, յեղալ ամառ: Ուշադրության դարձնել բնության ամառային դեղեցկության վրա: Դեպի անտառ և դեպի այգի կատարած դրոսանքների, եքսկուրսիաների ժամանակ պտուղներ հավաքել, իմանալ նրանց անունները, պտուղները տարբերել համով, արտաքին տեսքով, տերևներով:

Ունկնդրել թուշունների յերգին, վորտեղ հնարավոր է՝ դիտել այս կամ այն թուշունի ձագերը:

Տեսնել դորտին, կրիաներին: Տեսնել մրջնոցի թումբը, դիտել մրջնուհիների շարժումը (ո՛ւր են նրանք շարժվում, է՛նչ են կրում):

Թաղերի և պարապմունքների համար հավաքել բնական նյութեր (մամուռ, կեղև, կաղին և այլն) և առանձնացնել իրարից:

Մարգագետնում ուշադրության դարձնել, թե ի՛նչքան շատ դեղեցիկ ծաղիկներ կան, հավաքել այլ ծաղիկները, պսակներ հյուսել, ծաղիկփնջեր կաղմել: Անվանել լրացուցիչ կերպով նրանցից մի քանիսը (որինակ, առվույտ), յտեղ ճպուռի, բղեղի յերգը: Նայել է՛նչպես են հնձում խտը, է՛նչպես են ջորացնում և հավաքում այն: Խոտով կերակրում են կենդանիներին:

Զբոսանքի ժամանակ դաշտում ուշադրություն դարձնել գառու, ցարենի արտերի, բամբակի, ծխախոտի վրա: Դիտել հուն-

ձը: Նշել, վոր աշխատում են մեքենաներով, ձիերով և յեղաներով:

Զրի արին ալաղով խաղալ, առվակներ, լճակներ շինել, խխունջներ, փորլիկ քարեր հավաքել բնության անկյան համար, ջրային բղեղներ վորսալ:

Շարունակել թմբերի, մարդերի խնամքը: Դիտել թրթուրներին, վորդերին: Նրանք փչացնում են բույսերը, հարկավոր և նրանց վո՛չնչացնել:

Շարունակել թմբերի, մարդերի խնամքը:

Հետեել ծաղիկների թափվելուն, պտուղներին, բանջարեղեններին հասնելուն: Հավաքել բանջարեղեններ. վինեղրատ, սալաթ պատրաստելու ժամանակ, ինչպես և խաղերի ընթացքում տարբերել բանջարեղենները:

Շաղիկներ քաղել, փնջեր կաղմել, տալ իրենց ծաղիկների անունները:

Բնության անկյունում: Հերթագահել՝ կենդանիներին և բույսերին խնամելու համար:

Դիտել բույսերի աճումը, համեմատել նրանց, իմանալ նրանց անունները:

Դատարարակի ոժանդակութամբ մաքրել ակվարիումը, կարգի բերել կենդանիների վանդակները (վորտեղ ավաղը, մաքրել ջրամաններն ու կերակրամանները):

Բնության մեջ կատարվող սեզոնային փոփոխությունների կադակցութամբ անկյունը լրացնել նոր կենդանիներով և բույսերով: Զմուռը սոխ, արմատապտուղներ տնկել, կենդանիների համար կանաչ կեր ցանել (գարի, սալաթ): Զմուռն վերջում դիտել ճյուղերի բողբոջումը:

Գարնանը անտառից, այգուց անկյուն տեղափոխել առաջին դարձնային բույսերը (որինակ, առաջնուկ, ձնծաղիկ): Դիտել անային բույսերն այգի տեղափոխելը, մասնակցել հողի վերբեցմանը, ջրելուն: Շաղիկներ, սերմեր ցանել (թավաձաղիկ, տաճկական բակլա, հնդկոտեմ և այլն):

Գարնանն անկյունում դիտել շերտավորներին, դորտերին, վորդերին և մեծ կենդանիներին, ամառը՝ թրթուրներին, թիթեռներին, ծղրիկներին, ջրային միջատներին: Համեմատել կենդանիներին ըստ նրանց արտաքին տեսքի, շարժումների, տրինակ՝

կատվին համեմատել ճազարի, վողնու հետ, լողացող բղեղին՝ ձկան հետ, գորտին՝ մողեսի հետ և այլն:

Դաստիարակը հետևում է, վոր յերեխաները հոգատար լինեն դեպի կենդանիները և բույսերը, պատասխանատուություն զգան բնության անկյունում իրենց կատարած աշխատաքի համար:

Ծանոթություն ընտանի և վայրի կենդանիներին: Շարունակել դիտողությունները և մանկապարտեզի ընտանի կենդանիներին խնամքը:

Դիտողություններից իմանալ վորոչ ընտանի կենդանիներին ոգտագործման մասին: Զիտն ոգտագործում են բեռներ տեղափոխելու համար, Կարմիր բանակում, դյուղատնտեսական աշխատանքների մեջ: Շները լինում են բակապահ, վորսորդական, աղամական և այլն:

Դիտել կովերի կիթը դոմում, արոտատեղերում: Կովերը, այծերը կաթ են տալիս: Կաթից պատրաստում են սեր, յուղ, մածուն, պանիր: Ընտանի կենդանիների միան ուտում են: Վտջխարի, ճազարի մորթուց պատրաստում են տաք հազուստներ: Ընտանի թռչուններին և նրանց ձկերն ուտում են:

Պատմվածքներից, դրքերից իմանալ, թե վորտեղ են ապրում և ինչու են կերակրվում մի քանի վայրի կենդանիներ: Գայլերն ապրում են անտառում, հարձակվում են նապաստակների, վոչխարների հոտերի վրա: Գայլերը վնասակար են. նրանց վոչնչացնում են:

Աղվանն ապրում է վորջում: Աղվեսը մկներ է վորսում, հավեր փախցնում: Սպիտակ արջերը և յեղջերուններն ապրում են ցուրտ յերկրներում: Սպիտակ արջը լավ լողում է և ձկներ վորսում:

Յեղջերուններն արագ են վազում, նրանցով ճանապարհորդում են:

Առյուծները, վազերը, փղերն ու կապիկներն ապրում են տաք յերկրներում:

Դիտել տարվա տարբեր յեղանակները, բնության յերեվոլյութները, կենդանիներ ու բույսեր արտահայտող նկարներ, դիաֆիլմեր, ստվերային թատրոն և այլն:

Զրուցել նկարների շուրջը, պատմվածքներ լսել, վոտանա-

վորներ անդիր անել, յերգել, լուծել և հորինել բնության մասին հանելուկներ: Պատմել տեսածի մասին:

Նկարչության, ծեփի, ապլիկացիաների միջոցով արտահայտել սեփական տպավորությունները բնության մասին: Ծաղիկներ չորացնել, բնական նյութերից խաղալիքներ, զարդարանքներ, մակեթներ պատրաստել: Սաղալ տպախաղեր: Բնության որոացույցի համար նկարել բնության ամենատաշաղրավ սեղոնային յերևույթները:

Յոք տարեկան յերեխաների խումբ: Աշուն.— Ամռան հաջորդում է աշունը: Դիտել բնության աշնանային յերևույթները՝ տերևաթափ, անձրևներ, մատախուղ, առաջին սառնամանիքներ, լճերի վրա սառույց, դետնի և տանիքների վրա յեղյամ: Աշնան հաջորդում է ձմեռ: Իմանալ աշնան և տարվա մյուս յեղանակների բնորոշ նշանները և նրանց հաջորդականությունը: Ուշադրություն դարձնել աշնանային պեյզաժի դեղեցկության վրա: Սաղերի և սլարապմունքների համար հավաքել բնական նյութեր (տերևներ, պտուղներ, սերմեր):

Տերևներով և կեղևով դանդաղանել բարդին և ընկուղենին:

Աշնան վերջերին ծառերը (բացի մշտադալարներից) և թբլիները մերկանում են, անտանց տերևների յեն, նրանց վրա մնացել եր բողբոջներ, իսկ վորոչ ծառերի վրա՝ պտուղներ: Բողբոջները դարնանը բացվում են. դիտել ծառերի և թբլիների աշնանային ծառատունկը: Պահպանել կանաչ տունկերը: Հավաքել մանկական բանջարանոցի բանջարեղենները, պատրաստել վինեգրետ, սալաթ: Մասնակցել թմբերի և մարդերի փորման աշխատանքին: Դիտել բանջարեղենների, պտուղների բերքահավաքը բանջարանոցներում և աղիներում:

Բանջարեղենները և պտուղները մթերել ձմռան համար:

Ծաղիկներ քաղել, փնջեր կաղմել, մասնակցել բնության անկյունում կատարվող տնկումներին:

Դիտողություններից, պատմվածքներից իմանալ, վոր միջատները թաղնվել են կեղևի, տերևների տակ: Գորտերը, յեղեղետիները, վողնիները ձմռանը քուն են մտնում: Վորոչ թռչուններ աշնանը չվում են տաք յերկրներ և դարնանը նորից վերադառնում: Աշնան վերջերին սկսել ձմեռող թռչունների կերակրումը:

Զմեռ: Աշնանից հետո գալիս է ձմեռ:

Ձրոսանքներն, եքսկուրսիաներն ժամանակ դիտել բնության՝
ձմեռային յերևույթները՝ ձյան դալը, դետի (լճի) սառելը, բու-
քը: Նշել սառնամանիքը, որերի տաքանալը:

Ձյան և սառույցի հետ խաղալիս և դբադմունքների ժամա-
նակ նկատել, վոր ցրակց ջուրը սառչում է, Չերմությունից
ձյունն ու սառույցը հալչում են:

Ուշադրություն դարձնել ձմեռային պեյրաժի դեղեցկության
վրա տարբեր յեղանակների ժամանակ:

Գետի մեջ (լճում, լճակում) սառույցի տակ ձկներ են աղ-
րում: Սառույցը ջարդում են և պահում ամռան համար:

Միստեմատիկ կերպով կերակրել թռչուններին: Ազոալները,
սարյակները, ճնճողակները ձմռանը տաք յերկրներ չեն չվում:
Կեբ փնտրելու համար նրանք աչնանը և ձմռանը մտենում են
մարդու բնակավայրիս:

Գարուն: Ձմռանը հաջորդում է դարունը: Գարնանը արե-
գակն ուժեղ և տաքացնում, ձյունն արագ հալչում է: Լեռներում
հալչում է ձյունը, դետերը հորդում են: Ծառերը, թփերը կա-
նաչում են ու ծաղկում, կանաչում է խոտը, բացվում են դար-
նանային ծաղիկները: Թիթեռները, մեղուկները, բզեզները արթ-
նանում են. չվող թռչունները (արագիլիժ, կոռնիկներ, ծիծեռ-
նակներ) տաք յերկրներից վերադառնում են, բներ են շինում,
ձու ածում, ձագեր հանում:

Թռչուններն իրենց ձագերին կերակրում են միջատներով:
Թռչուններին պետք է պահպանել: Աճեցնել և դիտել (վորտեղ
հնարավոր է) շերամի վորդ:

Դետակները դիտելու, ջրի հետ խաղալու ժամանակ նկատել
ջրի շարժումը: Մաղերի ժամանակ (պտուտամներով) նկատել քա-
մու ուղղությունը:

Իմանալ, թե ինչպես է մարդն ողտադործում ջուրն ու քա-
մին (հողմաղացներ և ջրաղացներ):

Գարնանը, ինչպես և աչնանը տնկում են ծառեր, թփեր,
սարքում են ծաղկանոցներ: Դրանց պետք է պահպանել. դրանք
ողտակար են:

Հողամասում ողնել ծառերի տնկմանը (մանրացնել հողը, ջրել):
Դիտել պողատու ծառերի ծաղկումը:

Դիտել դարնանային աշխատանքները դաչտում, բանջարանո-
ցում. պարարտացնում են հողը, վարում են, ցանում են:

Մանկական բանջարանոցում, ծաղկանոցում, փորվել և
փխրացնել մեծերի փորած հողը: Դաստիարակի ողնությամբ
թմբեր և մարդեր սարքել, սերմեր ցանել, մասնակցել տնային
բույսերի սածիլմանը: Հետևել ծիլերի յերևալուն և նրանց
աճմանը:

Ամառ: Գարնանը հաջորդեց ամառը:

Ամռանը լինում է խիստ շոգ, ամպրոպներ, հեղեղներ, կար-
կուտ: Ծառերի ծաղիկները թափվում են, յերևում են պտուղներ
(խնձոր, տանձ և այլն): Կազմակերպել դրոսանքներ և եքսկուր-
սիաներ դեպի անտառ, դաչտ և մարդադետին: Նկատել բնության
դեղեցկությունն ամռանը:

Այլում, անտառում դիտել մրջյուններին, վողնիկներին, լսել
Պռնունների յերգը, կիտի կվկվոցը, փայտփորի թխթխոցը:
Պտուղներ, սունկեր հավաքել, իմանալ նրանց անունները: Չանա-
զանել այն սունկերը, վորոնց կարելի յե ուտել: Մարդագետնում
ծաղիկներ հավաքել, փնջեր կազմել դիտել խոտհունձը: Նկատել
վոր հնձում են մանդաղներով և դերանդիներով:

Նկատել, վոր բանջարանոցում, այգիներում, անտառում կան
թրթուրներ. նրանք կրծում են ծառերի տերևները: Թրթուրները
վնասակար են. նրանց վողնչացնում են:

Բանջարանոցում աճում են բանջարեղեններ (փարուեղ, պա-
միդոր, դդում) . նրանք ծաղկում են, ծաղիկները թափվում են,
պտուղները դարգանում են իրենց սերմերով:

Մանկական բանջարանոցում, ծաղկանոցում շարունակել
բույսերի խնամքը (ջրում, հողի փխրացում, քաղհան, թրթուր-
ների հավաքում), դիտել բանջարեղենների ծաղկելն ու հասնելը:
Հավաքել բանջարեղեններ, ողտադործել դրանք ուտելու և խա-
ղերի համար:

Հավաքել այլերույսերի հասուն սերմերը:

Դիտողություններից, պատմվածքներից յերեխաները գի-
տեն, վոր դաչտերում աճում, հասկակալում են դարու, ցորենի
արտերը, վորոնց հնձում են, ծեծում: Հացահատիկը տանում են
ջրաղաց, աղում և ալյուրից հաց թխում: Դաչտերում հարնում է
բամբակը, վորը վերամշակում են դործարաններում:

Բնության անկյունում: Դաստիարակի ողնությամբ կատար-
վում է կենդանիների, բույսերի սիստեմատիկ խնամքը:

Աշխանը բնության անկյունը լրացվում է ջրային կենդանիներով, ծաղկանոցից, անտառից փոխադրված բույսերով:

Ձմռանը տնկել արմատապտուղներ (բաղուկ, ճակնդեղ) և ցանել կանաչ կեր (վարսակ) թռչունների, ճաղարների համար:

Ձմռան վերջին բնության անկյունում ջրի մեջ ճյուղեր դնել, դիտել բողբոջները, հետևել նրանց բացվելուն, տերևների, ծաղիկների յերևալուն: Նկատել, վոր բողբոջները տաքության մեջ բացվում են: Իմանալ, վոր ջերմոցներում բանջարեղեններ և ծաղիկներ են աճեցնում:

Գարնանը բնության անկյունում սածիլել առաջին դարձանային բույսերը: Մասնակցել սենյակի բույսերի սածիլմանը, տալ բույսերի մասերի անունները, արմատ, բուն, բողբոջ, տերև, ծաղիկ:

Ի՞նչ է գորտի ձվերի դեղացումը:

Սմռանը դիտել թրթուրներին, գորտերին, մողեսներին և մյուս կենդանիներին: Իմանալ, թե ինչով են նրանք վնասակար, ոգտակար:

Ծամոթուքյուլը ընտանի և վայրի կենդանիներին:

Ձին, Արվը, խոզը, ճագարը ընտանի կենդանիներ են: Արջը, դայրը, աղվեսը, սկյուռը, վագրը, վապրիկը վայրի կենդանիներ են: Գրեքերից, պատմվածքներից իմանալ մի քանի վայրի կենդանիների (մեր անտառներում ապրող կենդանիների ցուրտ և տաք յերկրների կենդանիների) բնակավայրի, կերի մասին:

Պատկերների միջոցով՝ գրույցների ժամանակ համեմատել մի քանի ընտանի և վայրի կենդանիներ՝ ըստ նրանց արտաքին տեսքի և քայլվածքի (տրինակ, գորշ արջին համեմատել սպիտակի հետ, գայլին՝ շան հետ, յեղջերուին՝ ձիու հետ):

Նկարների միջոցով գրուցել տարվա տարբեր յեղանակների, կենդանիների, բույսերի մասին, այն մասին, թե ինչպես է մարդն ոգտադործում բնությունը:

Լսել և կազմել պատմվածքներ, հանելուկներ բնության մասին: Պատմել սեփական դիտողությունների մասին:

Բնությունն արտահայտող նկարներից, բացիկներից կազմել ալբոմներ:

Պահել բնության որացույց, խաղալ սպախաղեր՝ լոտո, դոմինո և այլն:

Ծաղիկներ չորացնել, զանազան խաղերի և պարապմունքների ժամանակ ոգտադործել բնական նյութերը:

Գ Լ ՈՒ Ս VI

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Յերեխայի բազմակողմանի զարգացման համար խոսքը մեծ նշանակություն ունի:

Տիրապետելով խոսքին, յերեխան հնարավորություն է ստանում ավելի լիարժեք արտահայտել իր մտքերը, իրեն ջրջապատող յերեխաների և մեծերի հետ ավելի լախ շփման մեջ մտնել: Խոսքի զարգացումը յերեխայի մտավոր զարգացման կարևոր պայմանն է հանդիսանում:

Խոսքի և մտածողության զարգացումը հանդիսանում է մի միասնական պրոցես. հարստացնելով յերեխայի փորձը, տալով նրան նոր սպավորություններ, այդ հիմքի վրա ընդլայնելով յերեխայի բառապաշարը և կատարելագործելով մանկական խոսքի ձևերը, մենք դրա հետ միասին զարգացնում ենք նաև յերեխայի մտածողությունը: Զրույցների, պատմվածքների, վոտանավորների ընթերցանության միջոցով՝ դաստիարակը յերեխային տալիս է նոր պատկերացումներ, դաստիարակում է յերեխայի հետաքրքրությունը, բնավորությունը:

Խոսքի զարգացումը մեծ նշանակություն ունի յերեխայի գեղարվեստական դաստիարակության համար:

Յերեխայի լավ զարգացած խոսքը հանդիսանում է հետագայում նրա դրբորոցական հանրու ռևուցման կարևորագույն նախապայմաններից մեկը:

Յերեխայի խոսքը զարգացնելու աշխատանքում դաստիարակի առջև դրված են հետևյալ հիմնական խնդիրները.

Յերեխաների խոսքը ջրջապատողների համար դարձնել պարզ և հասկանալի:

Մանկական տպավորութիւնները լայնացման հիման վրա հարստացել և ճշգրտել յերեխայի բառապաշարը:

Բարելավել յերեխայի խոսքը նրա կառուցման տեսակետից (բառերի համաձայնեցում նախադասութեան մեջ, մտքի կապակցված արտահայտութիւն և այլն):

Զարգացնել մանկական խոսքը այնպես, վոր նա լինի արտահայտիչ, պատկերավոր, կուլտուրական:

Դաստիարակել յերեխայի մեջ յերեխաների և մեծերի ներկայութեամբ ազատ խոսելու և ուրիշներին լսելու հմտութիւնը:

Դաստիարակը խոսքի զարգացման ամենորոյա աշխատանքով պետք է ձգտի այն բանին, վոր յերեխաները դեռ վաղ նախադպրոցական հասակում կարողանան պատասխանել տված հարցին, իրենց խնդիրներն ու դիտավորութիւններն արտահայտեն բառերով և վորջ թե սահմանափակվեն միայն ձեռքերի շարժումներով և դեմքի միմիկայով, խոսեն պարզ, ճիշտ արտահայտեն հնչյուններն ու իրենց դործածութեան մեջ յեղած պարզ բառերը, չհեղեն բառերը և արտասանեն լրիւ, յերկու-յերեք նախադասութեամբ կարողանան պատմել իրենց տեսածի, լսածի դիտած խաղալիքի կամ նկարի մասին, կարողանան կարճ վոտանակներ արտասանել:

Նախադպրոցական հասակի բարձր տարիքի յերեխաների հետ կատարվող աշխատանքի ժամանակ դաստիարակը պետք է ձգտի այն բանին, վոր յերեխաները ճիշտ արտասանեն իրենց բառապաշարի բոլոր հնչյուններն ու բառերը, այլել լրիւ և հետևողականորեն պատմեն տեսածի կամ լսածի մասին, այլել ճիշտ ողտադործեն նախադասութեան գլխավոր անդամները, համաձայնեցնելով նրանց հոլովով, թիւով, ժամանակով, պարզ և արտահայտիչ արտասանեն վորքիկ վոտանակները:

Բոլոր խմբերում դաստիարակն ուղղում է վորձ-ճիշտ արտասանութիւնը (հնչյունների փոփոխում. որինակ, «Ռ» — «Վ», «Շ» — «Ս», «Կ» — «Տ», «Ժ» — «Չ» և այլն), ձգտում է խոսքը դարձնել կուլտուրական, պատկերավոր, արտահայտիչ, դաստիարակում է սեր և հոգատար վերաբերմունք դեպի դիրքը:

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Դաստիարակը միշտ հետևում է յերեխաների խոսքին և, անհրաժեշտութեան դեպքում՝ ուղղում:

Դաստիարակի խոսքը պետք է միշտ որինակ ծառայի յերեխաներին:

Դաստիարակը պետք է հետևի իր խոսքին, միշտ — աշխատի այն կատարելագործել, վորպեսզի նրա խոսքը լինի քերականորեն ճիշտ, արտասանութեամբ մաքուր, տոնը հանդիստ, բովանդակութեամբ և կառուցվածքով մատչելի, արտահայտիչ և, ըստ հնարավորութեան՝ պատկերավոր:

Ոոսքի զարգացումը սերտորեն կապված է վորջ դաստիարակչական աշխատանքի հետ: Դաստիարակը խոսքի զարգացման վրա աշխատում է ամբողջ ողմա ընթացքում, ողտադործելով ամենորոյա խոսակցութիւնը և յերեխաների խաղերն ու պարապմունքները: Այսպես, դրոսանքի ժամանակ յերեխաների հետ միասին ծաղիկներ հավաքելով, դրուցելով նրանց մասին, դաստիարակը յերեխային տալիս է նոր պատկերներ, ընդլայնում է նրա բառապաշարը: Յերգեցողութեան պարապմունքների ժամանակ նույնպես հարստանում է յերեխայի բառապաշարը, բարելավվում է հնչյունների արտասանութիւնը, զարգանում է խոսքի պարզութիւնը: Ոողերն ու խաղալիքները յերեխաներին իրար հետ խոսելու առիթներ են տալիս:

Յերեխաների խոսքի զարգացման համար կարելի յե ողտադործել սեղանի հատուկ խաղեր, հանելուկներ, շուտասերուկներ և այլն:

Աշխատելով բոլոր յերեխաների հետ, դաստիարակը պետք է աշխատանք կատարի նաև յուրաքանչյուր յերեխայի հետ և, առանձին յերեխաների առանձնահատուկութիւնների հետ կապված՝ ձևափոխի իր մոտեցումները:

Խոսակցութիւն և գրույց: Ոոսքի զարգացման համար պետք է լայնորեն ողտադործվի դաստիարակի գրույցը յերեխայի հետ:

Դաստիարակը պետք է ուշադրութեամբ լսի այն, ինչի մասին ասում է յերեխան, պետք է ցույց տա, վոր ինքը հետաքրքրվում է նրա պատմածով, խոսակցութեամբ ու դրանով իսկ յերեխային մղի դեպի խոսակցութիւնը, դեպի պատմելը: Լսելով յերեխային, պետք է կարող կերպով ուղղի նրա խոսքի առանձին սխալները: Յերբեմն այդ հնարավոր է անել վորջ անմիջապես, այլ յերբ յերեխան վերջացնի պատմելը: Դաստիարակն առանձին յերեխաների հետ խոսակցութեան մեջ է մտնում հարմար մոմենտում, որինակ, այն ժամանակ, յերբ յերեխաները դալիս

են մանկապարտեզ, զբոսանքների ազատ խաղերի և դրամուշխներին ժամանակ:

Հաճախ խոսակցութիւնը, վորին հաջող կերպով մասնակցում ե դաստիարակը, փոխվում ե դրուշյց՝ մի խումբ յերեսաների հետ: Զրուշյցի ժամանակ տեղի յե ունենում տպավորութիւնների աշխուշտ, անմիջական փոխանակութիւնը: Յերեսաները վարժվում են արտահայտել իրենց մտքերը, լսել մյուս յերեսաներին, խոսել պարզ, հերթով, խոսել առանց քաշվելու:

Զրուշյցը կարող ե առաջանալ խաղերի, զբոսանքների, եքսկուրսիաների ժամանակ, կարգացած դրքի, յերեսաների լսած պատմութեան, դիտած դիաֆիլմի առթիւ. զրուշյցը պետք ե վերաբերի յերեսաների համար հետաքրքրական դեպքերի: Յերեսանը զրուշյցը կարող ե իլյուստրացիայի յենթարկվել աշխարհի նյութերով, ինչպիսիք են՝ նկարները, խաղալիքները և այլն:

Յերբ զրուշյցը տեղի յե ունենում մի խումբ յերեսաների հետ, դաստիարակը պետք ե ձգտի, վոր յերեսաներն ակտիվորեն մասնակցեն զրուշյցին: Զրուշյցի ժամանակ դաստիարակն անհրաժեշտ չափով ոգնում ե յերեսային ձիշտ արտահայտել իր միտքը, լրացնում ե յերեսաների ասածները, ուղղումներ ե մտցնում ներանց մեջ: Դաստիարակը չպետք ե ընդհատի յերեսայի խոսքը, այլ զուգընթացաբար ձիշտ արտասանի սխալ ասված բառերը:

Յերեսաների պատմելը: Յերեսաների խոսքի զարգացման համար պատմելը սքանչելի միջոց ե հանդիսանում: Անհրաժեշտ ե յերեսաներին հաճախ պատմել տալ:

Դաստիարակը կարող ե առաջարկել յերեսաներին՝ բացակայող ընկերոջը պատմել լսած հեքիաթի, հետաքրքիր զբոսանքի, դիտած դիաֆիլմի մասին: Մեծերի խմբում կարելի յե յերեսան առաջարկել պատմութիւնը հորինել վորոշակի թեմայով:

Դաստիարակը պետք ե ինքը հասարակ, բայց վառ, պատկերավոր պատմութիւնների որինակներ տա, յերեսաների պատմելու ժամանակ հանդես բերի իր ուշադրութիւնն ու հետաքրքրութիւնը ինչպես և՛ յերեսաների մեջ դաստիարակի ուշադիր վերաբերմունք դեպի ընկերոջ պատմածը:

Յերեսաների պատմելու տեսակներից մեկը հանդիսանում ե նկարներով պատմելը: Յերեսանը հեշտութեամբ համարվում ե նկարը դիտելու ժամանակ, պատմում են այն մասին,

ինչ տեսնում են նկարի վրա (ցանկալի յե պատմել տալ յերեսաներին սեփական նկարների մասին):

Անհրաժեշտ ե յերեսաներին նկարը լավ, հանդիս դիտելու հնարավորութեան տալ: Յերեսան հնարավոր ե լրացնել յերեսանի պատմածը, տալով մի քանի հարցեր: Յերեսան, վորպես որինակ, հարկավոր ե, վոր դաստիարակն ինքը պատմի նկարի բովանդակութիւնը: Յերբ յերեսաները ինքնուրույն դիտում են նկարը, հարկավոր ե ականջ դնել, թե ինչ են ասում նրանք նկարի կապակցութեամբ և անհրաժեշտութեան դեպքում ուղղումներ կատարի:

Նկարներն իրենց բովանդակութեամբ և կատարումով պետք ե լինեն դեղարվեստական, պարզ, հասկանալի և յերեսաների համար հրապուրիչ: Պատմելու համար ցանկալի յե տալ սյուժետային նկարներ: Յերեսայի պատմածը չպետք ե կրի նկարի մի մասի նկարագրութեան բնութիւթ, այլ պետք ե կապակցված լինի սյուժետի հետ:

Դիաֆիլմերի, դիապոզիտիվների դիտումը յերեսաների կողմից. — Ալոսկոպի կամ մոդական լսարանի ոգտագործման դրական արժեքն այն ե, վոր իլյուստրացիաները ցուցադրելու հետ միաժամանակ ընթերցվում ե տեքստը և վոր յերեսաները հնարավորութիւն են ունենում ամբողջ խմբով միաժամանակ դիտել նկարը և տպավորութիւնների փոխանակութիւնը կատարել: Դիաֆիլմերից (առանձնապես դունափորներից) ստացված տպավորութիւններն աշխարհ վառ ու հուզական են, վոր յերեսաները շատ են պատմում տեսածի մասին և դրամատիզացիայի յենթարկում:

Դիաֆիլմի նկարները ցուցադրելու ժամանակ պետք ե յերեսաներին հնարավորութիւն տալ ամեն մի նկար առանձին լավ դիտել: Դիաֆիլմի նկարները դիտելու ժամանակ յերեսաները կարող են արտահայտել իրենց տպավորութիւնները, այդ իսկ պատճառով չպետք ե բացարձակ լուծիւն պահանջել:

Նույնանուն դիաֆիլմերը յերեսային վարելի յե ցուցադրել մի քանի անգամ. ցուցադրման կրկնողութիւնն առաջացնում ե նոր կարծիքներ, վերապատմումներ: Պետք ե ոգտագործել միայն գեղարվեստորեն կատարված դիաֆիլմեր և դիապոզիտիվներ:

Ռադիոհաղորդման օրակարգում. — Ռադիո-ուսկնդրման ժամանակ տեսողական տպավորութիւնները բացակայութիւնը նա-

խաղաղոցական տարիքի յերեխայի համար վորոչ զժվարություն
ե ներկայացնում, սակայն միևնույն ժամանակ ուժեղացնում է
յերեխայի յերեակայությունը և զարգացնում լսողությունը:
Կազմակերպված ուղիւն-ունկնդրումը մատչելի յե ընդհանրապես
նախաղաղոցական բարձր տարիքի յերեխաների համար:

Ռազիոնազորումը լսելու ժամանակ դաստիարակը յերե-
խաների ուշադրությունը հրավիրում է ուղիւնազորուման ա-
ւանձին տեղերի վրա, յերեխաների հարցերին հակիրճ պատաս-
խաներ է տալիս: Չպետք է արգելել ուղիւնազորումը լսելու
ժամանակ ծախ տալը, ուսուցիչներ տալը: Անհրաժեշտ է նախա-
պես ստուգել ուղիւնապարտություն, նրա լսելիությունը: Նոր
ուղիւնազորումներ պետք է տալ յերեխաներին վոչ այնքան
հաճախ՝ ամիսը 2—3 անգամ: Իսկ այն հաղորդումները, վորոնք
յերեխաներն առաջ լսել են, կարելի յե տալ հաճախակի: Դաս-
տիարակը պետք է յերեխաներին նախապես ծանոթացնի ուղիւն-
ազորուման բովանդակությանը:

Ռազիոյին զուգընթաց նույն ձևով, կարող է ոգտազորովել
և պատեֆոնը:

Վտանաավորների ընթերցում. — Վտանաավորների ընթերցու-
մը նպաստում է լեզվի պատկերավորությանը, արտահայտիչ
խոսքի զարգացմանը, հարստացնում է յերեխայի բառապաշարը:

Վտանաավորների ընթերցման ժամանակ պետք է հետևել,
վոր յերեխան չչտապի, բառն արտասանի հստակ ու լրիվ: Պետք
է յերեխաների մեջ զարգացնել նաև վտանաավորն արտահայտիչ
ընթերցելու ունակությունը:

Դրա համար կարևոր է, վոր յերեխաները հիմնականում
հասկանան վտանաավորի բովանդակությունը, լսեն մեծրի ար-
տահայտիչ ընթերցումը:

Սկզբում դաստիարակն ինքն արտահայտիչ կերպով վրտա-
րում է ամբողջ վտանաավորը, չընդհատելով այն բացատրու-
թյուններով, ապա, ընթերցումից հետո, բացատրում է զժվար
հասկանալի բառերը: Դրանից հետո նորից կարդում է ամբողջ վո-
տանաավորը: Սկզբում դաստիարակի հետ վտանաավորը կրկնում
են առանձին յերեխաները, իսկ վերջում կարելի յե արտասանել
խմբով, բայց միայն այն ժամանակ, յերբ յերեխաները սովորել
են վտանաավորն արտասանել պարզ և արտահայտիչ:

Վտանաավորները, վորոնք տրվում են յերեխաներին անգիր

անելու համար, պետք է լինեն ծավալով վոչ-մեծ, բովանդակու-
թյամբ հասկանալի, պատկերավոր, պարզորոչ հանդերձ:

Վտանաավորն առանձին տներով սերտել տալը չի թույլա-
տրվում:

Անհրաժեշտ է, վոր դաստիարակն անգիր իմանա այն վո-
տանաավորները, վոր տալիս է յերեխաներին, և արտասանի ար-
տահայտիչ կերպով:

Գեղարվեստական ընթերցում ու պատում. — պատմվածք-
ներ, հեքիաթներ լսելը վոչ միայն զարգացնում է յերեխայի յե-
րեակայությունը, լայնացնում նրա մտահորիզոնը, այլև յերե-
խային տալիս է հասարակ, կուլտուրական, պատկերավոր և ար-
տահայտիչ խոսքի որինակներ:

Դաստիարակը պետք է նախապես ծանոթանա հեքիաթին,
պատմվածքին և նախապատրաստվի արտահայտիչ ընթերցել կամ
պատմել: Յեթե դաստիարակը լավ է պատմում կամ կարդում և
յեթե պատմվածքի բովանդակությունը հասկանալի յե և հետա-
քըքըի, յերեխաներն ուշադրությամբ են լսում: Յեթե պատմը-
վածքի մեջ հիշվում են յերեխաներին քիչ ծանոթ առարկաներ,
կենդանիներ, ապա ընթերցանությունն սկսելուց առաջ կարելի
յե ցույց տալ նկարներ և տալ հակիրճ բացատրություններ: Որի-
նակ, «Վոդին և նապաստակը» հեքիաթը կարդալուց առաջ կա-
րելի յե ցույց տալ վորնու և նապաստակի նկարները, Մարչակի
«Բարձր» կարդալուց առաջ յերեխաներին պետք է ծանոթացնել
«անդորադիր», «բազած», բառերին: Նախնական այդպիսի բա-
ցատրությունները պետք է լինեն վորքան հնարավոր է՝ կարճ,
վորպեսզի չհոգնեցնեն յերեխաներին և չթուլացնեն նրանց հե-
տաքըքությունը դեպի պատմվածքը:

Ընթերցանությունը բացատրություններով ընդհատել վոչ
մի դեպքում չի թույլատրվում: Յեթե պատմվածքը յերկար է և
հնարավոր է յերկու մասի բաժանել, ապա կարելի յե տալ 2
անգամ. որինակ՝ Դիմիտրովի «Մանչուկն ու քուչիկը», Թու-
մանյանի «Բաջ Նազարը», Ռոդանովի «Սոսիկի արկածները» և
այլն:

Նախ քան կարդալը, ցանկալի յե գրքույկը տալ յերեխանե-
րին՝ պատկերները նայելու համար. յերբեմն ել պատկերները
ցույց տալ ընթերցելու միջոցին կամ ընթերցումից հետո:

Գեղարվեստական ընթերցման և պատմելու համար հիմնա-

կան նյութ են հանդիսանում ժամանակակից գեղարվեստական գրականությունը, հեքիաթները, կլասիկների առանձին յերկերը, ժողովրդական ստեղծագործությունը (Ֆոլկլոր): Չարիքանց արժեքավոր են այն գեղարվեստական պատմվածքները, վորոնք մատչելի ձևով յերեխաներին ծանոթացնում են մեր մեծ դեկավարների, մեր հերոսների, մեր նվաճումների հետ:

Կլասիկներին ողտագործելիս կարելի յե դիմել մոնտաժի ձևվին: Մոնտաժը կայանում է նրանում, վոր դաստիարակը կլասիկ յերկերից կարդում է յերեխաներին համար հասկանալի, մատչելի առանձին հատվածներ, բովանդակութան մնացած մասը լրացնելով իր պատմածով: որինակ՝ Պուշկինի «Հեքիաթ Սպլիան թագավորի մասին», «Վոսկե ձկնիկի հեքիաթը», Թումանյանի «Չարի վերջը» և այլն: Գրածվածքը մոնտաժի մեթոդով տալու համար դաստիարակը պետք է խնամքով նախապատրաստվի:

Գրա հետ միասին դաստիարակը պետք է պատմի շրջապատի կյանքի հետաքրքրական և յերեխաներին մատչելի դեպքերի մասին, վորոնք նա քաղում է թերթերից, ռադիոյից և այլ աղբյուրներից:

Սուքի գարգացման համար յերեխաներին հարուստ հնարավորութուններ են տալիս գրամատիզացիան, ստվերային թատրոնը, տիկնիկային թատրոնը: Սաղ— գրամատիզացիաները նպաստում են յերեխայի լեզուն պատկերավոր և արտահայտիչ դարձնելուն: Պետք է ամեն կերպ խրախուսել յերեխաների գրամատիզացիան, աիկնիկային թատրոնի խաղերը, բոլոր տեսակի խաղերը, որինակ, առարկայական, բուսական, կենդանական բոսո և այլն:

Մանկական գեղարվեստական գիրքը.— Նախադպրոցական տարիքի յերեխաների հետ աշխատելիս մանկական գեղարվեստական գրքի խնդիրները բազմապիսի յեն:

Խորհրդային մանկական գիրքը յերեխաներին կոմունիզմի վորով դաստիարակելու միջոցներից մեկն է հանդիսանում: Կենդանի, վառ պատկերներով գիրքը խոր կերպով ազդում է յերեխայի գրգայուններին վրա, առաջացնում է վորոշակի վերաբերմունք դեպի շրջապատող կյանքի յերևույթները, դաստիարակում է յերեխաների մեջ սեր դեպի մեր հայրենիքը, դեպի մեր առաջնորդներն ու հերոսները, և ատելության գրգայունք՝ դեպի ժողովրդի թշնամիները: Գիրքն ոժանդակում է յերեխաների մեջ աջակցի հատկությունների դաստիարակմանը, ինչպիսիք են՝

կամք, համարձակութուն, ճշմարտութուն. որինակ՝ առաջնորդների, Կարմիր բանակի մասին գրված գրքերը յերեխայի մեջ ցանկություն են առաջացնում լինել նույնպիսի հերոս և խիզախ, ինչպես պատմվածքների հերոսները:

Լավ գիրքը գեղարվեստական դաստիարակության հիմնավի միջոց է: Գրական վառ պատկերները, գեղարվեստական իլյուստրացիաները դարգացնում են յերեխայությունը, գեղեցկության գրգայունքը: Գրքի պատկերավոր լեզուն, առանձին արտահայտությունները, բառերը հարստացնում են յերեխայի բառապաշարը, դարգացնում են նրա խոսքի կուլտուրան: Գիրքը յերեխաներին ուրախութուն է պատճառում, յերեխաների մեջ դարգացնում է հումորի գրգայունք, ստեղծում է զվարթ տրամադրություն: Դա դեռ չի նշանակում, վոր անթույլատրելի յեն մաղբութուն: Դա դեռ չի նշանակում, վոր անթույլատրելի յեն մաղբութուն, վորոնք յերեխաների մեջ տխրության, խղճահարություն գրգայունք են առաջացնում (որինակ, Անդերսենի «Անճոռնի բաղիկը» և այլն):

Մանկական գրականությունը լայնացնում է մանկան հետաքրքրությունների, պատկերացումների շրջանը:

Յերեխաների համար գիրքը ընտրելիս պետք է ղեկավարվել ընդհանուր դաստիարակչական խնդիրներով, ըստ վորում, պետք հիշել, վոր գիրքը պետք է համապատասխանի մանկական հետաքրքրությունների բազմազանությանը, նախադպրոցական տարիքի յերեխաների առանձնահատկություններին և գեղարվեստականության պահանջներին:

Փարուլայի պարզորոշութունը, գործողության արագ ծավալումը, գործող անձանց փոքր քանակը, ութմիկ ու հասարակ կառուցվածքը, լեզվի պատկերավորութունը, հումորը, վոր հատուկ է հեքիաթների մեծ մասին, այդ ամենն առանձնապես զբաղում է յերեխային: Գրա համար անհրաժեշտ է լայն չափով ուղտագործել հեքիաթները, առանձնապես ժողովրդական հեքիաթները, վորոնք ունեն գեղարվեստական մեծ պարզություն և շատ արտահայտիչ են:

Մանկական գրքի ընտրության ժամանակ շատ կարևոր դեր են խաղում տեքստի ուղեկցող իլյուստրացիաները: Գեղարվեստականորեն կատարված նկարները գիրքը դարձնում են յերեխային առանձնապես մոտիկ, սիրելի ու հեշտ ըմբռնելի:

Յերեխաների համար գրքեր ընտրելիս պետք է ողտագործ

Տեղ ժամանակակից դրականութիւնը և ՌՍՀՄ տարբեր ժողովուրդները ֆոլկլորը:

Դաստիարակը պետք է լավ ծանոթ լինի մանկական դրականութեանը, առանձին մանկական դրքերի բովանդակութեանն ու իլյուստրացիաներին: Նա պետք է նախապես ինքը կարգաչեղեխային մատուցվող դերքը:

Ընթերցանութեան համար հանձնարարվող մանկական դրքերի ցուցակը (տես հավելված № 4-ը) կազմված է ֆոլկլորային յերկերից (հեքիաթներ, յերգեր, հանելուկներ և այլն), կյտնիկների և ժամանակակից դրողների գործերից, վորոնց հետ դաստիարակը ծանոթացնում է նախադպրոցական տարիքի յերեխային:

Այս դեռ չի նշանակում, վոր ընթերցումը պետք է սահմանափակել ցուցակում նշված դրքերով: Դաստիարակը պետք է հետևի դրականութեանը և ցուցակը միշտ լրացնի նոր յույս տեսած մանկական լավ դրքերով:

Գ Լ ՈՒ Խ Վ Պ

ՆԱԽԱԳՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ՅԵՐԵԱՆՆԵՐԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Նախադպրոցական տարիքի յերեխայի մաթեմատիկական նախնական պատկերացումների զարգացումը մեծ նշանակութիւն ունի նրա մտավոր զարգացման համար:

Դաստիարակը յերեխայի մաթեմատիկական նախնական պատկերացումները պետք է զարգացնի դիտողական վրնկրես նյութի հիման վրա, ոգտագործելով դրա համար յաղերը, տարբեր նյութերով դրադմունքները, նկարների դիտումը և այլն: Այդ գործում մեծ նշանակութիւն ունի նաև հատուկ դիդակտիկ նյութը, վորը սակայն ոժանդակ դեր ունի:

Մաթեմատիկական պատկերացումների զարգացման համար անհրաժեշտ է աշխատանքը փոքրերի և մեծերի յամբերում ունի իր առանձնահատկութիւնները: Յեթե փոքրերի յամբում ոգտագործվում են, դիտավորապես, առորյա կյանքից վերցված փաստերը, ինչպես նաև յաղերն ու յաղալիքները, ապա մեծերի յամբերում մեծ նշանակութիւն են ստանում դիդակտիկ նյութերով կատարվող յաղերն ու պարապմունքները:

Փոքրերի յուսմքը: Հաշիվ և քիվ.— Փոքրերի յամբում յերեխաները սովորում են տարբերել «չատ» առարկաներ, «քիչ» առարկաներ, «մի» առարկա, հերթականութեամբ թվել մինչև յերեքը, հինգը և առարկաները հաշիվել այդ սահմանում:

Դրա համար ոգտագործվում են շրջապատող կյանքից վերցված նյութերը յաղալով, յերեխաները յերբեմն հաշիվում են իրենց տիկնիկները, յաղալիքները. դիտելով ճաղարներին, հաշիվում են, թե ճաղարներից քանի՛սն են սև, քանի՛սն սպիտակ: Պարելի յե յերեխաներին տալ հանձնարարութիւններ՝ բերել յերկու մատիտ, յերեք դնդակ և այլն:

Դաստիարակը յերեխային հաշիվել և սովորեցնում, որինակ

Նա ասում է՝ «տո՛ւր ինչ յերեք զնդակ»։ «Յեկ հաշվենք՝ մեկ զնդակ, յերկու զնդակ, յերեք զնդակ»։

Կարելի չե ոգտագործել նկարների դիտումը (յերկու կեռաս, չորս խնձոր), համբիջները, թվերի ռիթմիկ կրկնողութուններ ունեցող փոքրիկ վոտանավորները, «Առաջին հաշիվը» խաղը և այլն։

Մեծուքյուն։ Յերեխաների առորյա կյանքի կոնկրետ փաստերի, շրջապատող առարկաների և խաղալիքների միջոցով դաստիարակը յերեխաներին սովորեցնում է տարբերել՝ մեծ—փոքր, յերկար—կարճ, ծանր—թեթև. խիստ կերպով իրարից տարբերվող նույնատեսակ առարկաներ համեմատելիս՝ պատասխանել այն հարցին, թե նրանցից վո՛րն է մեծ, վո՛րը փոքր, վո՛րն է յերկար, վո՛րը կարճ, վո՛րն է ծանր, վո՛րը թեթև։

Ձեվ։ Կառուցողական նյութերով խաղային յերեխաները սովորում են տարբեր դնել, խորանարդի (կուբիկ) ձևերը, ձանաչել դրանք և տալ անունները։

Այդ նպատակի համար պետք է յերեխաներին վորպես խաղալիքներ տալ զանազան դույնի և մեծության զնդակներ, ինչպես նաև, տալ հանձնարարութուններ, որինակ՝ «բե՛ր խորանարդը, (կուբիկը), տո՛ւր զնդակը»։ Յերեխաներին խաղի համար, վորպես մողախի, կարելի չե տալ և հարթ Փիղուրներ (քառակուսի, յեռանկյունի և այլն)։

Միջակ խումբ։ Հաշիվ և թիվ։ Միջակ խմբի յերեխաներին պետք է սովորեցնել տասի շրջանում հաշվել զանազան առարկաներ, պատասխանել «վո՞րքան է» հարցին, իմանալ զասական հաշիվը։

Դրա համար ոգտագործվում են յերեխաների կյանքի զանազան մոմենտներ. որինակ՝ դրոսանքից վերադառնալիս յերեխաները կարող են հաշվել զնդակները՝ պատկերները, խաղալիքները. սեղանը դցելիս կարող են հաշվել ավետները, գդալները. շարժական խաղերի, Փիղուլտ պարապմունքների ժամանակ յերեխաները թվարկում են՝ «Յեա առաջին եմ, յեա յերկրորդն եմ» և այլն։ Հաշվի համար ոգտագործվում են ամենաբազմապիսի առարկաները, վորոնք ըմբռնվում են տեսողության, շոշափելիքի, լսողության և մկանային համակարգության միջոցով։ Որինակ, յերեխան թռչում է «յերեք» անդամ, ծափ է տալիս «հինգ» անդամ և այլն։ Լավ է ոգտագործել այնպիսի պի-

տույքներ և խաղեր, ինչպիսիք են «Թիկ-Թակը», Տիխեևայի հաշվային արկղերը, «նոր դոմինոն» և այլն։ Լավ է յերեխաներին տալ այսպիսի հանձնարարութուններ. «բեր հինգ հաս խորանարդ», «տուր վեց մատիտ»։

Մեծուքյուն։ Մեծ—փոքր, յերկար—կարճ, ծանր—թեթև, բարձր—ցածր, հաստ—բարակ, լայն—նեղ հարաբերութունների հետ միասին տրվում են նաև մեծութունների համեմատութուններ. ավելի մեծ —ավելի փոքր, ավելի յերկար—ավելի կարճ, ավելի բարձր—ավելի ցածր, ավելի հաստ—ավելի բարակ, ավելի լայն—ավելի նեղ, ավելի ծանր—ավելի քեթև։

Փոքրերի խմբում հաստը—բարակը, լայնը—նեղը և այլն տարբերելու համար ոգտագործվում են իրարից խիստ տարբերվող՝ բայց նույն տեսակ առարկաներ. — որինակ՝ լայն և նեղ ժապավեն, հաստ ու բարակ ծառ, բարձր ու ցածր յեղենի և այլն, ինչպես նաև՝ խաղալիքներ և զանազան պիտույքներ, տարբեր ծանրության տուրակներ (ավելի ծանր, ավելի թեթև) և այլն։ Մեծութունների համեմատության համար ոգտագործվում են յերեք—չորս փոքրացվող առարկաներ։

Ձեվ։ Փոքրերի խմբում ձևերի մասին տրվող պատկերացումների (զունդ, խորանարդ) հետ միասին միջակ խմբում յերեխաներին տրվում են պատկերացումներ նոր ձևերի (չրջան, քառակուսի, յեռանկյունի) մասին, այդ նպատակով մտցվում են զանազան խաղեր՝ զույգ նկարներ, լոտո։

Նպատակահարմար է տալ մի դույնի լոտո, վորպեսզի յերեխան խաղալիս զույգ նկարը տարբերի վո՞չ թե ըստ գույնի, այլ ըստ ձևի։

Կտրուման և փակցման զբաղմունքների ժամանակ կարելի չե յերեխաներին առաջարկել՝ ուրվադժել այս կամ այն ձևը կամ կտրտել ըստ պատրաստի ուրվադժի։

Տարածուքյուն։ Տարածական հարաբերութուններին վերաբերող պատկերացումները յերեխաների մեջ զարգացնում են ամենաբազմազան նյութի վրա։ Գնացք խաղալու ժամանակ յերեխաների ուշադրութունը բեռնվում է այն բանի վրա, վոր շոգեքարը կցում են «առջևից», իսկ վագոնները՝ «յետևից»։ Յերեխան ձանապարհով վագոն է «առաջ» և «հետ»։

Գնդակ խաղալիս յերեխաները զնդակը նետում են «վեր», իսկ հետո զնդակն ընկնում է «վար»։ Շատ լավ է ոգտագործել

կառուցողական նյութերով խաղերը, ինչպես նաև նկարների գիտումը:

Սաղերի ընթացքում նկարները դիտելիս կարելի չէ յերեխաների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, վրա տան «յետևում» ընկած են մարդերը, իսկ տան «առջևում» այգին և այլն:

Կարևոր է, վրա յերեխան ինքը վորոչի առարկաների դիրքը և աստիճանաբար տիրապետի այնպիսի արտահայտությունների, ինչպիսիք են՝ «առջևում», «հետևում»: Ուղտադործելով բոլոր այդ մտնեաները, դաստիարակը յերեխային տալիս է ստաջ— հետ, վերև—ներքև, հետև—մոտ պատկերացումները, ինչպես նաև սովորեցնում է յերեխային տարբերել իր աջ և ձախ ձեռքերը:

Ժամանակ: Միջակ խմբում յերեխաներին, պետք է սովորեցնել ճիշտ դործածել ցերեկ, գիշեր, աշտր, վաղը, յերեկ բառերը:

Դաստիարակը խոսակցութեան ժամանակ դործածելով այսոր—վաղը, յերեկ բառերը, բացատրում է այդ բառերի խմաստը:

Մեծերի խումբ: Հաշիվ և գործողութուններ քվերի հետ: Մեծերի խմբի յերեխաները սովորում են տարբերել թվերի կազմութունը 5-ի շրջանում և կոնկրետ նյութի հիման վրա կատարել դումարման համեմատաբար հեշտ տեսակները 10-ի շրջանում:

Հաշվային կոնկրետ նյութերով աշխատելու պրոցեսում յերեխան ծանոթանում է թվերի մի քանի կոմբինացիաների հետ, ինչպես որինակ՝ չորսը՝ դա յերկու յե և յերկու, յերեքը՝ դա յերկու յե և մեկ: Յերեխան կարող է հասկանալ յերկու դումարելիներից կազմված նաև ուրիշ կոմբինացիաներ՝ յերկու—դա մեկ է և մեկ, յերեք— դա յերկու յե և մեկ, չորս— դա յերեք է և մեկ, յերկու յե և յերկու, հինգ—դա չորս է և մեկ, յերեք է և յերկու: Ի հարկէ, այդ կոմբինացիաներն անդիւր անելու մասին խոսք անդամ չի կարող լինել: Յերեխաները հեշտութեամբ են յուրացնում դրանք, յեթե դաստիարակն ուղտադործում է յերեխաների կյանքից վերցված մտնեաները, որինակ՝ «Վովա, այս սեղանի վրա պետք է դնել 5 դդալ, իսկ դու բերել ես միայն 3 դդալ, մտածիր՝ քանի՞սն է պակաս, բեր մնացածները»: Նպատակահարմար է ուղտադործել այնպիսի ձևեր, ինչպես առարկաների այս կամ այն խումբը յերկու ավելի փոքր խմբերի բաժանելն է, որինակ՝ յերեխաներին առաջարկվում է փակցնել 5 տանձ (նկարներ, ուրվագծեր), նախապես բաժանելով դրանք 2 խմբի,

բաժանելուց հետո յերեխաները համեմատում են, թե ո՞վ ինչպես է բաժանել: Մյուս ձևը՝ յերեխաներից մեկը ցույց է տալիս 5 թվանշանի պատկերը, իսկ մյուսները պետք է ցույց տան այդ թվի տարբեր կոմբինացիաները համապատասխան թվանշաններով, որինակ՝ 3 և 2 կամ 1 և 4:

Կարևոր է, վրա յերեխաները թվի կազմութունը տեսնեն նաև առարկաներ ներկայացնող դանդան նկարներով. որինակ՝ 5 ողտապրիկ, վորոնցից 4-ը կարմիր, 1-ը՝ կապույտ. 5 ձաղար—ներանցից 3-ը սև, 2-ն սպիտակ:

Գումարման վարժութունների համար կարելի չէ ուղտադործել մի շարք խաղեր և դրադմունքներ. որինակ՝ անտառի նկարը դիտելիս դաստիարակն ասում է. «Մտերից մեկի տակ բուսել է 4 սունկ մյուսի տակ՝ 2 սունկ: Ընդամենը քանի՞ սունկ է բուսել»:

Կարելի չէ բոլոր յերեխաներին տալ յերկուական կաղին կամ վորեւէ այլ իր, հետո յուրաքանչյուրին տալ ևս յերկու հատ և հարցնել, թե ընդամենը ի՞նչքան ունի:

Յերեխաներին տպագիր թվանշանների հետ ծանոթացնելու համար կարող են ուղտադործվել յերեխաների պատրաստած թվանշաններ ունեցող հաշվային աղյուսակները (որինակ՝ փակցնում են հինգ խնձոր, իսկ աջից՝ 5 թվանշանը և այլն), դույզ նկարներով և թվանշաններով խաղերը, «տրամյայլ լոտո», «թվանշաննային լոտո», «հաշվային արկղեր» և այլ խաղեր: Սաղերի և խաղալիքներն ու պիտույքները կարող բերելու ժամանակ լայն չափով վարող են ուղտադործվել թվանշաններով քարտերը:

Մեծութուն և չափում: Մեծերի խմբի յերեխաների հետ կատարվող աշխատանքի ժամանակ պետք է ճշտել յերեխաների պատկերացումներն առարկաների չափերի և նրանց հարաբերութունների մասին: Դրա համար կարելի չէ ուղտադործել դույզ նկարներ և տարբեր չափերի բազմատեսակ առարկաներ պատկերացնող նկարներ— խաղերը. որինակ՝ ասեղը բարակ է, մատիտը հաստ է, բարակ տետր, հաստ դիրք: Յերեխաներն ընտրում են համապատասխան դույզեր և դասավորում:

Ուղտապետ է նաև ուղտադործել յերեխաների դրադմունքները տարբեր նյութերով. յերեխան առաջարկել կտրել, նկատել տարբեր չափի մեկ կամ մի քանի միատեսակ առարկաներ, կամ ծեփի ժամանակ առաջարկել համեմատել կալի դնդակները՝ վորը նրանցից ավելի ծանր է:

Մեծերի խմբի յերեխաներին այդ հարաբերութունների ա-

փայտիկ (կապ) և առանձին փայտիկներ, վորոնք ներկայացնում են թվի միավորները:

20-ի շրջանում հաշվելուց հետո յերեխաներին կարելի չե ծանոթացնել դումարման և հանման թեթև որինակներին, ինչպես 10+5, 5+10, 15+5, ինչպես նաև առաջին տասնյակի յերկանիշ թվերին միավորներ ավելացնելու (12+3 և այլն) և նրանցից միավորներ հանելու որինակներին (15-2 և այլն):

Յերկու տասնյակի սահմաններում յերեխաներին միանգամայն մտոչելի չե հավասար խմբերով (դույզերով, հնգյակներով) հաշվելը: Շատ լավ է նման հաշվումը պարզաբանել յերկուսն ուլունքներ, դնդակներ և այլն շարելով:

Չափումը: 7 տարեկան յերեխաներին հարկավոր է ծանոթացնել հետևյալ չափերի հետ՝ մետր, կիլոգրամ:

Ոգտվելով պատրաստի մետրով, յերեխան ամենից առաջ կարող է չափել մի մետրի յերկարությամբ մի շերտ. կարող է չափել սեղանը և այլն: Չափումը կարելի չե սկսել նրանից, վոր յերեխաները կտրված շերտով «մետրերով» անցնում են չափվելիք տարածությունը, իսկ հետո նույն այդ տարածությունը չափում է արդեն մեկ մետրով, վորը յերեխաները հետևողականորեն տեղից տեղ են փոխադրում:

Ձեվ: 7 տարեկան յերեխաներին հարկավոր է սովորեցնել՝ տարբերել շրջապատող առարկաների ձևը. դուռը, սեղանի յերեսը ուղղանկյուններ են. խաղաղնդակը, փոքրիկ ողապարիկները դնդեր են և այլն:

Յերեխաները պետք է կարողանան աչքաչափով նկարել կամ կտրել շրջան, քառակուսի, քառանկյունի, յեռանկյունի և այլն: Յերեխաները կարող են այդ ձևերից կազմել որնամենտներ, ինչպես նաև կավից ծեփել խորանարդներ, քառորդ ձևեր, դնդեր:

Տարածություն: 7 տարեկան յերեխաների խմբում ամրապլնդվում է այն, ինչ արված է մեծերի խմբում (տես ցուցումը մեծերի խմբի համար):

Ժամանակ: Այդ խմբում նոր նյութ է հանդիսանում ժամացույցին ծանոթացնելը: Նպատակահարմար է սկզբում ցույց տալ ժամացույցի մոդելը, վորի վրա շրոպներ ցույց տվող սլաքը շարժվում է: Յելնելով սլաքի դրությունից, յերեխաներն ասում են այն ժամը, վորը նա ցույց է տալիս: Այդ այդ նույնը նրանք անում են իրենք: Լավ է ողտագործել «վոր ժամն է» խաղը:

Յերեխաներին պետք է սովորեցնել՝ ըստ սրացույցի ասել ընթացիկ ամսվա անունը: Այդ կարելի չե անել շարժական թվանշանների ոչնությամբ: Յերեխաներն արդեն դիտեն, վոր զերոն 20-ի մեջ դրսավում է միավորների տեղը, և ցույց է տալիս, վոր միավորներ չկան: Ձերոն հերթականությամբ փոխարինվելով թվաշարքի թվերով, յերեխաներն անվանում են թվերը՝ քսանմեկ, քսաներկու, քսաներեք և այլն, մինչև 30ը:

ՏԻՋԿՈՒՆ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐԲԱՎՈՐՈՒՄԸ

1. Ռեախնե գնդակներ 20—25 սմ. տրամագծով . . .	8 հատ.
2. Ռեախնե գնդակներ 10—15 սմ. տրամագծով . . .	15 հատ.
3. Ռեախնե գնդակներ 6—8 սմ. տրամագծով . . .	25 հատ.
4. Չանազան չափերի փայտե գլորաններ	30 հատ.
5. Կարճ ցատկիչապարաններ	30 հատ.
6. Յերկար ցատկապարաններ 3—4 մետր յերկարութ. .	2 հատ.
7. Բարակ պարան 14—15 մետր յերկարությամբ (վարժությունների ու խաղերի համար)	1 հատ.
8. Սանձեր	15 հատ.
9. Գունյազգույն դրոշակներ՝ փայտի յերկարություն մոտավորապես (դրոշակի չափը 10×20 սմ.	30 սմ. 25 հատ.
(դրոշակի չափը 15×20 սմ.	25 հատ.
10. Սերսո (ողակներ ու փայտեր)	10 հատ.
11. Մարմնամարզական փայտեր (յերկարութ. 90 սմ. տրամագիծը —2—2 $\frac{1}{2}$ սմ.)	30 հատ.
12. Դահուկներ (յերկարութ.—124 սմ. կշիռը—850 գր.) լայնությունը 6 $\frac{1}{2}$ սմ.)	30 հատ.
13. Դահուկներ (յերկարութ. 136 սմ, կշիռը—770 գր. լայնությունը—5 սմ.)	30 հատ.
14. Սահնակներ	16 հատ.
15. Վեց կողմանի և յերեք կողմանի ցանկապատեր (փոքրերի համար)	2 հատ.
16. Ամբիոն աշտարակով (միջակների և մեծերի համար)	
17. Կանգնակ (ստոյկա) թռչելու համար	
18. Տախտակներ 20 սմ. լայնությամբ և 1 $\frac{1}{2}$ մետր յերկարությամբ (փոքրերի համար).	
19. Գերաններ (միջակների և մեծերի հավասարակըշ- ուության վարժությունների համար).	
20. Շվեդական պատ (բարձրութ.—2 մ. աստիճանների հեռավորությունն իրարից—20 սմ).	
21. Վահաններ նշանին նետելու համար	3 հատ.

«ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԲԱԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՈՏԱՎՈՐ ՌԵՊԵՐՏՈՒԱՐ

ՓՈՒՐԵՐԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

Յերածշտակաճ ունկնդրություն

Յերգեր

1. Սագիկ-մագիկ	Ա. Մանուկյանի
2. Փխիկ-փխիկ	»
3. Թ ի թ և ո	Դ. Ղազարյանի
4. Տիկնիկի սրորը	Ն. Ստեփանյանի

Ինստրումենտալ յերածշտություն

Յերածշտական ժողովածու տար-
րական դպրոցի համար (ուսե-
րեն)

1. 17-րդ դարի ֆրանսիական քայլերգ	
2. Քայլերգ	Ռ. Շումարի
3. Տիկնիկների քայլերգ	Գեղարվեստական դաստիարա- կություն (ուսերեն)
4. Տիկնիկների պար	»
5. Մուկն ու կատուն	Լորաչյովի

ՅԵՐԳԵՅՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերածշտություն

Խառփ

1. Եծիկ	Դ. Ղազարյանի	Աղբարի
2. Ծաղկունքով շողուն մայիս »	»	Դաշտենցի
3. Փխոն և Չամբարը	Ումբ-Շատի	Շ. Թումանյանի
4. Ծիաիկներ....	Ս. Գալիկյանի	Շ. Աղբարի
5. Ահա ձմեռն անցնում և	Միքյանի	Միքյանի
6. Աչքակապուկ	Ս. Չաքարյանի	Ս. Չաքարյանի
7. Անձրև	Ա. Մանուկյանի	Ռ. Պատկանյանի
8. Յեկեք կազմենք շրջան—նախադպրոցական յերգերի ժողովա- ծու (ուսերեն)		

Դաստիարակի յերգի տակ

- 1. Զնգոցներ Յերածշտական շարժական աշխատանք մինչ-նախադպրոց. հետ.—Բարաջանի
- 2. Մուկն ու կատուն Յերգեր և խաղեր Մ. Միրզոյանի
- 3. Աչքակապուկ Ս. Զաքարյանի

Խաղեր և պարեր նվագի տակ

- 1. Թռչնակ Գեղարվեստական դաստիարակութուն (ուսանքներ)
- 2. Զի
- 3. Նապաստակ
- 4. Արջ Մանկակ. ստեղծագործ. (ուսանքներ)
- 5. Տիկնիկի պար
- 6. Շուրջպար № 1 Ս. Գալիկյանի
- 7. » № 2 »
- 8. Նապաստակների պար Ա. Բալանթարի
- 9. Գնացք
- 10. Հենգել և գրեռել (գերմ. մանկ. ոպերայից) շարժ. Ա. Որլովայի

ՄԻՋԱԿ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

Ունկնդրություն

Յ Ե Ր Գ Ե Ր

- 1. Որոր մեկ. Հովանիյանի, յերածշտ. մշակ. Ս. Գալիկյանի
- 2. Փխիկ Ս. Գալիկյանի
- 3. Ծիծեռնակը բուն և շինում Ա. Մանուկյանի
- 4. Բերքի տոն Ա. Միրզոյանի
- 5. Մանկական յերգեր Սարգսյանի
- 6. Պարտիզանական

Ինտրումենտալ գրականություն

- 1. Արեվելյան պարեր Ա. Բարխուդարյանի
- 2. Քնար (քայլերգ) Զաչկովսկու
- 3. Ուրախ գյուղացին Շումանի
- 4. Տիկնիկի հիվանդութունը Զաչկովսկու
- 5. Համարձակ ձիավորը Շումանի
- 6. Պարսկական մարշ Ն. Տիգրանյանի
- 7. Տղամարդկանց և կանանց պարեր Սպենդիարյանի

Խոսք

- 1. Դրոշը ծածանվում է Վրաստանու յերածշտ. ժողովածու տար. դպ. համար(ուսու.)
- 2. Զան, աշուն Հ. Հայրապետյանի Դ. Ազարյանի
- 3. Տոնածառ » » »
- 4. Իլիչի Աչիկները » » »
- 5. Կեղտոտիկ Յե. Մ. Շարավսկու, թարգման. և յերածշ. մշ. Ս. Գալիկյանի
- 6. Բարև, ձմեռ Հ. Հայրապետյանի
- 7. Զան, իմ ծիտիկ Հենրիկի Ս. Գալիկյանի
- 8. Յերեք փխիկներ Հ. Հայրապետյանի »
- 9. Զան, հոկտեմբեր Արաքսու »
- 10. Մայիս ջան, մայիս Վ. Ստեփանյանի »
- 11. Ստալին պապի զինվորն եմ Մ. Կորյունի Մ. Միրզոյանի
- 12. Լենին պապին Հ. Հայրապետյանի Ս. Գալիկյանի
- 13. Մկան թակարդ Մ. Միրզոյանի Մ. Միրզոյանի
- 14. Շուտով կգա կանաչ գարունը Սեփ. Սար. Ե. Մայիլյանի
- 15. Գարուն յեկավ Խնկո Ապր Ռ. Մելիքյանի և Ա. Մանուկյանի
- 16. Մենք առաջ շարժվենք. Կոստանյանի Ա. Մայիլյանի
- 17. Զնծաղիկ Ա. Մայիլյանի »
- 18. Զնգոցներ ուսու. ժող. թարգ. և յեր. մշակ. Ս. Գալիկյանի
- 19. Կուռնկներ չուն ուսու. ժողովրդ. թարգմ. Ս. Սամվելյանի
- 20. Փխիկ-փխիկ Խնկո Ապր Ա. Մանուկյանի
- 21. Տիկնիկի որորը Խանիկյանի Ն. Ստեփանյանի

Յերգի տակ

- 1. Փխոն և մուկը Լորաչյովի
- 2. Մենք առաջ շարժվենք Ա. Մայիլյանի
- 3. Զնգոցներ Խ. Կոստանյան
- 4. Զնծաղիկ Ա. Մայիլյանի

Նվագի տակ

1. Գնացք
2. Թռչնակն ու մրրիկը
3. Զմեռն անտառում Գլինկի
գեղարվեստական դաստիարակ-
4. Նորվեգական պար Գրիգի շարժ. մշակ.
Գ. Իսահակյանի
5. Ֆիզիկոլոս պար շարժ. Գ. Գեղամյանի
6. Վրացական պար շարժ. »
7. Ադրբեջանական
8. Շուրջպար Լ. Սարգսյանի
9. Հուշակ
10. Զինական պար
11. Պար զույգերով Ն. Պոպովայի

ՄԵՏԵՐԻ ԳՄԲԻ ՀԱՄԵՐ

Ունկնդրություն
Յերգեր

1. Մաղիկների յերգ Ա. Մանուկյանի
2. Չ կ ն ի կ Ս. Գալիկյանի
3. Ուրախ աղաներ Դուռնայեվսկու
4. Հայրենիք »
5. Հայրենիք Ա. Այվազյանի
6. Զան Ստալին
7. Մանկական յերգեր Լ. Սարգսյանի
8. Ո ը ո ը Գեղարիկի
9. Աշուն »
10. Ինտերնացիոնալ
11. Պայն ու շաղգամը

Ինստրումենտալ գրականություն

1. Արաուտի յերգը Չայկովսկու յերաժշտ-
2. Թռչնակ Գրիգի ժողովածու աարը. դպր-
համար (ուսերեն)
3. Միլիցիական յերգ . . Շումանի
4. Հողակ Մուսորգսկու
5. Պոլկա Չայկովսկու
6. Մադրաժունների պարը Ռիմսկի-Կորսակովի
7. ԽՍՀՄ ժողովուրդների մասսայական պարերի ժողովածու

8. Քայլերդ «Լուսաբացին» ուղերայից . . . Ա. Ստեփանյանի
9. Նոր մասսայական քայլերգներ

Մ ո ս կ Վ ա

Յեթե վաղը պատերազմ լինի
Յերխասարգուլթյուն

Յերգեսողություն

1. Զարածնի Հայրապետյանի Գ. Ղազարյանի
2. Զմռան յերգ Գ. Բորյանի Ս. Գալիկյանի
3. Աշուն յեկավ պողաբեր. խոսք և յերաժ. Ս. Գալիկյանի
4. Յերեք փիսիկներ . . . Հայրապետյանի
5. Յերկար ապրի մեր Ստալինը Սերերբյակովի
6. Թե դուրս կգա մեր դեմ . Հ. Հայրապետյանի Ս. Գալիկյանի
7. Պղան-պղան Խնկո Ապոբ »
8. Սարյակներ Հ. Հայրապետյանի »
9. Նոր տարի Հ. Հայրապետյանի Գ. Ղազարյանի
10. Զան, յեղևնու ծառ . . . Շայրոնի Ումբ-Շատի
11. 20-ամյակի յերգը . . . Լորենցի Ա. Մանուկյանի
12. Զան, բամբակ Շայրոնի Մ. Մազմանյանի
13. Յեկավ կարմիր Հոկտեմբեր Կ. Զաքարյանի

Նարժումներ յերաժշտության տակ

1. Զյան փաթիլներ շարժ. Վ. Մեսյանի
2. Թե դուրս կգա մեր դեմ . . . Ս. Գալիկյանի
3. Գորտիկ
4. Տարանտելլա յերաժ. Շմիգի շարժ. Մ. Այվազյանի
5. Թաթարական պար
6. Պար ժապավեններով, շարժ. մշակ. Ն. Պոպովայի
7. Պլաստիկ պար Ե. Խաղիզյանի
8. Արևելյան պար շարժ. Ն. Քալանթարի յերաժշտ. մշակ. Ա. Գալիկյանի
9. Ալ յայլուխ յերաժշտ. ժողովրդական շարժումներ Մայրանուշ Այվազյանի

7 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Յերգեր

1. 20-ամյակի յերգը Ա. Մանուկյանի
2. Մառը մերկացավ . . . Խնկո Ապոբ Ս. Գալիկյանի
3. Զմռան վերջը Հ. Հայրապետյանի »

- 4. Լենինի ուղին Տաճատ Գալինի Ս. Գալիկյանի
- 5. Փոս ենք փորում Հ. Հայրապետյանի Ս. Գալիկյանի
- 6. Մանուկը և թիթեռը Ս. Գալիկյանի
- 7. Տոնածառ Հ. Հայրապետյանի Ս. Միրզոյանի
- 8. Բերքի տոն » » »
- 9. Ծաղկաձոր Մ. Կորյունի Ս. Ավետիսյանի

ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅՈՒՆ

- 1. Մանկ. յերգեր Ս. Մանուկյանի 1,2,3,4 տար:
- 2. » » Գեղարիկի
- 3. Դպրոցի 1, 2, 3, 4 խ. յերգերից
- 4. Մասսայական յերգեր.

ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ԻՐԵՐԻ ՅՈՒՑԱԿ

- 1. Լավ լարած և սարքին պեղալներով դաշնամուր:
- 2. Պատեֆոն սլլաստիկաներով (տես սեպերտուլարը):
- 3. Յերգերի, խաղերի, պարերի, ինչպես և շարժումների համար. յերաժշտական հատվածների ժողովածուներ (տես սեպերտուլարը):
- 4. Յերաժշտական խաղալիքներ՝ ճիշտ ձայներով մետաղի ցիմբալներ (5—10), թմբուկ (1), դափեր (3—5), յեռանկյունիներ (25—30), դոնգակներ (10—15), չխչխկաններ (25—30), կաստանետներ (2):
- 5. Փոխվող բերանոցով սոխակներ (5—10), ինքնաշեն սրինգներ (5—10), առողջապահական տեսակետից թուլյատրվում է միայն անհատական գործածության համար, մանկական ֆլեյտաներ (2—3)՝ դաստիարակների ոգտագործման համար:
- 6. Գույնզգույն դրոշակներ (50—60), փոքր գնդակներ (25—30), մեծ գնդակներ (3—5), սանձեր (15), ցատկապարաններ (15), պարան (14 մ. յերկարությամբ), փայտեր (30), գունավոր նշան-կապեր (30), ֆաներայից սլատրաստած և քուղ անցկացրած յերկրաչափական վոչ մեծ ձևեր՝ շրջան, քառակուսի, յեռանկյունի (36):
- 7. Պետրուշկա—տիկնիկներ:
- 8. Զարդագլխարկներ (կարմիրբանակայինի, կարմիր նավաստու, ողաչվի, հրդեհաշեջի, թռչունների, կենդանիների և այլն):

Յ Ո Ւ Յ Ա Կ
ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

№	ԳՐՔԻ ԱՆՈՒՆԸ	ՀԵՂԻՆԱԿ	Փոխադրող կամ քարգմանիչ
	Փոքրիկ և միջակ խմբի համար		
1.	Առաջին վորսը	Վ. Բիանկի	Ա. Խնկոյան
2.	Թխամեքը	Ա. Խնկոյան	
3.	Սանդուխտը	Շարաթ	
4.	Հովիվ Մկրտչու կկոռները	Վ. Բիանկի	Ա. Խնկոյան
5.	Փրփրիկը	Լ. Տոլստոյ	Հ. Հայրապետյան
6.	Վոսկեմագիկը	Կլեռովա	Հ. Հայրապետյան
7.	Բոգոլը	Ըստ Չուկովսկու	Ա. Խնկոյան
8.	Մրտա աղջիկը	Ա. Բարտո	Հ. Հայրապետյան
9.	Գնդակը	Ա. Մարշակ	
10.	Ճուռիկը	Կ. Չուկովսկու	Հ. Հայրապետյան
11.	Կարգանք միասին չորս գույնի մասին	Սակոնսկայա	Հ. Հայրապետյան
12.	Ֆիլիպիկը	Լ. Տոլստոյ	
13.	Մի կատու յե կորել	Վյուզով	Դուբոսարյան
14.	Լվացարանը ջրցիբ	Կ. Չուկովսկի	Ա. Խնկոյան
15.	Հասմիկի նամակը	Հ. Հայրապետյան	
16.	Ինչի՞ համար ե պոչը	Վ. Բիանկի	Հ. Հայրապետյան
17.	Հրդեհ	Ս. Մարշակ	
18.	Շունն ու կատուն	Հ. Թումանյան	
19.	Թե իոչո՞ւ Վանյան դարձավ ողաչու	Դանցիզեր	Խնկո Ապեր
20.	Ծիանն ու ծիծեռնակը	Լ. Տոլստոյ	Հ. Հայրապետյան
21.	Իմ դասը մեկից մինչև տասը	Ա. Բարտո	Խնկո Ապեր
22.	Պույ-պույ մուկիկը	Դ. Դեմիրճյան	
23.	Նունիկի յերազը	Մեմիկ	
24.	Լալկան աղջիկը	Բարտո	Հ. Հայրապետյան
25.	Հիմար մկնիկը	Ս. Մարշակ	
26.	Յերեք արջի հեքիաթը	Լ. Տոլստոյ	Հ. Թումանյան
27.	Մըջնիկի արկածները	Վ. Բիանկի	
28.	Խաղողի այգում	Ստ. Չորյան	

№	ԳՐՔԻ ԱՆՈՒՆԸ	ՀԵՂԻՆԱԿ	Փոխադրող կամ քարգմանիչ
29.	Խաղալիքներ և զվարճալիքներ	Կլոկովա	Ավագյան
30.	Կլորիկ բոբոնիկը	Ժող. հեքիաթ	
31.	Նապաստակը	» »	
32.	Չալ հավիկը	» »	
33.	Ո՞վ ե	Վ. Վեդենսկի	Հայրապետյան
	Մեծերի խմբի համար		
1.	Բագաժ	Ս. Մարշակ	
2.	Մոծակը	Խնկո-Ապեր	
3.	Այ քեզ ցրված մարդ	Ս. Մարշակ	
4.	Փոսալ	»	
5.	Հեղափոխական Անիկը	Վերեյսկայա	
6.	Փոքրիկ սկյուռի արկածները	Սախարովա	Խնկո-Ապեր
7.	Չարի վերջը	Հ. Թումանյան	
8.	Կեղ	»	
9.	Ի՞նչ դառնալ	Վ. Մայակովսկի	
10.	Վոսկե ձկնիկ	Ա. Պուշկին	
11.	Չորս աղգերի մայրերը, Չորս աղգերի մանուկները	Ա. Բարտո	Խնկոյան Խնկոյան
12.	Բոլշեվիկ տղան	Գորսխով	
13.	Լենինի մանկութունը և զպրոցական տարիները	Ա. Ուլյանովա	Հ. Հարությունյան
14.	Ողաչու Հանրին	Ն. Չարյան	
15.	Տերնն ու ծառան	Հ. Թումանյան	
16.	Առնո	Սեաոն-Տոմսոն	
17.	Գայլը	» »	Հ. Հայրապետյան
18.	Հերոս Կարենը	Արաղի	
19.	Ողաչուններ	Վ. Բիանկի	
20.	Կարմիր կոլանը	Բոյմ	
21.	Գրիմ յեղբայրների հեքիաթները	Հ. Թումանյան	
22.	Հեռախոս	Կ. Չուկովսկի	
23.	Փղի մասին	Ժիդկով	

№	ԳՐԻ ԱՆՈՒՆԸ	ՀԵՂԻՆԱԿ	Փոխադրող կամ քարգմանիչ
24.	Ծաղկաձոր վոտանավորներ	Մ. Կորյուն	
25.	Անճոռնի բաղիկը	Անդերսեն	
26.	Ճանապարհորդ գորտը	Վ. Կարշին	Ստ. Զորյան
27.	Կուտիկն ու Գուշիկը	Դիմիտրով	Ամեռ
28.	Նամակ Վորոշիլովին	Ա. Կլիտկո	Հ. Հայրապետյան
29.	Պատմվածքներ կենդանի- ների մասին	Լ. Տոլստոյ	Հ. Մազմանյան
30.	Հեքիաթ յերեք խողովակնե- րի և չար գայլի մասին		
31.	Պլեխն ու Պլուխը	Վ. Բոշ	Ա. Դուրբանյան
32.	Առաջնորդի մոտ	Ա. Լանջյան	Վեսպեր
33.	Շչորս	Վ. Վիշնևսկի	Հ. Հայրապետյան
34.	Քաջ Նազար	Հ. Թումանյան	
35.	Չար բազեյի մահը	Գյուլնազարյան	
36.	Անտառի տնակը	Վ. Բիանկի	Հ. Հայրապետյան
37.	Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին	Վ. Սմիբնովա	Ա. Ճուղուբյան
38.	Նշանավոր բույսերի կեների կյանքը	Աննա Գրինբերգ	Մ. Դուրբարյան
39.	Կարմիր բանակ	Մամաջանյան	
40.	Յերկեր 1, 2, 3, 4, 5	Հ. Թումանյան	
41.	Պատմվածքներ	» »	
42.	Մոսի ապերը և նապաս- տակները	Ն. Ա. Նեկրասով	Հ. Հայրապետյան
43.	Յեղնիկի ձագուկի պատ- մությունը	Վաթա-Փշավելի	
44.	Փոքրիկ Մուքը. հեքիաթ Ինչն է լավ, Ինչը վատ	Հառեֆ	Գ. Ասատուր
45.	Սալթան Թագավորի հեք. Կողտա	Վ. Մայակովսկի	Հ. Հայրապետյան
46.	Կողտա	Ա. Պուշկին	
47.	Ինչ պատահեց Կրեմլում մի անգամ	Վ. Դելակտորսկայա	Հ. Հայրապետյան
48.	Յերկաթուղի	Ա. Խնկանոսյան	
49.	Տղան ճանճը	Կ. Չուկովսկի	
50.	Վանուշը	Ստ. Զորյան	
51.	Բոբկայի որը	Վ. Նամանովել	
52.	Ծաղիկն ու մեղուն	Մկրտիչ Կորյուն	
53.	Զանգրո, Մանգլո, Պանգլո «Հոկտեմբերիկ» ամսագիր Շիրմաներ	Մուշքիկ	Վեսպեր
54.	ա) Թռչնատուն		
55.	բ) Մանր ու խոշոր գազաններ		



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

52

Հրաման № 176, Հայկական ԽՍՀ Լուսավորության Ժողովրդական Կոմիտեի 15 նոյեմբերի 1938 թ.	3
Մանկավարտների կանոնադրություն	5
Չեռնարի մանկավարտների դաստիարակի համար (ծրագրա-մեթոդական ցուցումներ)	16
Ներածություն	17
Գլուխ I—Ֆիզիկական դաստիարակություն	38
Գլուխ II—Սաղ	58
Գլուխ III—Նկարչություն, ձեփ (կադավրում) և այլ նյութերով պարզմունքներ	76
Գլուխ IV—Յերաժշտական դաստիարակություն	86
Գլուխ V—Ծանոթություն բնությանը	99
Գլուխ VI—Յոսքի գարգացում	119
Գլուխ VII—Նախադպրոցական տարիքի յերեխաների մաթեմատիկական նախնական պատկերացումների ձգարգացումը	129
Հավելվածներ	
№ 1 Ֆիզիկալ դրամունքների համար անհրաժեշտ սարքավորումը	139
№ 2 «Յերաժշտական դաստիարակություն» բաժնի վերաբերյալ մոտավոր ուղեցուցիչ	140
№ 3 «Յերաժշտական դրամունքների համար անհրաժեշտ իրերի ցուցակ	146
№ 4 Ցուցակ մանկական գրականության	147



Պատ. խմբագիրներ՝ Ռ. Կիրակոսյան և Ա. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Կարամյան
Սրբազրիչ՝ Վ. Պողոսյան

Գլավկոսի լեպոր Դ 1044. Պատվեր № 238, տիրաժ 1500

Հայկական ԽՍՀ ԺԿԽ-ին կից «Խորհրդային Հայաստան»
հրատարակչության տպարան, Յերևան

50-839

ԳԻՆԸ 2 Բ.

**РУКОВОДСТВО ДЛЯ ВОСПИТАТЕЛЯ
ДЕТСКОГО САДА
УСТАВ ДЕТСКОГО САДА**

ЕРЕВАН

Г.РОСИЗДАТ

1940